Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հնո
2025

1999

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՏԱՍՆԱՄԵԱՅ

ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՇՈՒՈՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ,

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՏՓԽԻՍԱՑ

'ի 1851—ց 1861 ամս։

'Ի ՏՓԽԻՍ

692

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՏԱՄՆԱՄԵԱՅ

ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՇՈՒՈՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՏՓԽԻՍԱՑ

'ի 1851 — յ1861 ամս.

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵ-
ՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ
ՄԱՏԹԷՈՍԻ։

'Ի ՏՓԽԻՍ

'Ի Տպարանի Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հա-
յոց ընծայելոյ յԱզնուական Գէորգայ Արծ-
րունւոյ։

1861

Որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան. Յովհ. Գ. 21.

Այսուհետև զգոյշ լերուք յանօգուտ քրթմնջմանէ. և ՚ի բամբասանաց խնայեցէք զլեզու. զի շշունջ գաղտնի՝ դատարկ ոչ անցցէ և բերան ստախօս սպանանէ զանձն. Իմաստ. Ա. 11.

Գ 2025-60

ՀՓ 2029

ԼԵՕԻ
ԳՐԱԴ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 10-го Октября. 1861 года.

*Ценсоръ И. Кайтмазовъ.*

ա·

# ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ ԱՌ ԱՌԱՋԻԿԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅՍ ։

Նախ քան սկիզբն առնել բանից անհրաժեշտ հարկ համարիմք մեզ խոստովանիլ անձամբ, թէ պաշտօն Հոգաբարձութեան Ուսումնարանիս Ներսիսեան յանձն եղեալ մեզ յարժանայիշատակ Հիմնադրէն նորա՝ էր արդարև մեծ, ծանր, վսեմ, դժուարին և ամենազբաղ, և 'ի վեր քան զկարողութիւն մեր և զխելամտութիւն, իբրու այր՝ որ յըմբշամարտ ասպարէս խիզախիցէ բոլորովին անվարժ ուժով և անփորձ բազկիւ. այլ անսահման ամենաբաւական շնորհն Աստուծոյ՝ որ ծայրագոյն բարութեամբ և իմաստութեամբ իւրով 'ի ձեռն տկարաց և նուաստագունից զանհամար զարմանալիս ներգործեաց և ներգործէ յաւէտ, նա միայն ձեռնկալու եղև մեզ. նա միայն արիացոյց զմեզ յաղթել ամենայն ընդ առաջ եղեալ խոչից խափանարկուաց. նա ետ մեզ հոգի համբերութեան և երկայնմտութեան չպարտասիլ և չկասիլ բնաւ 'ի ճանապարհի բարեգործութեանս յօգուտ լուսաւորութեան որդւոց ազգի մերոյ ։

'Ի միջոցի տասնամեայ կառավարութեան մերոյ պատահեցան թէպէտ անցք ինչ ինչ յՈւսումնարանի 'ի սադրելոյ ոմանց որոմնացան արանց, բայց Հոգաբարձութիւն մեր գոլով յամենայնի աչալուրջ և շրջանկատ՝ փութով առ ետեղ շիջոյց զչև բորբոքեալ կայծակունսն, և զպատճառողսն այնոցիկ հեռացոյց 'ի միջոյ ։ Հրատարակող «Կռունկ» ամսագրին քաջ գիտէ թէ ո՛յք էին, որք որոմնացան հանդիսացան 'ի սմին Ուսումնարանի 'ի վնաս ազգի և եկեղեցւոյ, և թէ ո՛րքան աչալրջութեամբ հեռացան նոքա հսկողութեամբ մերով, լաւ իսպառ և ընդ վարագուրաւ ծածկէ. ուստի և ոչ բարեմտութեամբ, ստուգութեամբ և արդարութեամբ ստորագրէ վերապատուելին այն, և ո՛չ իրաւամբ խօսի, զորս խօսի յամսաթերթան Մարտի, թիւ Գ. յէջ 232—ց240. և 'ի Յունիսի թիւ Զ. յէջ 464, 465. Քանզի ոչ միշտ ծագէ արև առանց ընդմիգամած ամպովք վարագուրելոյ, և ո՛չ տարի անցանէ, ուր գետաջուրք 'ի գարնան մնասցեն անպղտոր յանձրևաց.

'ի հեղեղաց և 'ի ձեանց հալեցմանց 'ի կատարաց լերանց՝ Ռ. Ալլազգական առակն իսկ ասէ, «Մեշա չախկալաղ օլմազ»։ (Չիք անտառ առանց ճագարի)։ Ցանկալով մեր բարի առնել ամենայն հայի և ցաւակցաբար ընդունելով Ուսումնարանն ընդ դեռահասակ մանկանց և զանուսումն մնացեալ հասակաւոր աղքատ աշակերտս առ 'ի կրթել զնոսա և բարերարել, բայց հոգի չարութեան յաւէտ յայնպիսիս բունելով՝ առիթ գտան երբեմնական տարաձայնութեանց, է զի 'ի տգիտութենէ իւրեանց վրիպեալք, և է զի 'ի փառասիրութենէ և յանհանգիստ բարուց ոմանց անբարի անձանց, որք զինքեանս առ գիտունս ունին և 'ի բարեաց գործոց են հրաժարեալք։ Եւ աստ համառօտել այսպիսեաց, խրատել և զանհնազանդս և զանյոյս արտաքսեալն աքսորել 'ի դաւթէ Պարոցին առ 'ի զգաստութիւն և յօրինակ այլոց՝ նիւթ խոստակցութեան և զկարաւորութեանց եղեն 'ի բերանս ոմանց, մանաւանդ անհեռատես երեկեան Կռնկան, որպէս թէ յանհոգութեան կամ յանկարգութեան է Ուսումնարանն, անհաստատ, անորդին ու ողորմելի վիճակում. եր. 234։ Որ Համալսարանք, և ո՞ր Ուսումնարանք Եւրոպիոյ են, յորս այսպիսի անցք ո՛չ պատահին, փոփոխութիւնք ոչ լինին, ուսումն ո՛չ դադարի առ ժամանակ մի, և յաքսորս, 'ի կալանս և 'ի մահ իսկ ո՛չ մատնին սկզբնառիթքն խռովութեան։ Ո՞ր տուն է, որ միշտ զխաղաղութիւն համբուրէ. ո՞ր եղբայր է, որ միշտ սիրով կայ ընդ միւսոյն. այր ընդ կնոջ, կին ընդ առն, հայր ընդ որդւոց և որդիք ընդ հօր միշտ 'ի կռիւ և 'ի պայքար մտանեն, զվէճ և զկռիւ գրգռեն, և յոլով անգամ մեծամեծ վնասուք և արիւնհեղութեամբ առնուն զվախճան. և թէ գոյ երկիր և ազգ, ուր խաղաղութիւն և սէր անխզելի թագաւորէ, թո՛ղ ասասցէ մեզ նորիմաստ Կռունկն։ Թողեալ զամենայն և որ ինչ յՈւսումնարանս քաղաքի մերում գործին երբեմնապէս, թո՛ղ կարդասցէ զպատմութիւն Մխիթարեան Միաբանութեան Հայոց և գիտասցէ ամենայն տարաձայնութեանց նոցա և պառակտմանց, մինչև նոր միաբանութիւն հաստատել 'ի Վիեննա։ Թո՛ղ կարդասցէ և առ մեօք պատահեալ զանցս և զպատմութիւն դարձի չորից

վարդապետաց Մխիթարեանց առ մեզ։ Եւ ե՞ր զարմանալ նմա, դատել եւ դատապարտել այսքան զկառավարութիւն մեր, զի զըմբոստ եւ զլկնեալ յանցաւոր աշակերտսն բանտիւ եւ գանիւ խրատեալ՝ մերժեալ եմք 'ի միջոյ վասն անզեղջ եւ աննուաճ մնալոյն։ Երկու եւ երեք աշակերտք կիսաւարտք զուսումն Թողեալք վասն անբարոյականութեան իւրեանց՝ հանել յՈւսումնարանէ մե՞ղս եւ ստգտա՞նս համարիցի դպրոցական կառավարութեան. այդու ոչ ուսումն է խափանեալ, եւ ոչ ուսումնարանական կարգք են խանգարեալք։ Պատուէր 'ի սուրբ Գրոց ունիմք Բառնալ զչարն 'ի միջոյ, զի Աստուած խաղաղութեան եղիցի ընդ մեզ. Ա. Կորն. Ե. 13. Հռովմ. ԺԵ. 33. Եւ թէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա եւ ընկեա՛ 'ի քէն . . . եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ընկեա՛ 'ի քէն, զի լա՛ւ է քեզ ասէ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի՛ ամենայն մարմին քո անկանիցի 'ի գեհեն. Մատ. Ե. 29, 30։ Դասատուութիւն ուսանողաց երբէք չ'է ընդհատեալ. եւ թէ եղեալ է փոփոխութիւն 'ի Տեսուչս եւ յՈւսուցիչս, յայդմ եւս ոչ ոք ունի իրաւունս խօսելոյ, զի առանց հարկադրող եւ վերահաս պատճառի չ'է եղեալ այնպիսի փոփոխութիւն. եւ 'ի նոյն կարգեալ են այլք լաւագոյնք փոխանակ նոցա ընտրանօք. ուստի համարատու չունիմք լինիլ միոյ Կռունկան. Յեկեղեցական գումարաց յաւուրս մեր վասն Ուսումնարանին չ'են երբէք լեալ «Ծախսարարութիւնք», ուստի 'ի զուր խօսի Կռունկն, թէ «հաշուի նորա անտեղեակ է ժողովուրդն» յէջ 237. տող. 22, 23, յամսաթերթն Մարտի. Մեք զհաշուեցուցակ մեր ըստ բառական հրամանի հանգուցեալ Ներսիսի Հայրապետի յամի ամի 'ի ձեռն հոգեւոր Կոնսիստորիայի տեղւոյս առաջի արարեալ եմք Սինոդին սրբոյ Էջմիածնի, եւ որ ցանկայ լինել տեղեակ եւ հաւատալ մեզ, թող դիմեսցէ անձամբ 'ի Սինոդն։ Բայց մեք զարմանամք թէ այսպիսի «ծախսարարութեանց հաշուոց տեղեակ լինիլ» հրապարակողն եւ սուտ սրտացաւ անձն ո՞ւր էր թագուցեալ զինքն ըստ Սաւուղայ 'ի միջի կարասեաց, եւ ե՞ր ոչ ել յասպարէզ, եւ զայսպիսի ազգային նուրբ եւ ազնիւ դիտողութիւնս իւր ոչ յայտնեաց ժողովոյն, զոր

քանիցս անգամ արար Մեծակաւոր Տ.րք Նախկայրոն 'ի ներկայութեան պ. ատենադպրի Ալինոզին 'ի սկիզբն անցեալ 1860 ամի. վասն էր այժմ միայն ժպրհի ելանել 'ի բունոյ իւրմէ. և որո՞վ իշխանութեամբ և իրաւամբ. և ո՞վ ես նմա զիշխանութիւնդ զայդ. Մերժել զանարժանս, նշաւակել զկարգախս, պատժել զանուղիղ պարտաւորս, առնել ըստ ժամու և պիտոյից կարգս և կանոնս ըստ ուսումնական և տնտեսական մասին մի՞ւս գրեցէ Հոգաբարձուացս: Նմանայն գործավար լինելն ազատ է առնել որ ինչ օրէն է և վայելուչ. և ո՞վ իշխեցէ կապել զձեռս նորա: Մեք լիակատար իշխանութիւն ունելով 'ի հանգուցեալ Հայրապետէն Ներսէսէ և զինի 'ի Վեհափառ Յաջորդէ նորա 'ի ՄԱՏԹԷՈՍԷ առնել վասն Ուսումնարանի զամենայն հարկաւորս, օգտակարս և զվայելուչս. և ոչ երբէք պակաս դատք յայսոսիկ. և զի՞ կայ արտաքնոց անծանօթից այսմ ամենայնի՝ ձեռնամուխ լինիլ յայսպիսի իրողութիւնս և ինքնակոչ դատաւորի ըզպաշտօն կատարել: Եթէ այր ողջամիտ և արդարադատ է, պարտի ոչ միայն թերութեանց բծախնդիր լինիլ, այլև գործոց բարեաց և արդիւնաբերութեանց հռչակ և քարոզ. Թո՛ղ բացցէ նա զաչիւք շրջեցեալ զաշս իւր և տեսցէ թէ զի՞նչ մեք յընթացս այս տասն ամաց ըստ կարողութեան մերում արարաք՝ յազգակցաց մերոց չունելով ոք մեզ օգնական. զտիւ և զգիշեր փոյթ մեծ յանձին կալաք որ աւուր բարւոքել զՈւսումնարանն աճեցուցանելով զեկամուտս նորա, գտանելով զնորանոր աղբիւրս արդեանց: Քիրտն մեր ո՛չ ցամաքեցաւ և եռանդն սրտից մերոց ոչ շիջաւ. զմի մանէթ գումարն Ուսումնարանի հազարաւորս հասուցաք, և զմի կալուածն տասնաւորս և քսանաւորս, թո՛ղ զբեղեկս և զմանր շինութիւնս, թո՛ղ զսկզբնաւորեալ և զուղղէն նախագծեալ յապայ առնելիսն: Կարծեմք կարեմք ասել (թէև 'ի ձեռին չունէաք զհիմնաւոր սահմանադրութիւն Ուսումնարանի), թէ որպէս 'ի տնտեսական մասին, նոյնպէս և յուսումնականին ոչ փոքր յառաջադիմութիւնք եղեն 'ի ժամանակի մերում. Ապերախտութիւն կամակոր է և կոյր և ոչ կարէ խոստովանել զճշմարիտն և տեսանել զպտուղս հայրենասիրութեան մերոյ յայնոսիկ որդեգիրս և

յերԹևէկ աշակերտս, որք յաջողուԹեամբ աւարտեալ զու-
սումն՝ մտեալ են յայս և յայն պաշտամունս որպէս յա-
կանէ յանուանէ տեսցի յընԹացս գործոյս։

Ժողովուրդ մեր պատրաստ է լսել զվարժապետս, և
ախորժէ դատել զոք յանդէտս ըստ լրոյ. բայց ոչ պատ-
րաստ քննել և որոշել զսուտն 'ի ճշմարտէն: Կրօնքն
ձայն եա և եգիտ իւր արձագանդ զՆերսէս Մ.Թաղէ-
կեան 'ի Պալաքաղ և սատ յոմանս ցնդաբանել երազա-
խօս բառիւք, բանս անոճս և զրպարտականս բարդել և
բրդել 'ի գլուխ Հասարակութեան, և որ արդարախոր-
հուրդ այր հաւատընծայ եղևցի այնմ, որ զամենայն ինչ
խօսի և առնէ ըստ լրոց. Ժողովուրդն Հրէից յուրա-
Թու առ Պիղատոսի, 'ի խաչ հան, 'ի խաչ հան
(զՔրիստոս) զի մահապարտ է դա, զի հայհոյիչ օրինաց, ա-
ղաղակէր, այն՝ որ չորս աւուրբք յառաջ յոգնամեան կի-
բակէին 'ի գալն Քրիստոսի յԵրուսաղէմ, ովսաննա գո-
չէր, օրհնեալ եկեալ յանուն Տեառն Աստուածոյ Իսրայէլի մե-
րաձայնէր. զհանդերձս 'ի ճանապարհին տարածանէր, ոստս
արմաւենեաց և տերեւեալ ձիթենեօք պատուէր. և էր վասն, զի
ոչ գիտէր զօրէնս և նզովեալ էր, ասէ Գիրն. Այսպէս
միշտ վարի աշխարհ, երեկ և այսօր, նոյն և յաւիտեան.
զՅուլիոս կեսար արախողխող սպանանէ. և զԿոլոմբոս աշ-
խարհագիւտն շղԹայիւք 'ի գերեզման իջուցանէ. Ոչ ժամ
և ոչ տեղի պարզել զասացեալս բազում օրինակօք յայ-
լոց և 'ի մերոց առաքինեաց: Այլ և մեզ չէ պարտ զա-
ւել, Թէ սինլքորք ոմանք արտաքուստ, գուցէ և 'ի ներ-
քուստ ընդ ձեռամբ մերով եղեալք քարինս անարգանաց
արձակիցեն 'ի վերայ, և զդասնամեայ անարատ ծառա-
յուԹիւն մեր հանդերձ մեծամեծ շահիւք և արդեամբք
առ ոտն հարկանիցեն: Մեք վասն ազգի ծառայեցաք և
յԱստուծոյ ակն ունիմք առնուլ զփոխարէնն:

Արդ ասասցուք զառաջիկայ գործոյս, Թէ ըստ հրամա-
նի Վեհափառ Հայրապետին մերոյ ՄԱՏԹԷՈՍԻ դը-
րոշմեմք 'ի գիր հաւաստուԹեամբ զՏեսուԹիւն այսր
Ուսումնարանի և ընդ նմին զամենայն գործս և զհաշիւս
մեր և զքաղուածս ոմանց կարևոր վասն այսր առարկայի
պատճենից կոնդակաց տուեալց մեզ յԷջմիածնայիշատակ

Հայրապետէն մերմէ 'ի Ներսէսէ և յարժանաժառանգ նորա Յաջորդէն և ինչ ինչ հրամանագիրս Սինոդին Էջմիածնի. զամենայնն Թղթահամարօք և այբբունական կարգաւ նախանշանակելով, զի բանասէրն դիւրաւ կարասցէ գըտանել 'ի վերջոյ և ընթեռնուլ. Եւ այս առ 'ի բժըշկել զհիւանդացեալ միտս զանխուս եղբարց տեսանել առաջի զամենայն, զոր 'ի հեռաստանէ միայն լսէին ականջօք, և խակապէս հասու իմիք ոչ էին, կարծելով և երկբայելով թէ կողոպտեալ իցեմք զՈւսումնարանն և ոչ գործ ինչ օգտակար յառաջ բերեալ. Ընդհակառակն ասեմք, թէ մեք զամենայն արարաք մաքուր և անստգիւտ խղճի մտօք՝ զերկիւղն Աստուծոյ և զամօթ մարդկան իբրև հայելի առաջի աչաց ունելով՝ ըստ քրիստոսական պատգամաց զգոյշ մնալ 'ի գայթակղեցուցանելոյ զմի 'ի փոքրկանցս և չժառանգել զվայն. Ճշգրտիւ և փորձիւ գիտեմք, թէ ամենայն գործք և պաշտօնակատարութիւնք կենցաղոյս չեն մշտնջենաւոր սեփականութիւն մարդոյ կամ յորդւոց յորդիս փոխանցականք. իբրև գերդաստան՝ որ ակն դէտ եղեալ սպասեսցէ գալստեան իւրում յոտար, Տէր եկեալ տանուտեառն, որ աւուր մնայաք մեք արձակելոյ 'ի գործոյս և յանձն այլում առնել զՀոգաբարձութիւնս մեր, վասն որոյ և ոչ միանգամ պաղատեցաք առ հանգուցեալ Հայրապետն Ներսէս և առ նոր Մեծափառ Տէրս մեր. և միշտ լուաք համբերել. Հուսկ յետոյ տեսաք զնորակարգ կարգադրութիւն Ուսումնարանին և զընտրութիւն նորոց Հոգաբարձուաց, յուսամք տեսանել և զարձակումն մեր յայսմ տաժանական պաշտօնէս. յորժամ վայելելով 'ի հանգստեան մտաց և լսելեաց՝ վերամբարձ ձեռօք միշտ զԱստուած ամենաբարին աղաչեսցուք օրհնել և զօրացուցանել զսրբազնակատար Հայրապետն մեր զՄատթէոս և և զսրբազնագումար Սիւնհոդոսն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զի անքուն և աչալուրջ հսկողութեամբ դարման տանելով այսմ Ներսիսակերտ ազգային հոգևոր Դպրաստանի Հայոց Տփխիսայ 'ի ձեռն նորոգ ձեռնարկութեանց և նորոգ բարեյոյս մտադրութեանց՝ այնպէս մշտադալար և յարագուարճ ծաղկամբք զանազան գիտութեանց պճնազարդեալ պայծառացուսցեն զսա, պահելով 'ի հանապա-

ծորդեան անդրդուելի ապահովութեան և բարեկարգութեան, որ զկնի 38 ամեան գոյացութեան իւրոյ մեծապարծանօք ընկալցի զնոր դարագլուխ, ապա և ըստ օրինակի սրբոյն Բարսղի զգլուխ Թշնամեաց հալածչաց իւրոց չար Յուլիանոսաց ջախջախելով՝ 'ի յոյս մեծ զինեսցէ զհարազատ ազգասէրս, թէ նոր կառավարուի նորա՝ որ քարոզեալ է և քարոզեսցէ զճշմարտութիւն, արդարութեամբ 'ի գիր արձանացուսցէ զնոր դարապատուամ սորին. որ ըստ նորութեանն դեռ ևս անջինջ գտանի 'ի միտս ականատես, իրաւախոհ վկայից. Որով և հոգի Հիմնադրի սորուն Ներսիսի խնդասցի յերկինս և ոսկերքն 'ի գերեզմանի. Որով ոչ մօտաւոր համազգիք մեր բնակեալք 'ի Ռուսիա, և մեք տասնամեայ աշխատաւորքս և զարդաման նորա յամենայն սրտէ ցանկացողքս, հետամուտք և անձնադիր ջգնողքս վասն ամենայն բարելաւութեանց նորա ուրախասցուք հոգեպէս և զուարճասցուք ցորչափ կամք մեք և սերունդք մեր, այլ և ուր միանգամ են Հայք Լուսաւորչածինք ընդ այլոց ազգութեամբք հովանաւորեալք զպայծառի բարեմասնեայ բաղդաւորութիւն Տփխիսեցի եղբարց իւրեանց լսելով և համբաւ ճշմարիտ լուսաւորութեան սերնդոց մերոց առ նոսա հռչակելով՝ ախտասցին և նոքա, և օրինակ բարի առցեն, որքան և ձեռնհաս գտցին լուսաւորել զզաւակունս իւրեանց գիտութեամբ և բարոյականութեամբ. Ընդ այն ոչ փոքր է յոյս մեր և սարբազան Սէճակաւորն մեր Ներհին Սարգիս, զոր 'ի մասին ազգասիրութեան և մեծագործութեանց մարթ է աշակերտ և հետևող համարել Հայրապետին Ներսիսի. ուստի և աղաչեմք զԱստուած պարգևել Ն. Բ. Ս. երկար կեանս վասն ազգապարծանք սխրագործութեանց գործակցութեամբ հայրենասէր գիտնականաց. զի կարասցուք վերակրկնել զբան սուրբ Գրոց թէ «Պօղոս տնկեաց, Ապօղոս ջուր ետ. այլ Աստուած աճեցոյց». Ա. Կորնթ. Գ. 6.

Հոգաբարձու Ներսիսեան Ուսումնարանի

'ի 20 Օգոստոսի
1861 ամ. 'ի Տփխիս.

Տիտուլեարնի Սովետնիկ Աղեքսանդր Թումանեանց.

Պօտպօրուչիկ Գէորգ Արղութեանց.

Համառօտ տեսութիւն կառավարութեան Ներսիսեան Ուսումնարանի Հայոց Տփխիսոյ և պատկեր եկամտից նորա և ամենայն հաշուոց և գործոց ՚ի ժամանակս տասնամեայ Հոգաբարձութեան յ9 էն մարտի 1854 ամի մինչև յ1 մայիսի այսր 1861 ամի։

՚Ի 1814 ամի մեծայիշատակ Հայրապետն Ներսէս դեռ ՚ի լինելն իւր առաջին անդամ՝ ալը-ռագան Սինհոդական Վրաստանեան մայր Աթոռոյն սրբոյ Էջմիածնի նշանակեցաւ վիճակաւոր Արք Եպիսկոպոս և Առաջնորդ Հայոց Թեմին Վրաստանի. և առաջի աչաց ունելով ՚ի սահմանս Ռուսաստանի զյառաջադիմութիւն և զծաղկելն վիճակ երկուց ազգային վարժարանաց՝ Աղաբաբեանցն յԱստրախան և Տեարց Լազարեանցն ՚ի Մոսկով, ջանկացաւ վասն լուսաւորութեան առաւել հոգեւորականաց բանակ և զնոյնպիսի երրորդ ՚ի վիճակի իւրում ՚ի Տփխիս քաղաքի իբր ՚ի կենդրոնի բազմութեան հայազգի ժողովրդոց, և իմաստուն տնօրէնութեամբ յաղթեալ ամենայն արգելառիթ հանգամանաց ՚ի 21 նոյեմբերի 1821 ամի սկիզբն արար հիմնարկելոյ մեծի Հայկական Ուսումնարանի.

ծախելով 'ի վերայ այնորիկ զմեծամեծ գումարս դրամոց յարգեանց վիճակին Աշտարակի և Մ. Աթոռոյն սրբոյ Էջմիածնի և եկեղեցեաց Հայոց Տփխիսայ և մասնաւոր ընծ՞ նուիրատուութեանց ժողովրդականաց Հայոց Տփխիսայ և այլոց տեղեաց: Տե՛ս 1. շնորհակալէ բարերարաց Ուսումնարանի յատուկ շնորհեալ Հոգաբարձութեան ընդ թուով Ա. և 2. շնորհակալագիր Արքայական Սինօդին սրբոյ Էջմիածնի և Կոնսիստորեայն տեղւոյս 'ի 17 էն ապրիլի 1842 ամ. ընդ համարաւ 763 ընդ թուով Բ.

Աւարտեալ զշինութիւնն մեծ լուսահոգի որբազան Հիմնադիրն 'ի 1824 ամի և ժողովեալ զբոլոր մանկունս Հայոց յաւէտ զորբս և զչքաւորս 'ի վիճակէ Աշտարակի և յայլ մօտաւոր և հեռաւոր տեղեաց՝ հրամայեաց կրթել զնոսա ձրիաբար 'ի լեզուս Հայոց, Ռուսաց, Գաղղիացւոց և Պարսից. և յարհեստս գլխաւորաբար հոգեւորս և ըստ մասին աշխարհականս. որ վասն ոչ խնայեալ 'ի մեծամեծ ծախս և յամենայն դժուարատար ծանրութիւնս՝ ուր միանգամ լուաւ, թէ գո՛ն գիտնական անձինք, գրեաց և էած զնոսա վասն Նորակառոյց Ուսումնարանի իւրոյ, որպէս զՊօղոս վարդապետն Գարադաղցի 'ի Գարաբաղոյ. զՅարութ. քահանայն Ալամդա-

բեանց (զոր զկնի ձեռնադրեաց 'ի վարդապետ), 'ի Մոսկովայ. զՅակոբ Շահան Ջրպետեան 'ի Փարիզոյ. և զԻնգլխէհէմ անուն հայկազն քաջ պարսկերէնագէտ 'ի Դաւրիժոյ. Թող զայն՝ որք 'ի Տփխիս գտանէին։

'Ի 1826 ամի՝ երբ հաշտութիւնն Ռուսաց ընդ Պարսից քակեցաւ և բացաւ պատերազմ ընդ մէջ երկուց Թագաւորութեանց և բազմարդիւն մեծագործ Սրբազան Հիմնադիրն Ներսէս ըստ յատուկ հրաւիրանաց տէրութեանն Ռուսաց գնաց յԵրեւան ընդ զօրուն, յայնժամ զնորատունկ Ուսումնարան իւր յանձնեաց տեսչութեան յիշեալ Յարութիւն շնորհափայլ վարդապետին Ալամդարեանց. յորոյ աւուր բողբոջեալ ծաղկէր գեղապանծ Ուսումնարանն այն զխնամութեան, և բազում աշակերտաւք զարդանայր անխնայօրէն բաշխեալ ուսմամբ և շնորհիւ, և թիւ ուսանողացն հասանէր մինչև ց600։ Դադարեցաւ պատերազմն ընդ Պարսից և կից նմին բացաւ միւս նոր պատերազմ ընդ Օսմանեանց. և ամենարիաջան Հովուապետն Ներսէս ըստ գերադոյն Կայսերական հրամանի 'ի 1828 ամի կոչեցաւ 'ի Բեսարաբիա, ուր յետ ամի միոյ հաստատեցաւ Առաջնորդ այնր վիճակի

և նոր Նախիջևանի ՚ի տեղի նորա. հանդուցեալ արհւոյն Գրիգորի։

Ընդատանելի էր ուրախութիւն որբոցն Մարտակցին ՚ի յաղթել Ռուսաց զՊարսիկս, նա՛ մանաւանդ ՚ի լինելն ականատես և ականջալուր ՚ի բազում անգամ և զարուց հետէ անհնարեալ պատուութեան սրբոյ Գահին Էջմիածնի և Հարաւեան աշխարհին յանհնարին տառապանաց և յանխիղճ հարստահարութեանց անօրէնել կառավարութեան Պարսից, բայց և ընդ նմին ոչ մեծ ուրախութեամբ պաշարեցաւ մի հագի նորա մինչ ՚ի սպառ՝ ՚ի թշուառն դժնդաղահատակ հողեալ ղուտականս իւր դեռ. ժողովեալս ՚ի ծոց խորհրդոյ Պարսից անօրէնութեանց և անխնամ. զի և գլխաւոր կառավարիչ նորան Յարութիւն վարդապետ Հաղորդարենանց ոչ սակաւ մշտացեալ ՚ի բերմանց տառապանաց ժամանակին ՚ի յաջորդել այլ Աթոռակալ որ ՚ի Աէրս, ՚ի 1831 ամի ուղևորեցաւ առ Սրբազան Գիտապետն Բեսարաբիոյ, յորմէ յաւէտ որբոցեալ խրճայն մանկանցն և զանհոգաբարձութեան իւրեանց անձամբ անձին նկատելով բազումք ցրուեցան աստ և անդ մինչև դժուարալեան Յովհաննէս Վարդապետի, որ Ի կոչման իւրոյ և մեծապատ

Թախանձանօք այս ժողովրդոյն Տփխիսոյ վասն Թացու կարկառել նոցա ձեռն օգնականութ․ և յանձանձումն անայցելու մանկտւոյն կարգեաց զառանձին ժողով (կօմիտէտ) ընտրեալ յերեւելի ազգատէր և ջերմեռանդ իշխանաց Տփխիսեցւոց․ և այս ժողով հաստատեցաւ 'ի ծայրագոյն Կուսակալէն Կովկասեան։ Այս նորասահման ժողով զամս վեց կառավարեաց զՈւսումնարանն շատանալով սակաւաձեռն դրամական միջոցօք։ Յամին 1837 կաթուղիկոսն Յովհաննէս ըստ զօրութեան Բարձրագոյն Հրամանաւ հաստատեալ կարգադրութեան վասն կառավարութեան գործոց Հայոց Ռուսաստանի եկեղեցեաց 'ի 11 մարտի 1836 ամի, յորում էր և բացումն հոգևոր միջակային Դպրոցաց, խափանեաց զժողովն զայն բարեկարգութեան, և զՈւսումնարանն Ներսիսեան յանձնեաց 'ի ձեռս Հոգևոր Իշխանութեան Տփխիսոյ, որ առ առաջնորդութ՟ Կարապետ Արք Եպիսկոպոսին պահպանեցաւ զկարգ և կեց մինչ ցամն 1846։

Ընդ շատ անցին զգլխով Ուսումնարանին յընթացս եօթն և տասն ամաց անջատման Սրբազան Հիմնադրին նորա Ներսիսի, և գործք նորա չէին 'ի նախանձելի վիճակի, երբ անհա-

սանել կամօք վերին Նախախնամութեան միաձայն ընտրութեամբ և ցանկութեամբ համօրէն ազգի Հայոց և հաստատութեամբ Ինքնակալ Կայսերն ամենայն Ռուսաց յաջորդեալ նորա բարեբաղդաբար զԳահ Հայրապետութեան՝ տիրացաւ վերստին ազգաշէն ձեռակերտի իւրոյ, փարեցաւ զնովաւ իբրու զմիակ անզուգական յերկար ժամանակաց հետէ կարօտեալ անձկայրեաց սիրելեաւ. և անդուլ ջանիւք մեծ հոգ և փոյթ յանձն էառ ՚ի լուսաւորել զմանկունս ազգի և եկեղեցւոյ իւրոյ անմահ և անթառամ գիտութեամբ։ Ուստի և ՚ի 1848 ամի վերակարգեաց զժողովն ազգային (կօմիտետ), ընտրելով յարժանաւոր անձանց ազգասէր և ուսումնական անդամս։ Ժողովս այս գոլով բազմանդամ՝ և անմիաբան ՚ի խորհուրդս՝ ոչ տևեաց ընդ երկար, և ինքն յանձն էառ զկառավարութիւն Ուսումնարանին։ Բայց սակայն ՚ի 1851 ամին Նորին Վեհափառութիւնն կամելով վճռաբար աւարտել զգործ կառավարութեան Ուսումնարանին, առաւել ևս նկատելով զմերահաս զառամութիւն իւրոյ հասակի և զբաղեալ գոլով անձամբ անձին կատարելով զբազմադիմի եկեղեցական խորհու-

Թիւնս և զամենայն հովուապետական հոգս բարեկարգութեանց ժողովրդականաց և հոգևորականաց Հայոց, և վասն ոչ ունելոյ զօք 'ի պաշտաման Վիճակաւոր Առաջնորդի Հայոց Վրաստանի, որպէս զի համաձայն Բարձրագոյն Կարգադրութեանն տնօրինեսցէ նա ըստ պատշաճին զկարգ և զընթացս Ուսումնարանին, վասն որոյ բարեհաճեցաւ 'ի դիմաց իւրոյ իբրև օգնականըս ինքեան կարգել զՀոգաբարձուս 'ի բարւոք կառավարութիւն Ուսումնարանին, և միօրինակ ուրոյն ուրոյն կոնդակօք յ 9 էն մարտի նոյն 1851 ամի ընդ համարօք 68, 69 և 70 յանձնեաց ազգասիրական հոգատարութեան երից անձանց զորս սուրբ կամօք իւրովք ընտրեաց, այն է՝ զԱզնուական Պաւլիթ Թամամշեանցն, և յետ մահուան սորին 'ի 1853 ամի՝ 'ի մէնջ Աղէքսանդրս Թայիրեանց կոնդակօք 'ի 10 սեպտեմբերի ընդ 343 և 345 համարօք, զՊաւլիթս Խերոդինեանց և զԳէորգս Մանդինեանց, որոց և ետ զլիակատար իշխանութիւն 'ի կառավարել զՈւսումնարանն այսու հաւատարմական անկեղծաւոր բանիւք.
„Եւ տամ ձեզ զիմ զկատարեալ կարողութիւն „փոխանակ իմ լինել վերատեսուչ և հո„գաբարձու„ և այլն. (Տե՛ս կոնդակին՝ համար 68). Ն

շարադրեցին Կարապետեան Յովհաննէսեան Թղ. առաջնորդն 'ի Մինոյն Էջմիածնի և 'ի Կոնսիստորիայն Թեմին պատուիրելով նոյն ձեռամբ և զօրութեան ընծել մեզ 'ի կարեւոր դէպս. ընդ նմին հրամայելով զմեզ և զելից Ռուսաստանեայն յեա իւրաքանչիւր քառորդի տարւոյն ամի ամի ընդ ձեռն Կոնսիստորիայի առաջի առնել 'ի Մինոյն Էջմիածնի զհաշուեցուցակս, զոր և կատարեալ եմք ճշդիւ մինչև ցայսօր։

Ընկալեալ զՌուսաստանեան 'ի կառավարութի մեր և ընդ նմին զառձեռն զումար 55 մանեթ, 47 կոպէկ. և զշնորհեալն մեզ վերջերսս հայրապետական կոնդակօք արդիւնս ապարանի, ուխտադրեաց, մոմավաճառութեան և երկուց այգեաց՝ որ 'ի Սօղանլուխ և 'ի Թելէթ գիւղօրայս Թեմին Վրաստանի, յորոց մուտք յառաջին տարին միայն եղեն 5504 ման. 62½ կոպ. (Տե՛ս ընդհանուր հաշուեցուցակն աշխարհաց ընդ թուոյ Ա). և խոստովանեալ յառաջնորդական խրատուց պարունակելոց 'ի սրբազան Կոնդակին յայնոսիկ, առաւելապէս յառանձին Կոնդակէն (Տե՛ս համար 113), և յաւելով յօգնութիւն ամենաբաւականին Աստուծոյ և 'ի նոյն ինքն մեծ. Քահանայապետն Ներսէսի, որ որպէս մայր որդե-

գործով յամենայնի հովանաւոր լինէր մեզ, զե-
գեալն 'ի վերայ մեր զազգային ծառայութիւն
մինչ կատարել ըստ չափու կարողութեան և
ըստ ներելոյ դրամական միջոցաց. ուշիւ ուշով
հոգ կալով նախ՝ տաուել որդիներոյ մանկ-
զյառաջացեալ ազգին մերոյ, և 'ի ձեռս
ընկել զայլ նորանոր 'ի յառաջադիմական ապա-
հովութիւն նորա. զի մանկավարժական միջոցք
և ժամանակաւոր անհաստատ փոփոխական ե-
կամուտք (բաց յեկամտից մոմոյ, որ 'ի տէրու-
թենէն ես սպաշեալ է յառկալս 'ի պահպա-
նութիւն հոգեւոր Դպրոցաց), անմարթ էր հա-
ստանել ցանկացեալ նպատակի Մեծահաւա. Հիմ-
նադրին, նա մանաւանդ գլխաւոր դիտաւորու-
թեան նորա, այն է պատրաստել զգիտուն և
զարժանաւոր հոգեւորականս. որ ոչ այլազգ կա-
րէր 'ի գլուխ ելանել, բայց եթէ բանալ Պան-
սիօն 'ի նմին իսկ Ուսումնարանի ընդունելով
ձրիաբար զմանկունս 'ի հաշիւ ծախուց Ուսում-
նարանին, սնուցանելով, կրթելով և պահպա-
նելով զնոսա յամի (1) ձեռագրով պայմանաւոր-

(1) Յամս [illegible]. Արդեօքիր սահմանով մեր զ[illegible] [illegible]

եալ զայնպիսի ուղեգիրս կալ մնալ միշտ 'ի հոգեւորական կոչման. (Տե՛ս զօրինակ ճառագրութեան ընդ պատկեր Գ.)։

Երկրորդ՝ քաջայայտ է ամենեցուն, թէ հաւատք և ազգայնութիւն առաւել պինդ պահպանին ազգային լեզուաւ. բայց ազգ մեր բնակեալ 'ի Կովկաս 'ի տեղիս տեղիս ըստ անյաջող բերմանց ժամանակին մոռացեալ զբարբառ հայկական՝ վարին օտարականօքն, մինչև քարոզատուութիւնք անգամ յեկեղեցիս լինին լեզուօք այլոց, որպէս առ Չէրքէզահայս, Ուտիահայս և առ բուն բնակիչս իսկ Կախէթու, Քարթլու և Իմերէթի. և առ 'ի բառնալ զայսպիսի ցաւելի պակասութիւն ազգի՝ հարկաւոր եղև կրկնապատկել առ հանդուցեալ սրբազան Հիմնադրաւ եղեալ զ30 թիւ ձրիավարժ ուղեգրաց և առնել աւելի քան զկաթուսն, ըստ որոյ և հնարք և ջանք շատ և շատ 'ի գործ եդան աճեցուցանել զաղբիւրս արդեանց Ուսումնարանի։

Ըստ նշանակեալ երկուց հարկաւորութեանց բարենախանձք 'ի ժողովրդոց քաղաքիս Տփխիսայ յորդորանօք և թախանձանօք Հոգաբարձուացս յօժարական սկիզբն արարին օժանդա-

կել պայծառութեան և յառաջխաղացութեան Ուսումնարանին առատաձեռն նուիրանօք առձեռն դրամոց, չինուածոց, կրպակաց, հանդերձեղէնաց և այլ իրաց։ (Տե՛ս շարայարեալ Տարեգրութեանս Ուսումնարանին ընդ տառիւս Գ.)։

Ի թուոյ բարերարաց Ուսումնարանին յառաջին կարգի դասելի՛ է զՏփխիսայ քաղաքացի համդուցեալ Աւետիքն Մոլոխեան Փիրոյեանց․ քանզի բարեպաշտ և հայրենասէր այրս այս առ կենդանութեամբ իւրով հաստատուն կտակաւ ընծայեաց Ուսումնարանին զկրկնայարկ քարաշէն տուն մի հանդերձ կրպակօք և ներքնայարկօք, որ կառուցեալ է 'ի միում արդիւնաբեր հրապարակի քաղաքին Տփխիսայ՝ (որ նախ Տափխիթաղ կոչիւր)․ և ունի սրահ մեծ։ Տուն այս ընդ կրպակացն ըստ այժմեան արդեանց արժէ վաթսուն հազար մանէթ։ Կենդանագիր պատկեր անմոռանալի բարերարին Փիրոյեանց կախեալ կայ 'ի մեծի դահլիճի Ուսումնարանին։ Ահա քեզ քաղուած կտակին՝ որով բարերարն այն յանկացուցեալ է զմեծ կալուածն զայն յօգուտ լուսաւորութեան մանկանց Ներսիսեան Հոգեւոր Դպրոցին Տփխիսայ։

«Առ 'ի մշտնջենական տիրապետութիւն

„Հայոց Տփխիսոյ Լուսաւորչեան Հոգևոր Ու-
„սումնարանին նուիրեմ զայս կալուած ընդ վե-
„րին որ կառավարութեամբ Հայոց Լուսաւոր-
„չեան Հոգևոր Իշխանութեան այսու պայմա-
„նաւ զի 1. յամենայն ամի 444 մանէթ տայցէ
„միաբանից միայն 10 եկեղեցեաց Տփխիսոյ յի-
„շատակեալս 'ի կտակիս, 'ի նշանակեալ աւուրս
„մատուցանել պատարագ վասն հանգստեան
„հոգւոյ իմ, ամուսնոյս և ամենայն կենդանեաց և
„ննջեցելոց. բաց յայնմանէ յ7 աղքատի 'ի տան
„Եսեաց Աստուածամօրն ժողովել 'ի Վանքի
„միոյ եկեղեցին կատարել զկարգ հոգեհան-
„գստեան (1) և թէ որք 'ի միաբանից ոչ կա-
„տարեսցէ զայս կտակ իմ, հասանելին նոցա մասն
„յարդեանցս տացի յօգուտ Ուսումնարանին :
„2. 'ի յիշատակ հոգւոյ իմոյ սնուցանել ձրիա-
„բար 'ի Պանսիոնի Ուսումնարանին 'ի հաշուի
„որդեգրաց զերկու որբ հայազգի մանկունս: 3.
„քսան հազար մանէթ մայր գումարն՝ զոր եդեալ
„եմ 'ի Պրիկազէ հասարակաց խնամատարութեան 'ի
„Տփխիս առ 'ի շահիլ անդ տոկոսաւք յօգուտ

(1) Որոշեցեալ [illegible] քահանայքն և [illegible] 'ի [illegible] 'Նշան եկեղեցւոյ, [illegible] և այս [illegible] յայսմ եկեղեցւոյն :

»եղբօրորդւոյ իմոյ, ունել զաւանդն յօգուտ նոյն »Հոգևոր Ուսումնարանին, եթէ չեղիցի արու »ժառանգ յիշեալ եղբօրորդւոյ իմոյ։ Ընդ սմին »կամիմ, զի թէ (Տէր մի արասցէ) խափա»նեսցի այն Հոգևոր Ուսումնարան, յայնժամ »ուր և իցէ 'ի սահմանս Ռուսաստանի կամ »այլ տէրութեանց Հայոց Լուսաւորչական Հո»գևոր Ուսումնարան ըստ տնօրէնութեան Հո»գևոր Իշխանութեան դարձուսցի յօգուտ այն»պիսի Ուսումնարանաց։ Եւ 4, Հոգևոր Իշխա»նութիւնն Հայոց պարտի նշանակել զհոգա»բարձու 'ի վերահասութիւն մտից և ելից այս »նուիրաբերութեան իմոյ և նկատել վասն կա»տարման մասանց կտակի իմոյ։

Ու 'ի անմոռաց 'ի մտի ունել զկշռատակ և զանուն բարերարաց Ուսումնարանին, տպա-ւորել 'ի սիրտ աշակերտելոց զկարևորու-թիւն երախտագիտութեան առ այսպիսի ան-մահական բարերարութիւնս և արծարծել ևս յայլս զնոր եռանդն յօժանդակութիւն ազգա-յին, անհրաժեշտ պարտաւորութիւն մեզ հա-մարեցուք ըստ հաճութեան 'ի Տէր վերափոխ-եալ Սրբազան Հիմնադրին (Տե՛ս [illegible] 113)։ Ը ծխից մերոյս սուրբ եկեղեցւոյ

’ի հինգ Նաւակատիս տարւոյն տալ մատուցանել զպատարագ և զկարգ հոգեհանգստեան ’ի Սիոն-ին մայր եկեղեցւոջ Տփխիսայ. ուր ժողովքն հոգեւորականք և աշակերտք ’ի յիշատակ կենդանի և ննջեցեալ բարերարաց Ուսումնարանին։ Իսկ ’ի Նաւակատիս Զատկին յետ պատարագին կարդալ յամ՛ ամի յաւուր հանդիսաւոր պաշտօնակատարութեան զճառ, ուր յիշատակին օրհնութ. և խնդրուածովք նախ նոյն ինքն երանելի Ս.Հայրապետն Հիմնադիրն Ուսումնարանի լուսահոգի Հայրապետն Ներսէս, և ապա այլ բարերարք հանդերձ մի առ մի նուիրանօք իւրեանց։ Զայս ուրախութիւն կատարեալ եմք մեք Հոգաբարձուքս անխափան ’ի սկզբանէ կառավարութեան մերոյ. զնոյն և սուրբ աւանդ թողումք մերոց յաջորդաց. աներկբայ լինելով թէ յարատեւել ունի այս սովորութիւն մինչ ցվերջ։

Յամենայն ամի յարդեանց Ուսումնարանին եղեն մեծագումար ծախք վասն ռոճկաց վարժապետաց, վասն ննդեան, ապրուստի, ներքին և արտաքին զգեստուց վաթսուն որբեդրաց, և ընդհանրապէս վասն պահպանութեան Ուսումնարանի, ուր կրթին ձրի և երթեւեկ

աշակերտք թուով էին 250 ։ Գումար այսոցիկ անհրաժեշտ մշտապահանջ ծախուց ըստ այժմեան վիճակի Ուսումնարանին չէ պակաս քան զտասն և մին հազար ռուբլի արծաթ 'ի տարին ։

Մեք հոգաբարձուքս յառաջին ամի կառավարութեան մերոյ ստացեալ 'ի սրբազան հիմնադրէն 'ի տնօրէնութիւն զվերոյիշեալ 55 ման. 47 կոպ. և եթ մայր գումարն Ուսումնարանի և զյատկացեալ նմին աղբիւրս արդեանց՝ բացաք վասն գործոց մերոց ատեան, և սահմանեցաք յիւրաքանչիւր ամի ունել զերիս ժապաւինեալ մատեանս՝ զմին վասն ընդհանուր մտից և ծախուց ընդ տառիւ Ա. զերկրորդն վասն ուխտատեղեաց ընդ տառիւ Բ. և զերրորդն վասն նամակաճառութեանց ընդ տառիւ Գ. և կարգադրեցաք, զի իւրաքանչիւր ուխտատեղի և նամակաճառութիւն ունիցին զմի մի հաւատարիմ գործակատարս 'ի հոգեւորականաց ըստ նշանակելոյ մեծաւորաց նոցա առ 'ի ժողովել զարդիւնս և մուծանել զայնս մի ըստ միոջէ յամենայն ամի 'ի տուեալ նոցա 'ի հոգաբարձութենէս ժապաւինեալ մատեանս. որք յանձանել ամեն հաստուցեալ եղեն յատեան մեր 'ի վերաքննու-

Թիւն։ Իսկ յաղագս սեփական ծախուց Ուսում-
նարանին՝ այսինքն սակս ռոճկաց վարժապետաց,
վերակացուաց և ամենայն պաշտօնէատարաց նաև
վասն պահպանելոյ զորդեգիրս և վասն սննդեան
նոցա նշանակեցաք առանձին դանձապահ և տըն-
տես. և վասն շինութեան ուխտատեղի եկեղե-
ցեաց և ընակարանաց ուխտաւորաց, կրպակաց
և վասն այլ վերանորոգութեանց և պահպա-
նութեանց կալուածոց Ուսումնարանի, վերա-
կացուաց նոցին յանձնեցաք նոյնպէս ժապաւին-
եալ մատեանս, յորս նշանակին օրական ծախք
ըստ հասարակեալ կարգին։ Նաև վասն Թղթակ-
ցութեանց և հաշուապահութեանց ամենայն
արդեանց և ծախուց կարգեցան գործավար և
հաշուապահ։ ՚Ի յիշեալ մատենից անտի քաղ-
եալ են ընդ այսմ կցեալ տասնամեայ հաշիւքն։
Տե՛ս զհաշուացուցակն ընդ տառիւ Բ և Ե.

Նմա՛ն էր արդարև պահպանել զայս օրինակ
կարգադրութիւն և հաշուապահութիւն, որք
ըստ իրաւանց տուելոց մեզ Թէպէտ չէին յառա-
կացեալ մեզ իբր պարտաւորութիւնք, բայց առ
՚ի ունելոյ զառաջս դայթակղութեանց և զըր-
պարտութեանց՝ զօտեաւ համբերութեան պըն-
դեցաք զմէջս մեր և հոգալով ամենայն հոգւով

և ամենայն զօրութեամբ չափ զարդիւնաւորութենէ Ուսումնարանին օժանդակութեամբ Վերին Նախախնամութեան և հոգևոր Իշխանութեան և ջերմեռանդութեամբ առատաձեռն բարեպաշտօն ժողովրդեան Հայոց՝ ցայն աստիճան կարող եղաք աճեցուցանել զվերոգրեալ 55 ման. 47 կոպ. մայր գումարն և զյաւելացեալ աղբիւրս եկամտից Ուսումնարանին յընթացս տասն ամաց, մինչև տարեկան եկամուտք նորա միայն հասանեն առ այժմ իբր ցքսան հազար մանէթ արծաթ. իսկ արժողութիւնք ՚ի մէնջ կառուցեալ ուխտատեղի եկեղեցեաց, կրպակաց և այլոց շինուածոց և բնակարանաց, ևս և նորոգ ՚ի ձեռս բերեալ կալուածոց և այլ նիւթեղինաց նուիրանօք ազգասէր և բարեպաշտ անձանց յօգուտ Ուսումնարանին ՚ի մշտաբար ապահովել զպահպանութիւն նորա, զանցանեն ՚ի վերքան զերկու հարիւր հազար մանէթ արծ.

Ըստ ուսումնական մասին մտադիր լինելով դրամական կարողութեան մերոյ ջանացաք հետզհետէ ընդ առաջին երկուց դասատանցն բանալ այլ ևս երիս և առնել հինգ, և ըստ այնց առաւելուլ և զուսանելի առարկայն համաձայն կանոնաց Արքայական Ճեմարանին որպէս տեսանի ՚ի

կանգակն՝ համար 108։ Իսկ թէ այժմ զի՞նչ ինչ ուսանին 'ի նոսին, որքան են ուսուցիչք և քանի՞ ուսանողք։ Տե՛ս ցուցակն ընդ պատկեր Օ։ (1)

Այսօրինակ կառավարութեամբ Հոգաբարձութեան Մերոյ յընթացս տասնամեայ աւարտեալ են զուսումն երթևեկ* աշակերտաց ոմանք մտեալ են 'ի բարձրագոյն արքունի վարժարանս յուսումն առաւելագոյն գիտութեանց։ Ոմանք 'ի զինուորական և 'ի քաղաքական ծառայութիւնս տէրութեան. այլք պարապին 'ի տուրևառութեան։ Իսկ ժառանգաւոր որդեգիրք ընծայեալ են զանձինս 'ի զանազան եկեղեցական պաշտամունս կղերիկոսութեան, քահանայութեան, վարժապետութեան և դրագրութեան 'ի հոգևոր կառավարութիւնս։

Ուսումնարանի աշակերտք արձակեալ եղեն զկնի հրապարակական կամ առանձին հարցափորձութեանց վկայագրովք (ատեստատ) և

* աշակերտք 38, որդեգիրք 86, բոլորն 124. Յիրթենի

(1) Տեսուչ և վարժապետք Ուսումնարանին ընտրեալ եղեն մեծ ուսումնական բարեբարոյ անձինք համաձայնութեամբ հանգուցեալ [illegible], որ գրեթէ միշտ բնակէր 'ի Տփխիս. և յետ մահուան նորա անձնարկութեամբ Ն. Եպիսկոպոսին Մերոյ Սարգսի որ եղելոյ Գլխաւոր Կառավարչի Ուսումնարանին։ Ընդ այն և ուսումնական մաս յանձնեալ էր կառավարութեան Տեսչին վարժապետաց ընդ ատենին դիտողութեամբ նորին յիշեալ Սրբազանին.

վկայութեամբք (սվիդէտէլստվօ) չորից անգամ յընթացս տասնամեայ կառավարութեան մերոյ յանուանէ 'ի 1853, 1855, 1858 և 'ի 1860 ամս։ Ցուցակք ժառանգաւորաց և վկայագիրք առաքեալ եղեն 'ի վիճակային կոնսիստորիայն 'ի տնօրէնութիւն նորա ըստ պարտաւորութեան նոցին մտանելոյ 'ի հոգևոր կոչումն։ Ընկալեալ յայսոցիկ հորդաքննութեանց յամի ամի ենթարկեալ եղեն ուսանողք առանձին տարեկան հարցափորձութեանց 'ի ներկայութեան ոմանց ծնողաց, բարերարաց և ուսումնասէր անձանց վասն փոխադրելոյ զարժանաւորսն և զյառաջադէմսն 'ի նոցանէ 'ի բարձրագոյն դասատունս։

Հրամանաւ հանգուցեալ սրբազան Հիմնադրին ոչ տացեալ հանդէսն 'ի սակս զանազան ծախուց 'ի պէտս մեծարեալ հանդիսականացն բազմութեան, առանց որոյ ըստ հասարակեալ սովորութեան չէ վայելուչ կատարել զայն, ոչ արարաւ յետաձգեցաւ դիտմամբ մինչև ցաւարտել ձեռնարկեալ մեծածախ շինութեանցն և ցվճարել զպարտս Ուսումնարանին. զի արժանայիշատակ Ն.եհախառ Հիմնադրին քաջ գիտէր զամենակարևոր վսեմամիտ նպատակն Հոգաբարձութեան մերոյ զապահովել զուսումնա-

րանն ասեմ մշտակայ արդեամբք։

Յուսումնարանի յայսմիկ հաստատեցաք ըն- մատենադարանս ուսանելի և ընթերցանելի գըրեանց և զհիւանդանոց․ 'ի մատենադարանէ տուեալ լինին ձրիաբար ուսանելի գրեանք որդեգիր աշակերտաց․ իսկ երթևեկացն վաճառին գիրադնոյ․ նաև վարժապետք, վերակացուք և ամենայն աշակերտք ստանան անտի գրեանս վասն կարդալոյ, և դարձուցանեն զնոսին յետս առ տեսուչ մատենադարանին յետ վճարելոյ զպէտս իւրեանց։

Ի հիւանդանոցի՝ որ ունի և զփոքրիկ տնային դեղարան և զմշտակայ բժիշկ և զդեղագործ և զամենայն կարևոր պարագայս, դարմանին միայն որդեգիր աշակերտք։

Ի 1853 ամի Մեծափառ Հիմնադիրն Ներսէս ստացեալ զամենայն հոգաբարձական գործառնութիւնս մեր 'ի կողմանէ կառավարութեան մտից և ելից ուսումնարանին, ուխտատեղեաց, մոմավաճառութեան և պարզապատկան կալուածոց բարեհաճեցաւ շնորհել մեզ 'ի 29 յուլիսի նոյն ամի ընդ 303 համարաւ զկոնդակ ապահովութեան․ յորում ընդ այլոց բանից շնորհակալութեանց գրէ․ „Հաւատարմա-

»ցուցանեմք ըստ Աստուծոյ բանին Ճշմարտու-
»թեանց, թէ յոյն իմ առաւել է. զի առա-
»ւել քան զմեզ ամենասուրբ եկեղեցին Հայոց
»և միաբանու̅ի համազգական ունիցին յայտ-
»նել զանսահման շնորհակալութիւն իւրեանց
»վասն բարեպաշտ կամօք ազգասիրաբար ձեռոց
»Հոգաբարձութեանց ազգական մանկանց Հա-
»յոց բազմութեան.» և այլն։ Տե՛ս Ազդարար հա-
մար 303։

Այսպիսի հայրապետական սիրայորդոր օրհ-
նութիւն և գնահատութիւն աշխատանաց խրա-
խուսեցին զմեզ 'ի սիրտ և 'ի հոգի, և անօրի-
նակ առատաձեռնութիւնն ժողովրդոց Հայոց
վառեաց, բորբոքեաց 'ի մեզ եւս առաւել զջեր-
մեռանդութիւն. ուստի և ձեռնարկաք 'ի մե-
ծածախս շահաբեր շինութիւնս։ 1, Սուրբ Գէ-
որգ ուխտատեղի եկեղեցին Թէլէթու գոլով
հին, անձուկ և անշուք, չէր մեծ քան զմի մա-
տուռն և. պարունակէր 'ի մէջ իւր զլոյժ սա-
կաւ ջերմեռանդ ուխտաւորս ձեռնարկաք շինել
նոր 'ի նորոյ մեծավայելուչ և ընդարձակ 'ի սըր-
բատաշ քարանց 'ի նմին իսկ տեղւոջ հնոյն.
դեռ. 'ի կենդանութեան Սեհախառ Հայրա-
պետին Ներսիսի, որ ինքնին էարկ այնմ զհիմն

յորս որահի 'ի դիւրութիւն և 'ի բաւականու-
թիւն ուխտաւորաց կառուցաք զերիս եռայար-
կեան բնակարանս · յորոց առաջնումն են 24
սենեակք, յերկրորդումն 18 և յերրորդումն 18։
2, Նոր 'ի նորոյ 'ի հիմանց շինեցաւ աղւսակերտ
և հոյակապ Կոծանխառ Ծիրանաւորի ասա-
ցեալ խարխուլ և խախտեալ եկեղեցին, և ա-
նուն տուաւ նմա Գեղարդաւանքի 'ի սրբազան
վեհապետէն Ներսիսէ 'ի յիշատակ սրբոյ Գե-
ղարդին, զոր 'ի 1847 ամին բերին 'ի Տփխիս 'ի
փարատումն նորաձարակ խօլերային։ զՄերձա-
կայ տեղիս նորա ընդ արդիւնաբեր կրպակի որ
անդ գնեցաք առ կենդանութեամբ Տեառն
Ներսիսի, և վասն ուխտաւորաց շինեցաք զերկ-
նայարկ բնակարանս ութ և տասն սենեկօք։
3, Հայք Մծխիթայ գեղջ 'ի վաղուց հետէ չու-
նէին եկեղեցի և ոչ սակաւ նեղութիւնս կրէ-
ին յեկեղեցիս հեռաւոր գիւղօրէից գնալով և
կամ քահանայս անտի ածելով վասն հոգևոր
պիտոյից իւրեանց, ուստի ձեռնարկաք կառուց-
ման եկեղեցւոյ և այս յորդորմամբ մերով
բարեպաշտ դերանձնիկ աստիճանաւոր պարոն
Յովսէփին Նիֆոնտեանց սեփական արդեամբք իւ-
րով կատարելագործեաց զեկեղեցին քարաշէն

Եկեղեցի 'ի վայելուչ տեղւոջ յանուն սրբուհւոյ Աստուածածնի և զկրաշէն պարսպապատ գաւիթ նորա հանդերձ քառասնեակ բնակարանօք վասն քահանայի միոյ և ուխտաւորաց, ծախեալ յայն աւելի քան զ14000 մանէթ արծաթ։ 4, Ներսիսեան Ուսումնարանն քայքայեալ գոլով, անշքացեալ և խրթնացեալ 'ի շրջակայ շինուածոց, ո՛չ փոքր անյարմար լինէր վասն ուսանողաց, ուստի գնեալ ոչ մեծ գնով յարքունուստ զհին տուն փօշտայի, ոչ միայն վերանորոգեցաք զայն, այլև 'ի դատարկ տեղիս նորուն յարեւմտից, յարեւելից և 'ի հիւսիսոյ կողմանց կանգնեցաք զկրկնայարկ մասնաւոր շինուածս հանդերձ ներքնայարկօք և արձակ սրահիւ, և փոխադրեցաք անդ զհին Ուսումնարանն, բայց և զնա (զհինն) մնալ ո՛չ թողաք յանհոգութեան, այլ վերանորոգեցաք զմիջնայարկն, և զՏպարանն զետեղեցաք 'ի նմա և զքանի մի սենեակս տուաք 'ի վարձու, որոյ վերնայարկն հանդերձ բոլոր տանեօք մտադիր էաք վերանորոգել. բայց զի բաւական ծախս պահանջէր և մեք չունէաք առ այն պատրաստ դրամս, ուստի թողաք զայն առ ժամանակ մի։ 5, 'Ի հարաւակողմն հնոյ Ուսումնարանին գոյր,

’ի վաղուց հետէ դատարկ գետին անշահաբեր էր 60 կվադրադնի սաժէն. զայս գետին պարսպեցուք նախ և ապա թեթև ծախիւք շինեցուք զերկս կրպակս, որք բերեն արդիւնս ’ի տարին առ այժմ 360 մանէթ: 6, Նոր Սեմինարանն ևս ունի զերկս կրպակս բաւական արդիւնաբերս ’ի հիւսիսոյ կողմանէ ’ի ներքոյ մեծի դահլճի Սեմինարանին կառուցեալ ջանիւք Հոգաբարձուացս: 7, Ոչ փոքր նորոգումք և շինուածք յաւելան յուխտատեղի եկեղեցեան Նախչեւանքի, Շինդիսու, Բոլխոսու, որ Սարգսի Պաղախու, Նաւզլուտի Մ.խալքալէք և այլուր, և ոչ փոքր արդեանց պատճառ եղեն հոգաբարձուք մեր ’ի վերոյ շինուածոցս յօգուտ Սեմինարանին, առ ’ի յաւերժացուցանել զեկամուտ նորա անխախտ ’ի ժամանակս: 8, Ջան մեծ եդաք բարեկարգել և ճոխացուցանել նաև ըզՏպարան Սեմինարանին, ուստի և փոխանակ հնամաշ անպիտանացեալ փայտակերտ մամլոյ գնեցաք և բերաք ’ի Մոսկուայ զչորս ազնիւ երկաթեայ նորաշէն մամուլս հանդերձ ամենայն պարագայիւք նոցա. ’ի նորոյ ձուլեցան ամենայն կապարեայ հայերէն տառք նորա, բայց թէ տիպն ոչ է գեղեցիկ ըստ այլոց Տպարանաց, այն

ոչ Հոգաբարձութեանս է անմտագին թուլութեան մեղ, այլ պղնձի մայրեցն, որք մաշեալ և հնացեալ գոլով 'ի յաճախ ձուլմանց կաղապարեաց ձագուցն՝ կարօտին նորոգ դրոշմելոյ 'ի Հայրից, և այքին չ'են 'ի ձեռս Հոգաբարձութեան։ (Տե՛ս ցուցակ անշարժ կալուածոց եւ շինուածեանց Ուսումնարանին ընդ տառիւ Լ։)

Բովանդակ ծախք վերոգրեալ ուխտատեղեաց, սենեկաց, վերանորոգութեանց, նորաշինութեանց և կարկատանաց կալուածոց, պահպանութեան Ուսումնարանին և Տպարանի նորա յընթացս տասնամեայ ժամանակի կառավարութեան Հոգաբարձութեանս հաշուեալ եղեն 182,527 մանէթ 57½ կոպէկ։ (Տե՛ս ցուցակ ծախուց ընդ տառիւ Լ)։ Ընդ այսպիսի մեծագումար ծախսս չ'է պարտ երբէք զարմանալ, զի եթէ նախ ամենագորն Աստուած և ապա ջերմեռանդութիւն ազգի Հայոց ոչ ձեռնտու լինէին այսմ բարեմիտ նպատակի անսպառ և մըշտնջենաւոր առնելոյ զարդիւնս Ուսումնարանին, կարէր յառաջանալ և ոչինչ։ «Եթէ ոչ Տէր շինէ զտունն, 'ի նանիր վաստակին շինողքն նորա»։

Ընդ այսմ ամենայնի մինչ Ներսէսի Աշհաւեան խնդայր հոգւով Ը յառաջադիմու-

թեան ազգաշահ մեծահամբաւ ձեռակերտի խե-
րոյ և օրհնելով օրհնէր զազգն և զմեզ զհո-
գաբարձուս պատճառողս ուրախութեան նորա
վասն անխոնջ խնամատարութեանց յանձն ե-
ղեալ մերոց կառավարութեան Ուսումնարանի
ճոխացելոյ, և ահա դուժեցին յանկարծ քօթա-
հնչիւն ձայնք զանգակաց յառաւօտուն 'ի 13 փե-
տրվարի՝ յաւուր ծննդեան նորա, 1857 ամի ըղ-
վախճան նորա։ Մեծապէս վրդովեցաւ քաղաքն
և բովանդակ ազգ Հայոց որ 'ի նմին՝ ընկղմեցաւ
'ի խորին տրտմութի արտասուս գետօրէն հոսեալ
յաչաց ընդ անակնկալ զրկումն իւր յերկրորդ-
լուսաւորչէ իւրմէ և յանմոռանալի բարերարէ։
Հանգեաւ 'ի Քրիստոս Գլուխն եկեղեցւոյ
Հայոց, բայց բարեյոյս մտադրութիւնք նորա
կատարեալքն և դեռ անկատարքն կենդանի մը-
նասցեն 'ի սիրտս և 'ի հոգիս համօրէն ազգի մե-
րոյ մանաւանդ 'ի միտս Սարգսի սրբազան արք-
եպիսկոպոսի անդամոյ Սինհոդոսի սրբոյ Էջ-
միածնի, որում 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր Իշ-
խանութեանց յանձնեցաւ խնկոյն կառավարու-
թեան վիճակին Արարատի և Իմէրէթի Հա-
յոց։ Սմա՝ որպէս արխաջան Գլխոյ մեծ Հայ-
քապետն Ներսէս յերկուց ամաց հետէ հաղոր-

գեալ էր զգլխաւորութիւնս իւր 'ի մասին կա-ռավարութեանց Ուսումնարանին: Տե՛ս զՀնդկահայ համար 183 և 205: Վասն որոյ զկնի մահուան Նորա բազմաշխատ Թեմակալ արհին Սարգիս դար-ձոյց զերջանկատ ուշադրութիւնս իւր յայս ազ-գային մեծ գործ: Եւ նախ՝ որովհետև Սինհո-դոսն Էջմիածնի զկնի վախճանի Հայրապետին Ներսիսի հրամայեալ էր ընդհանրապէս արձա-կել զկարգեալսն 'ի Նորին Վեհափառութենէ 'ի հոգևոր գործս և 'ի պաշտօնս զաշխարհական անձինս, յորոց 'ի Թիւս և զՀոգաբարձուս Ու-սումնարանին. բայց Նորին Սրբազնութիւնն քաջ գիտելով զներքին միտս և զխորհուրդս հանգուցելոյն 'ի մասին ընտրելոյ զաշխարհական անձինս և շօշափեալ ևս զմիտս հայրենասէր ե-րևելեաց քաղաքիս՝ Վիւթայա, համոզեաց զտե-ղակալն Կաթուղիկոսի և զգահագլուխն Սին-հոդոսի զսրբազան արք եպիսկոպոսն Ղուկաս Թողուլ զմեզ 'ի կառավարել զՈւսումնարանն ըստ առաջնոյն, 'ի հարկէ մինչև ցբազմել յա-Թոռ Հայրապետութեան նորոգ յաջորդի: (Տե՛ս զԳրութիւն Սարգսի առաջնորդին առ արք եպիսկոպոսն Ղուկաս 'ի 28 դեկտեմբերի 1857 ամի, համար 120): Եւ երկրորդ վասն ուսանելի առարկայից՝ զառաջինն

վասն հոգևորաց արար ինչ ինչ կարևոր փոփոխութիւնս, դիմաւորաբար 'ի կողմանէ քրիստոնէական վարդապետութե̅, զոր հակառակ եկեղեցական և քաղաքական օրինաց ուսուցանէր այր աշխարհական, այնէ Տեսուչն Ուսումնարանին ։ (Տե՛ս շաբաթաթերթուն Ըեծաչալ որ հրատարակեալն Սարգինի առ թիւ 'ի 16 փետրվարի 1859 ամի համար 44)։ Ու խորհեցին ըստ Թէ մեք Հոգաբարձուքս յիրաւի զբաղեալ եմք առաւել տնտեսական կառավարութեամբ առ 'ի պահպանել զՈւսումնարանն հարուստ աղբերօք եկամտից՝ զուսումնական մասն յանձն արար Տեսչին անկախ յումեքէ ։

Ընդ այս անկախութիւն Տեսչին՝ որ չ'էր համաձայն զօրութեան կանոնաց 'ի Տէր հանգուցեալ Սրբազան Հիմնադրին, մեք Հոգաբարձուքս ոչ գտաք անհաւան, զի հոգ.ք և զբաղմունք տնտեսականք օր աւուր աճէին, մանաւանդ 'ի կողմանէ 'ի նմին ժամանակի ձեռնարկեալ զանազան դպրոցապատական շինութեանց. և առ այս փոխման զկէս մասն կրթակաց՝ որք հանդէպ հնոց Ուսումնարանին, զորս եռ քակել Նորին Վեհափառութիւնն վասն 'ի նորոյ կառուցանելոյ զայնպիսի հոյակապ և չքնաղ 'ի ձեռն Ամնքի երեցփոխանի, բայց զամն երես

զօրով նոյն շինուած շարունակ 'ի վէճս, ոչ ժամանեաց Նորին Օծութիւնն ածել 'ի կատար. իսկ յիշեալ Արհին յետ մահուան նորա վերջացուցանելով զվէճսն 'ի ձեռն մարմնաւոր իշխանութեան՝ դարձոյց 'ի տիրապետութիւն Ուսումնարանին և յանձն առնելով զայնս մեզ՝ ոգւորեաց զմեզ կառուցանել նորոգ ընդարձակ շինուածս, յայտնելով միանգամայն թէ Ուսումնարանն է սուրբ Աթոռոյն և Աթոռն Ուսումնարանին անբաժան յամ՛ դէպս: Իսկ մեր չափեալ և կշռեալ զդրամական կարողութիւն Ուսումնարանին և զմեծութիւն ծախուցն՝ զոր պահանջէր այն շինուէ կրթակաց, տարակուսեալ վարանէաք և զաչս մտաց շուրջ յածեալ՝ հնարս որոնէաք այնպէս 'ի գլուխ հանել զկրկնաւորեալն զայն մեծ շինուած, զի Ուսումնարանն մի՛ ենթարկեսցի պարտուց: Հուսկ յետոյ յուսալով միայն յամենակարողն Աստուծոյ ձեռնտուութե՛ բուռն հարաք զկառուցմանէ կրթակայն. և զամս երիս անընդհատ աշխատելով կանգնեցաք զ21 հաստատահիմն կըրթակս հանդերձ կամարակապ ննջասենեակօք և կղմինարահիւս տանիքօք ծախելով յայնս 33,325 մանէթ 45$\frac{2}{4}$ կոպ: (Տե՛ս ցուցակ ծախուց ընդ տառիւ Ա.):

Իսկ 'ի միւս կիսում կրօնական մտադրեալ էաք կառուցանել զնոր եւրոպական ընդարձակ եւ յարմարաւոր Ուսումնարան հանդերձ ամենայն պարագայիւք խցովք եւ վայելուչ պարտիզիւ յարեւելս կոյս՝ զորոյ նախագծեալ նախագաղափար շինութեանն արդէն հաստատեալ ունիմք 'ի ձեռին 'ի միասին ընդ կառուցեալ կի-այն, եւ զայժմեանն Ուսումնարան վասն ինչ ինչ անյարմարութեանց տալ 'ի վարձու ։

Եւ եղեւ, զի 'ի 14 յունիսի 1859 ամի ըստ տնօրինելոյ Վերին Նախախնամութեան նորընտիր Հայրապետն ամենայն Հայոց Տէր ՄԱՏԹԷՈՍ աջջամբ ժամանեալ 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Տփխիս՝ արժանի արար հայրախնամ այցելութեան իւրոյ զնախորդին իւր ազգապարծանք ձեռակերտն, եւ անձամբ անձին ակնատես եղեալ ամենայնի՝ գտաւ գոհ յոյժ ։ (Տե՛ս զՀանդէս Մայեր-Ռէան նորա տպեալ 'ի Տփխիս 'ի 16 յունիսի ամսոյ 1859 ամի)։ Ուր մին 'ի Հոգաբարձուաց (Թայլըեանց) ասաց զայս կարճառօտ ճառ ։

## »ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ։

»Երջանկայիշատակ Ներսէս Հայրապետն
»իւր սուրբ կամօք ընտրեաց զմեզ զնուաստքս

»և կշռադատութեանց Սինօդին՝ թողուլ ՚ի »կամս Վեհափառ Կաթուղիկոսի. և զայս »անօրէնութենէ ծանուցանել Վիճակային կոն- »սիստորիին Վրաստանի, և նոյն իսկ Ձեզ պատ- »ուելի Հոգաբարձուաց որոշ որոշ հրամանա- »գրովք»: (Օրինակ ամբողջ Հրամանագրի Սինօդին տե՛ս ՚ի Մեղուի ՚ի կարգի պաշտօնէից հանդիսից ՚ի 20 Մայիսի 1861 ամի. համար 566).

Ըստ այսմ՝ ցանկալով մեր առաւել ևս յայտ-նի առնել համօրէն ազգի մերում զազգային ծառայութիւնս և արդիւնաւորութիւնս մեր յըն-թացս տասնամեայ հոգաբարձութեան մերոյ ՚ի 25 էն մարտի այսր 1861 ամի 149 համարաւ աղերս առաջի արկաք առ Վեհափառ Հայրապետն մեր ՄԱՏԹԷՈՍ բարեհաճել և հրամայել մեզ ՚ի տպագրել զամենայն գործողութիւնս և զհա-շիւս մեր սկսեալ յօրէ տասնամեայ կառավա-րութեան մերոյ այսր Ներսիսեան Հոգևոր Ու-սումնարանի Հայոց Տփխիսոյ. Վեհափառու-թիւն նորա ոչ անագան վաւերացաւ հայրախը-նամ՝ քաղցրութբ իւրով կատարել զթախան-ձանս ուղղեալս իւրոց յ2-էն ապրիլի ամսոյս ընդ 139 համարաւ ՚ի պաշտելի կոնդակի իւրում այս-պէս հրամայելով. «Դուք խնդրէք ՚ի մէնջ

»զհրամանն 'ի մամուլն 'ի տիպ արձանագրութեանցն
»զտասնամեայ Հաշիւս Ուսումնարանական կա-
»ռավարութեանց ձերոց 'ի լրումն Նպատակի եւ
»յանկութեանց սրտից ձերոց եւ մեր: Ուստի
»ընդունելով ինչ արդելառիթս 'ի մէնջ կարէք
»զյիշատակ ծառայութեանց ձերոց արձանա-
»ցուցանել 'ի տիպ 'ի գիտութիւն եւ 'ի խրախոյս
»համօրէն լրութեան սիրելի ազգիս»:

Բայց յառաջ քան զխնդրել մեր Հրաման
տպագրութեան ամենայն դպրոցական գործոց
եւ Հաշուոց մերոց 'ի մտի ունելով միշտ թօ-
թափել յուսոց զայս ծանր լուծ ազգային պաշ-
տօնակատարութեան, ըստ որոյ եւ ոչ միանգամ
աղաչեցաք առ Հանգուցեալ Ծայրապետն
Ներսէս եւ առ Նոր Ս. Եհաւխա Տէրս արձակել
զմեզ 'ի պաշտօնէս, որպէս տեսանի 'ի վերոգրե-
րեալ բանից, Հոգ տարայք վերահասութեան
Սրբազան Առաջնորդին մերոյ Սարգսի Արք.
Եպիսկոպոսի եւ խորհրդակցաւք Տեսչի Ու-
սումնարանի, ամենից երիցագոյն վարժապետաց
եւ արժանաւորագունից 'ի մերոյնեաց քաղաքիս
կազմել 'ի բազմամեայ ժողովոյ զնորոգ ձեւա-
կերպութիւն սահմանադրութեան ազգային հո-
գեւոր Դպրոցի Հայոց Տփխիսայ, զոր եւ ունե-

Թէեւ և վասն ապահովացուցանելոյ զկառավա-րութիւն Ուսումնարանին Նորոգ կարգադրու-թեամբ, վերահաստատեաց զշնորհեալն Հոգա-բարձուացս յարժանայիշատակ Նախորդէն իւր-մէ ՚ի Ներսէսէ զկանոնաւոր իրաւունս կառավա-րելոյ զՈւսումնարանն ՚ի միասին ընդ Տեսչի նո-րուն գերազնիւ պարոն Յովհաննու Պայթմա-զեանց ։ (Տե՛ս շնորհագիր Հայրապետին ՄԱՏԹԷՈՍԻ ՚ի Նոյ-եմբերի 1860 ամի, համար 547) ։ Զհրաման Հայրա-պետին մերոյ յայտնեցաք գրով յիշեալ Տես-չին և հրաւիրեցաք զնա ՚ի վարել զգործ իւր ։ բայց նա ոչ ևս կամեցաւ յարատևել ՚ի պաշ-տաման իւրում և հրաժեշտ ետ յՈւսումնա-րանէն յամսեանն յունվարի այսր 1861 ամի ։

Սինհոդոսն Էջմիածնի ընդ նախագահու-թեամբ Վեհափառ Հայրապետին ակն արկեալ և քաջ հասու լեալ վերոյիշեալ ամենայն գոր-ծողութեանց և հաշուոց Հոգաբարձութեան մերոյ, և չգտեալ ՚ի նոսին հետս և հոտս ինչ խարդախութեան և անհարազատութեան, այլ ընդ հակառակն լի յոլով պատուովք արդիւնաւոր գործոց յօգուտ Ուսումնարանին, և ճիշդ հա-մաձայն իրաւանց տուելոց մեզ օրինական կոն-դակօք եզրակացոյց բաց այսմ ․ „Որովհետև մե՛

„բուրդեալ հաշուեքննութիւնն . . . . փափագէ
„ըստ վերահսկողութեան օրէն ճիշդ կանո-
„նապահութեամբ, և չերևի 'ի նմա կարծեքա-
„կան ինչ . վասն որոյ զգրագրութիւնն շարու-
„նակեալն ըստ այնմ 'ի մէջ Անգղիս, Կանոնա-
„ւորէին Տփխիսոյ և Հոգաբարձութեանն Հո-
„գևոր Դպրոցի սորին այդ կարծել բարերարքն, և
„զհաշուեքննական ցուցակն կցել ընդ գոր-
„ծոյն. և զի Ա. Է. Հաւխաս Ռոսնայպետ օրէն որ-
„պէս ծանոյց 'ի զեկուցմանցն դպրանոցէ հաւա-
„տարմացեալ 'ի ջերմեռանդ և յարդիւնաւոր
„ծառայութիւն Գ. Հոգաբարձուացդ, որպէս
„տանձին հայրապետական կոնդակաւ իւրով
„հրաւիրեալ է զձեզ 'ի շարունակութիւն այն-
„պիսի պարտաւորութեանց Ձերոց ցանձնի
„անօրէնութիւն: Աստի և չեմաց Անգղիս տա-
„նել ինչ ըստ այնմ: Իսկ զանօրէնութիւնն 'ի
„մասին միւս պարագայից . . . . որք վերաբե-
„րին բարւոքման Ուսումնարանին և տնտեսա-
„կան մասանց նորին Դպրոցին, ես և փորձա-
„ռութեան ձեզ Հոգաբարձուացդ վասն եր-
„կարամեայ անվարձ և արդիւնաւոր ծառայու-
„թեանց ձերոց 'ի սահմանեալ պաշտօնակա-
„լութեան իբրև անկարօտ խորհրդածութեանց

գաշան և անխորդական անտեսութիւնք մեր 'ի միջոցի եօթնամեայ ծառայութեան առ Ներսէս Կաթուղիկոսս պատկեալ են լիաբաշխ կոնդակօք օրհնութեանց և խրախուսական յորդորանօք՝ յառաջ վարել զպաշտօնն հոգեզուարճ և ոչ մնալ և լքանել ընաւ յաստուածահաճոյ գործս, մեա դնելով զրպարտանաց և սխալակարծ դատողութեանց ոմանց սակաւուց. որովհետև ամենայն բարի գործ փորձի 'ի ժամանակէն. և չէք ճշմարտութիւն և արդարութիւն Թագուցեալ ընդ գրուանաւ անհիմն բամբասանաց:

Յայսմ միջոցի մին 'ի մէնջ՝ այն է ազնիւ Պաւլին Պ. Խերոպլինեանց ոչ փոխեալ զմիտս իւր յընդ մեզն ուսեալ հրաժեշտէն՝ ոչ ևս միջամուխ եղև 'ի գործս կառավարութեան Հոգաբարձութեան մերոյ. և յայնմհետէ մեք երկոքեանս վարեցաք միայն զպաշտօն մեր:

Նայամ այսպէս լինելով՝ Ամենապատուութիւն Նորա ըստ Թախանձանաց Հոգաբարձուացս՝ որք ըստ վերոգրեալ իրաւանցն շնորհելոց մեզ 'ի բարեյիշատակ Հայրապետէն Ներսիսէ Թէև չունէաք տալ ումեք զհաշիւ գործողութեանց մերոց, բարեհաճեցաւ առ 'ի հեղձուցանել զայն-

պիտի շշունչ և զուարթարարն արտաունչս՝ յե-
րեան հանել զճշմարտութիւնն և ապահովել
զազգօգուտ ծառայութիւնս մեր, և մանրամաս-
նաբար ձեզ վերահասութիւն գործել ամենայն
հաշուոց մերոց և գործառնութեանց, 'ի վերջն
1859 ամի զատենադպիր սրբազան Սինհոդոսին
Էջմիածնի զաստիճանաւոր պ. Սուքիասեան Թա-
ղէոսեանց աւագերաց 'ի Տփխիս. Սա ըստ ը-
րութեան կոնդակաց առ ինքն և առ Թեմա-
կալ Տ.րբ Նիկողայոսն Սարգիս ժողով արար-
եալ 'ի հաւատարիմ և 'ի պատուաւոր անձանց
քաղաքիս և 'ի միասին ընդ Վիճակաւորին մե-
րոյ մի առ մի զննեալ զամենայն հաշիւս, զելու-
մուտս և զգործառնութիւնս մեր յօրէնշանա-
կութեան մերոյ 'ի հանդուցելոյն Ներսէսէ 'ի
Հոգաբարձուս Ուսումնարանին, և զամս իւ-
րոց երիս կառավարմունս եղեալ յամենայնի, հուսկ
յետոյ 'ի 22 մարտի ամսեան 1860 ամի զյայտա-
րարութիւն իւր լիուլի անեղծութեանց և հար-
կաւոր բացատրութեանց մատոյց Վեհափառ
Հայրապետին մերոյ ՄԱՏԹԷՈՍԻ. և նա ետ
զայն 'ի վերադննութիւն Հայոց Լուսաւորչական
Սինհոդոսին Էջմիածնի. Իսկ ընդ նմին 'ի կող-
մանէ իւրմէ մինչև ցանելն զնոր անօրէնու-

»Հոգաբարձուս իւրականոյդ Ուսումնարանի.
»Եւ մեք օգնութեամբ Ամենակալին կատարե-
»լով զսեպուհ զայս ազգային պարտաւորու-
»թիւն, ըստ կարեացն մերոյ արարաք, զոր կա-
»րողացաք։ Ահա նիւթական պտուղ աշխատա-
»նաց մերոյ այս Տուն. իսկ զուսումնականն
»բարեհաճեսջիք տեսանել յաշակերտսն. Եւ
»արդ՝ տուք մեզ համարձակութիւն շնորհաւո-
»րելոյ զմուտ Ձեր յայս Ուսումնարան, և ա-
»ղաչել զԱստուած երկար կենօք պահել զՁեզ.
»զի անդուլ հոգանակութեամբ Ձերով սերմն՝
»զոր սերմանեաց 'ի սմա (1) լուսահոգին Ներ-
»սէս, բեղմնաւորեսցի բարեմասն պտղաբերու-
»թեամբ առաւել 'ի փառս ազգի և 'ի պայծա-
»ռութիւն հաւատոյ և եկեղեցւոյ»։

Զկնի այսորիկ մատուցաք Նորին Վեհափա-
ռութեան զբոլոր հաշիւս գործոց մերոց ըստ
ամենայն մասանց կառավարութեան Ուսումնա-
րանին ըստ մանրամասն մտից և ելից գումարաց
նորին և զցուցակս կոյից և կալուածոց և զնա-
խադասակարս շինութեանց Ուսումնարանի. և

(1) 'Ի պատմագրեալ «Հանդէս» Ազգասիրաց տպագրեալն մեծա- ծանօթ գնի յերկիրս.

ամենախոնարհ որդիական համարձակութեամբ խնդրեցաք դարձակումն 'ի պաշտամանց Հոգաբարձութեան Ուսումնարանին : Բայց մեծ հոգի Նորուն Վեհափառութեան՝ որ ընդդէմ էր զրպարտութեանց եւ չարախօսութեանց յաճախելոյ 'ի քաղաքի մերում 'ի մէջ ամանց մերոց ազգակցաց, դրեալ զՈւսումնարանն 'ի վիճակի բարեկարգութեան՝ մխիթարեցաւ անպատում ուրախութեամբ. եւ վասն առաւել եւս բարւոքելոյ զկատարելութիւն Ուսումնարանին, եւ կամ պահպանելոյ զնա զոնէ 'ի նմին իսկ վիճակի հրաւիրեաց զմեզ յերեւելեաց քաղաքիս, եւ առաջի արար նոցա լինել Հոգաբարձուս Ուսումնարանին. բայց յորժամ հրաժարեցան նոքա յայնմ ազգային ծառայութենէ, յայնժամ Հոգեւոր Տէրն զբան Փրկչին առ նոսա վերուղղելով՝ Թէ «Դուք ոչ մտանէք, եւ որք մտանեն՝ ընդդէմ կացեալ արգելուք»: Հայրապետական սուրբ օրհնութեամբ համոզեաց ըզմեզ առ ժամանակ մի եւս կալ մնալ յայսմ պաշտաման մինչեւ ցդնալ իւր 'ի սուրբ Էջմիածին եւ դառնալ. եւ կամ մինչեւ ցառնելն իւր զնոր անօրէնութիւն յաղագս Ուսումնարանին. Քաջ գիտէր իմաստուն հօտապետն, թէ ազ-

ըով մեզ 'ի հիմնաւորութ զվերոգրեալ Հայրապետական կոնդակն է 547 համարաւ, վասն անխափան ունելոյ զկարգ Ուսումնարանին փութացաք առաջի առնել Նորին Վեհափառութեան յ3-ն դեկտեմբերի 1860 ամի, համար 580, մաղթելով արժանաւորել զայն գթածաբար հայրապետական սուրբ անհարկութեան իւրոյ և հաստատութեան առ 'ի գործադրութիւն։ Որոյ ցանկացողն կարէ տեսանել առանց դիտութեան և կամից մերոց ինքնօրէն ձեռներիցուէ տպագրեալ 'ի «Կռունկ Հայոց աշխարհին» անուանեալ ամսագիրն մարտ ամսոյ այսր 1861 տարւոյ յերես 241, թիւ գ։

Վեհափառութիւն Նորին ընկալեալ զայնոսիկ նախագիծս Սահմանադրութեան բարեհաճեցաւ առաքել 'ի Տփխիս զՍինօդական անդամ՝ Մակար Ե.ՔԲ Նախկապոսն և զատենադպիր Սինօդին զատախձանաւոր պարոն Սուքիաս Թաղիանոսեանց տալով նոցա զկոնդակ այսպիսի բովանդակութեամբ։ «Յինչ ինչ առ»մեզ հասեալ գրաւոր տեղեկութեանց և լրոյ »'ի մասին բարեկարգութեան կարօտ ուսում»նական և տնտեսական, ներքին և արտաքին »կառավարութեանց Հոգեւոր Ուսումնարանին

„Քաղաքդ Թիֆլիզոյ հարկադրեալ՝ արժան դատե-
„ցաք առաքել զՁեզ 'ի Թիֆլիզ առ 'ի ան-
„ձամբ անձին վերահասու լինել հանգամանաց
„վիճակի այնց կառավարութեանց։

„Ուստի այսու մերով կոնդակաւ պատուի-
„րեմք ձեզ, զի 'ի ժամանել ձեր անդր առանց
„իրիք յետաձգութեանց ընդ առաջնորդական
„պաշտօնատարի՝ Սարգիս Արք Եպիսկոպոսի և
„պատուարժան Հոգաբարձուաց Ուսումնարա-
„նին և ոմանց առաջաւորաց և ուսումնակա-
„նաց տեղւոյն խորհրդակցութեամբ առնել ըղ-
„ձիշդ նկատողութի որպէս ներքին և արտաքին
„դրութեց և կառավարութեց այնր Ուսումնարանի,
„նոյնպէս նորոգ առաջարկեալ մեզ կանոնադը-
„րութեց նորին․ 'ի կատարումն որոյ վերադառնալ
„աստ առ մեզ անյապաղ և տալ տեղեկութի մեզ
„զայնցանէ 'ի բարեհաճ տնօրէնութի մեր„։

„Օ այսմանէ առանձին կոնդակաւ մերով
„գրեցաք նաև կառավարչի տեղւոյն այնորիկ
„Սարգիս Արք Եպիսկոպոսի և պատուարժան
„Հոգաբարձուաց այնր Ուսումնարանի 'ի տեղե-
„կութիւն„։ Յամի փրկչական 1861 'ի 25 ապ-
րիլի։ (Տե՛ս և 'ի Ներս կոնդակաց ՄԱՏԹԷՈՍԻ Հայրապետի ընդ համարաւ 199)։

Արք Եպիսկոպոսն Մակար ժամանեալ ՚ի Տփխիս ըստ ինքեան յայտնի հանգամանաց՝ վախանակ ժողովելոյ ըստ զօրութեան յանձնարարութեան վերոգրեալ կոնդակի Հայրապետին զմանս յառաջաւորաց և յուսումնականաց և այլն, կամեցաւ ՚ի 14 մայիսի ՚ի Վանքի Առաջնորդանիստ մայր եկեղեցւոջ համառօտ ատենախօսութեամբ յայտնել զյանձնարարութիւն որբազան Հայրապետին, և միանգամայն առաջարկեաց, զի ժողովրդականք ամենայն եկեղեցեաց Հայոց Տփխիսայ ընտրեսցեն ՚ի միջոյ իւրեանց զերկուս երկուս երեսփոխանս յարժանաւոր անձանց առ ՚ի միաբան խորհրդակցութեամբ քննել և որոշել վասն ազգային Հոգևոր Ուսումնարանի զհիմնաւոր բարեկարգութիւն։

Կատարեցաւ առաջարկութիւն նորա․ և ՚ի 18-ն մայիսի յընդարձակ դահլճի նորոյ Ուսումնարանին եղև ժողով ընտրեալ երեսփոխանաց․ ընդ որս խառնեցան և այլ բազում հետաքննին անձինք տեսանել զհանդէս ազգային խնդրոյն։ Եւ թէ ո՛յք էին յանուանէ այս երեսփոխանք, ծրագրի կարգաւ ընտրեցան․ զի՛նչ խօսեցան, զի՛նչ վճռեցին և զի՛նչ արարին յայս և յայլ ամենայն նիստս իւրեանց յետ փոխանորդս ա-

ռաքելոյ առ Սրբազան Հայրապետն յԷջմիա-
ծին և դառնալոյ նորա անտի, մեք աւելորդ հա-
մարիմք կրկնել զնոյն աստ մի առ մի. Ճըշ-
մարտասիրաց Թողումք ստորագրել զնոյն խա-
կութեամբ։ Այլ այսու ամենայնիւ որ կամի
փոքր 'ի շատէ տեղեակ լինել հարևանցաբար,
կարէ կարդալ զամսագիրն «Կռունկ Հայոց աշ-
խարհին»։ Թիւ Զ. 'ի յունիսի 1861 ամի, յե-
րես 452—457. և 'ի «Մեղու Հայաստանի» լրա-
գիրն յ8-ն յուլիսի տարւոյս համար 28, յերես
218—221. Թէև 'ի նոյն տեսանին ինչ ինչ փո-
փոխութիւնք ոչ խակութեամբ բացայայտեալք։
Այսչափ միայն կարեմք յաւելուլ Թէ անձինք
յառաջ ընծայեցուցանողք զՄիքեանս յայս գործ
մեծ չկարացեալք միաբան 'ի կազմութիւն կա-
նոնադրութեանց իւրեանց մնալ և անհաւան
իրերաց եղեալք՝ յերկուս բաժանեցան, վասն
որոյ և երկու կարգադրութիւնք գրեցան ա-
ռանձին յերկուց կողմանց. և յ8-ն օգոստոսի
վերստին ժողովեալք 'ի նոյն գահլիճ Ուսումնա-
րանին, ուր յերեսփոխանաց կամ պատգամա-
ւորաց ո՛չ ամենեքեան 'ի միասին ներկայ գըտ-
եալք՝ ընտրեցին 'ի միջոյ իւրեանց ըստ իւրեանցն
հաճութեան և նկատման զերկոտասան Հոգա-

բարձրու և զչորս կանդիտատս (տեղապահ) նո-ցա, և ստորագրեալ զառ 'ի յինքեանց յօրինեալ կանոնագրութիս Ուսումնարանին, և զցուցակագիր անուանց նորընտիր Հոգաբարձուացըն և կանդիտատաց հանդերձ առանձին խընդրով յանձնեցին Արք Եպիսկոպոսին Մակարայ տանել զնոսին յԷջմիածին և մատուցանել Նորին Վեհափառութեանն 'ի բարեհաճ տնօրէնութիւն։ Նա զի Արհին Մակար փութայր աւուրբ յառաջ դառնալ 'ի սուրբ Էջմիածին, և դժուարացեալ ըստ պահանջման Նորուն Վեհափառութեան ըստ այսոցիկ առարկայից խորհրդակցել ընդ Սրբազան Վիճակաւոր Արք Եպիսկոպոսին Սարգսի և ընդ մեզ Հոգաբարձուացս, կամեցաւ զի մեք զդատողութիւնս մեր գրով հասուսցուք առ նա 'ի սուրբ Աթոռն առ 'ի մատուցանել զայնոսիկ 'ի միասին ը̄ վերոգրեալ ձևակերպութեանց կարգադրութեանցն՝ Նորին Վեհափառութեանն։ Սմին իրի Սրբազան Առաջնորդն Սարգիս յիւրմ կողմանէ, և մեք Հոգաբարձուքս առանձին 'ի մերոց դիմաց գրեալ ըստ խղճի մտաց զմեր երաւացի դատողութիւն ընդ 465 և 466 համարոք փոփոխեցաք առ Մակար Արք Եպիսկո-

դրան ։ Ոչ դանդաղեցին 31 երեսփոխանքն աշխատ առնել զԱմենակալն Տէրն մեր առ 'ի վաղվաղակի հաստատութիւն կանոնադրութեանց իւրեանց և նորոց ընտրելու Հոգաբարձուաց․ և առ այս նպատակ եօթն աւուրբք զկնի երանելոյ տեառն Մ․րք Եպիսկոպոսին Մակարայ վաւթացան յԷջմիածին և երեք պատգամաւորք նոցա։

Օրինակ․ յաւելուած սորին թէ՛․ 'ի ներքոյ յերեսս 132—136․

## Ա.

### Յուցակ ընծայաբերից և բարերարաց Ներսիսեան Ուսումնարանի Հայոց Տփխիսայ 'ի 1816-էն մինչև ցամ 1861։

| Թիւ յընծայա ծոց ։ | 1. Նշանակք նախկին նուիրողաց զգրամս և զկալուածս 'ի սկզբանէ հիմնարկութեան նորա մինչև ց1851 ամն՝ այն է բացումն Հոգաբարձութեան և կառավարութեան նորա ։ | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| 1. | Սկզբնական բարերարն է հիմնադիր սորին յաւերժայիշատակ Արքեպիսկոպոսն Հայրապետն ամենայն Հայոց Գերերջանիկն Ներսէս Ե. Աշտարակեցի . | | |
| 2. | Ազնուական Սարգիս Նասյեան Լօռումելիքեանց 'ի 1816 ամի 'ի տակս մատադրեալ հիմնարկութեան Ուսումնարանին հինգ հարեւր ռուբլի ասիգնացի, որ առնէ հարեւր վաթսուն մանէթ . . . . . . . . . | 160. | — |
| 3. | Տփխիսեցի Թումաս Յովհաննիսեան Գութեանց կտակաւ քսան հազար ռուբլի ասիգնացի, բայց Ուսումնարանին հասեալ է տասն և մին հազար ռուբլի ասիգնացի, որ առնէ երեք հազար հարիւր վաթսուն մանէթ. | 3160. | — |
| 4. | Մեծաստիճան Խօսրով խան Սամսէլեան Գայթմազեանց 'ի Պարսկաստանէ 'ի պէտս շինութեան Դպրոցին չորս հազար մանէթ. . . . . | 4000 | — |
| 5. | Մեծազնեայ Իշխանն Յովակիմ Արղութեան Լօղարեանց զերկս մուր- | | |

| Թւէյօրինածոյ։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| | հակս 7,100 ռուբլի ասսիգնացւոյ, այլ Հիմնադիր նորա տուեալ է զ5,000 ռուբ. ասսիգ. միայն. որ առնէ հազար հինգ հարիւր մանէթ. . . . . | 1,500 | — |
| 6. | Գեներալ մայոր Աբգարն Կնեազ Օթար Արղութեանց զմի մեծ այգի 'ի Սօղանլուխ գեղջ հանդերձ փոքրիկ թևով Կուր գետոյ հաւասար երկայնութեան այգւոյն և նմին պատկանեալ ալքերբն՝ որ 'ի նոյն գեղջ. | | |
| 7. | Ազնուական Գէորգ Երեմեան Արծրունի 'ի 1817 ամի ճանապարհորդեալ յԵւրոպա և լուեալ թէ յԱմստերդամ քաղաքի Հոլանդիոյ գոյ Տպարան Հայոց, իջանէ անդ, և ոչ խնայեալ 'ի գինն և 'ի ծախս ճանապարհին՝ գնէ զայն և բերեալ 'ի Տփխիս ընծայէ Ուսումնարանին։ Զորոյ յիշատակարան տես 'ի վերջ ընդարձակ Քերականութեան Մ. Մ. Զամչեանց տպեալ 'ի Տփխիս 'ի սմին Տպարանի յամի 1826, յէջ 593։ Սոր յանուանէ նշանակին ընծայեալ իւքն, այն է՝ պողովատիկ և պղնձեայ հայր և մայր կոչեցեալ նախագաղափարքն հանդերձ բաւական կապարեայ ձուլեալ ձագուք և ինչ ինչ պարագայիւք Գործարանին ընդ միոյ փոքրիկ փայտեայ մամլոյ. իսկ զայլ հարկաւոր պարագայս և զմեծ մամուլ Տպարանին պատրաստեաց ինքնին Սրբազան Հիմնադիրն Ներսէս, (Պողովատեայ հայր նախա- | | |

| Թիւ յօդուածոյ: | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |

գաղափարըն ամենայն սորօք ներեանց գաւառին այժմ առ հարազատ ժառանգ ընծայաբերին ղեներալ մայեօր Ներեմիայն Արծրունի,)

8. Սանեցի մահտեսի Գասպարն Զարուխչեանց 'ի 1824 ամի 'ի վախճանել իւր 'ի Տփխիս կտակաւ աւանդեաց 'ի կայից իւրոց զչորս հազար վեց հարիւր մանէթ, Իսկ յայսմանէ կտակեաց յետ հաւաքելոյ զամենայն դրամն իւր 'ի պարտատեարց իւրոց տպագրել ըն-հայերէն հարուստ Քերականութիւնն Մ. Ս. Զամչեանց և տալ յօգուտ Ուսումնարանին. բայց Ուսումնարանն 'ի Քերականութեանցն ստացեալ է միայն 366 հատ, իսկ 4600 մանէթ գլուխն հանդերձ տոկոսեօք դեռ չէ ստացեալ:

9. Տփխիսեցի Սեփաննոս Գուլիփաշեանց զմի տուն իւր եղեալ 'ի Տփխիս յԶ-դ մասին յԺ-դ Թաղի և զմի այգի որ յՕրթաճալայ կտակաւ աւանդեաց զկէսն Ուսումնարանին և զկէսն պատրիարգական մայր վանիցն սրբոյ Էջմիածնի.

10. Տփխիսեցի կնեազ Աղամալն Խօջամինասեանց ընծայեաց Տպարանի Դպրոցին զպղնձի մայրս ռուսերէն տառից:

11. Տփխիսեցի նախապատիւ քաղաքացի Իկժան Յովհաննիսեան Խատիս-

| Թիւ յօդուածոյ. | | Արժէքն | |
| --- | --- | --- | --- |
| | | մանէթ | կոպէկ: |
| | եանց համաձայնութեամբ Շուշանայ Ստեփանեան ամուսնոյ իւրոյ կտակաւ աւանդեաց զմեծ գումար դրամոց. բայց Ուսումնարանն ստացեալ է միայն զե- րեք հազար հարիւր ութն մանէթ: | 3108 | — |
| | Ծանօթութիւն: Յետ այսորիկ մինչև ցոր բացման Հոգաբարձութեանս այն է մինչև ցամն 1851, թէ ո՛րքան այլ ընծայաբերու- թիւնք եղեալ են յօգուտ Ուսումնարանին, զայնցանէ բայց 'ի վերոգրելոցդ 'ի գործս Հոգաբարձութեան չի՛ք ինչ տեղեկու- թիւն առանձին: | | |
| | **Դ:** | | |
| | 2: Յօրէ բացման Հոգաբարձութեան Դպրոցին 'ի 1851 ամի: | | |
| | Նուիրողք կալուածոց, դրամոց, գրեանց և այլ ամենայն ուսումնական պարագայից, լրագրոց և իրաց յօգուտ Դպրոցին: | | |
| | **'ի 1852 ամի** | | |
| 1. | Հանգուցեալ Տիտուլեարնի Սովետնիկ Դաւիթ Յովհաննիսեան Թու- մամշեանց Հոգաբարձու Ուսումնարա- նին զտասն հատ Նորատիպ Հայերէն Աշխարհացոյցս, զերիս Աշխարհագրու- թեան գրեանս, զերեսուն գաղ (արշին) սեաւ մահուտ, և զհինգ հարիւր գաղ քաթան վասն հանդերձից որդեգրաց նաև զհինգ հատ «Հրահանգ Քրիս- | | |

| Թիւ յօդուածոյ | | Արծաթ ռուբլի | Արծաթ կոպէկ |
|---|---|---|---|
| | տօնէական Վարդապետութեանս գր-եանս յօրինեալս 'ի Մագիստրոսէն Մը-սերայ Մսերեանց։ | | |
| 2. | Երբեմն վիճակաւոր Ա.րք Եպիս-կոպոսն Սրբատանի Կարապետ զքսան հատ Նոր Կտակարանս։ | | |
| 3. | Պատուաւոր քաղաքացի Գաբրիէլ Յովհաննիսեան Թամամշեանց զմին հատ փառակազմ հայերէն գրեանս։ | | |
| 4. | Շուշուայ քաղաքի Գրիգոր Ա.ւագ Քահանայն Տէր Աւագեանց զնորա-տիպ երկհատոր Բառարանս Մխի-թարեանց։ | | |
| 5. | Բժշկապետ Սողոմոն Յարութիւն-եան Տէր Ղուկասեանց զքսան և հինգ հատ հայերէն և ռուսերէն Բառա-րանս Ա. Խուդաբաշեանց։ | | |
| 6. | Ա.զնուական Տ. Իմշիլն Ա.ղամալ-եանց 'ի յիշատակ հանգուցեալ ա-մուսնոյ իւրոյ զերեքհարիւր մանէթ։ | 300 | — |
| 7. | Շամախեցի ազնիւ Ա.թանաս Պօ-ղոսեան Դալայեանց երեք հարիւր ման։ | 300 | — |
| 8. | Շտաբ րոտմիստր Նիկողայոս Սա-մուէլեան Շահնշեանց երեսուն հատ «Ընտիր Հատուածք» անուանեալ գրեանս։ | | |

'ի 1853 ամի

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Պատուաւոր քաղաքացիք Ա.ւետիք և Յովհաննէս հարազատ եղբարք Բուդ- | | |

| Թւ յօդուածոյ: | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| | դանեան Ավէչնիկեանք երեք օղմայ կտամինդարնի թուղթ, որ արժէ տասն և հինգ մանէթ ։ | | |
| 10. | Տփխիսեցի Յարութիւն Ղերմազանեան կտակաւ յիսուն մանէթ ։ | 50 | — |
| 11. | Յակովբ վարդապետ Մերինեանց կտակաւ ետ զտասն և եօթն հատ զանազան գրեանս ։ | | |
| 12. | Մերազն ժողովուրդք Մծխիթայ գեղջ վասն չունելոյ զեկեղեցի կրէին զնեղութիւն մեծ 'ի հոգևոր պիտոյս յորմէ և յուսահատեալ էին յոյժ 'ի միջի բազմաթիւ Վրաց։ Հոգաբարձութիւնն կամելով օժանդակել նոցա՝ հիմնարկեաց 'ի նմին գեղջ կառուցանել զնոր եկեղեցի 'ի գանձարանէ Ուսումնարանին փոխ տալով զ1,600 ման. ընդ նմին յայնմ միջոցի Կաւալեր Կաւագ. Քահանայն Պապոլեանց Մօզդւոյ ժողովեաց 'ի բարեպաշտօն ժողովրդոց մերոց 2,000 մանէթ կամաւոր նուիրանս, զորս միացուցեալ ընդ 1,600 գումարին (որ լինի 3600 մանէթ.) 'ի 'ի գործ եդաւ 'ի շինութիւն եկեղեցւոյն։ Զայսմանէ իրազեկ լեալ Նադվօրնի Սօվէտնիկ և Կաւալեր Յովսէփ Յովհաննիսեան Եփենդեանց ըստ մեծի ջերմեռանդութեան իւրում առ ազգն և եկեղեցին Հայոց յօժարակամ վերադարձոյց Հոգաբարձութեանն զայն 3,600 մանէթ գումարն յօգուտ Ու- | | |

| Թիւ յօդուածոց։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| | ուսումնարանին, և 'ի սեփական որդւոց իւրոց արար զամենայն ծախս շինու(ծ) այնր եկեղեցւոյ յանմահ յիշատակ կենդանեաց և ննջեցելոց իւրոց՝ աւարտելով հոյակապ և շքեղ յօրինուածովք, կամարակապ առաստաղօք և գեղեցիկ գմբեթիւք։ Շինեաց առ եկեղեցեաւն և յարմարաւոր սենեակս 'ի բնակութիւն միոյ քահանայի և երթեւեկ ուխտաւորաց, ծախելով յայնս զտասն և չորս հազար մանէթ. | 14,000 | — |
| 13. | Առաջին կարգի բաղաղք 'ի մասին շինութեան Շահնաբաթի սուրբ Գէորգայ եկեղեցւոյն ետուն երկու հարիւր մանէթ, Իսկ երկրորդ կարգի բաղաղք հարիւր քառասուն մանէթ. Նաև վասն հանելոյ զջուր առ նոյն եկեղեցեաւ աստիճանաւոր Կարապետ Յարութիւնեան Օհրապեանց արար ծախս 150 մանէթ, ընդ ամէնն: . . | 490 | — |
| 14. | Հոգաբարձու Ուսումնարանին ազնուական Գէորգ Մանդինեանց 'ի յիշատակ վաղաթառամ որդւոյ իւրոյ Գրիգորի վախճանելոյ 'ի Ս. Պետերբուրգ, սեփական ծախիւք իւրովք կառոյց 'ի նորոյ զփոքրիկ կրանիւթ քարեայ եկեղեցի սադաշէն, կամարակապ առաստաղիւ յանուն սրբուհւոյ Աստուածամօրն մերձ Թէլէթու սուրբ Գէորգ ուխտատեղի եկեղեցւոյն յարևմուտս կոյս. ուր 'ի վաղուց հետէ | | |

| Թւին յօդուածոյ: | | Արժէք Մանէթ | Արժէք Կոպէկ |
|---|---|---|---|
| | գոյր աւերակ իմն հին և փոքրիկ ուխտատեղի մատրան. անդ յաճախէին ուխտաւորք առանց շինուած ինչ տեսանելոյ. և արդ փոքրիկ Տաճար տեսանելով՝ առաւել ևս յաճախեն և տան բաւական արդիւնս յօգուտ Ուսումնարանին: Ի վերայ եկեղեցւոյս եղեալ է ծախք ի հիմնարկութենէն մինչև ցաւարտ նորին հազար մանէթ. | 1,000 | — |
| | ———— | | |
| | Ի 1834 ամի | | |
| 15. | Յովհաննէս Մովսիսեան Բօթոյեանց առ կենդանութեամբ իւրով ըն- չորս հարիւր մանէթ: . . . . | 400 | — |
| 16. | Հոգաբարձու Ուսումնարանին ազնիւ Գէորգ Մանդինեանց զեօթն հարիւր հատ Այբբենարանս և զմի կանոն Սաղմոս: | | |
| 17. | Հոգաբարձու Ուսումնարանին Տիտուլեարնի Սովետնիկ Աղէքսանդր Թահիրեանց իւրովք ծախիւք վերստին ետ տպագրել յօգուտ Ուսումնարանին զԲարձրագոյն Մանիֆեստն շնորհեալ ազգիս Հայոց ի 1813 ամի ի Մեծափառ Կայսերէն Ռուսաց Աղէքսանդրէ առաջնոյ վասն գերագոյն հաստատութեան ազգիս Հայոց: | | |
| 18. | Կոմմերշեսկի Սովետնիկ Յովհաննէս Ստեփանեան Յօնանեանց զվեց | | |

| Թուահամարոյ։ | | Արծաթ Մանէթ | Կոպէկ |
|---|---|---|---|
| | հարիւր ութսուն և չորս հատ երկտեսակ գրեանս։ | | |
| | **'ի 1855 ամի** | | |
| 19. | Գ. Զլտրեցի Սոսիմաննոս քահանայն Փիլեանց յերկուս նուագս յիսուն մանէթ։ . . . . . . . . . | 50 | — |
| 20. | Կօլէժսկի Ասեսօր Ալէքսանդր Եղիազարեանց զերեք հարիւր մանէթ։ | 300 | — |
| 21. | Տփխիսայ քաղաքացի Նիկողայոս Գաբրիէլեան Շադինեանց զհազար մանէթ։ . . . . . . . . . | 1000 | — |
| | **'ի 1856 ամի** | | |
| 22. | Սարգիս Մ.եք Եպիսկոպոս Ջալալեանց 'ի ձեռն հանգուցեալ բարեյիշատակ Ներսիսի Հայրապետի վասն 'ի գործ դնելոյ 'ի վերայ շինութեան միոյ կրպակի հանդէպ հին Սեմինարանի։ . . . . . . . . . | 1·000 | — |
| 23. | Քաղաքացի Դաւիթ Գուլբուլեանց 'ի պէտս որդեգրաց վեց հարիւր երեսուն և եօթն գազ քաթան։ | | |
| 24. | Քաղաքացի Դաւիթ Գրիգորեան Իզմիրեանց կտակաւ նուիրեաց զերեք հարիւր մանէթ։ . . . . . . | 300 | — |

| Թւի-յօդուա-ծոյ։ | | Արժէք | |
|---|---|---|---|
| | | ռուբլի | կոպէկ |
| | **՚Ի 1857 ամի** | | |
| 25. | Քաղաքացի Աստուածատուր Մինասեան Սպարապետեանց ՚ի վախճանել իւր յԱղէքսանդրապօլիս քաղաքի կտակեաց յօգուտ Դպրոցին ՚ի յիշատակ հոգւոյ իւրոյ զերկու հազար մանէթ. զորս Հոգաբարձու Ուսումնարանին Աղէքսանդր Թահիրեանց գնացեալ յԱղէքսանդրապօլիս աւարտեաց զվէճն՝ որ վասն մնացուածոց հանգուցելոյն, և ստացեալ անտի զվերոյգրեալ դրամն՝ հասոյց Դպրոցին։ | 2000 | — |
| 26. | Տփխիսեցի Գաբրիէլ Ամիրաղեանց կտակաւ զհինգ հարիւր մանէթ . . | 500 | — |
| 27. | Հիտուլեարնի Սալէանիկ Յարութիւն Մարկոզամեանց կտակաւ քսան մանէթ։ . . . . . . . . | 20 | — |
| 28. | Քաղաքացի Յակոբ Միքայէլեան Զամօյեանց կտակաւ զհինգ հարիւր մանէթ. . . . . . . . . | 500 | — |
| 29. | Քաղաքացի Բաղդասար Աւետիքեան Սախտանդեանց կտակաւ չորս հարիւր մանէթ . . . . . . | 400 | — |
| 30. | Քաղաքացի Յարութիւն Օքսեանց կտակաւ (բաց յանշարժ կալից Տե՛ս յօդ. 49)։ զաւձեռն դրամս հազար երկու հարիւր ութսուն երեք մանէթ յիսուն կոպէկ . . . . . | 1283 | 50 |

| Թիւ յօդուածոյ։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ղրուշ | Փարայ |
| | 'ի 1858 ամի. | | |
| 31. | Նախկին որդեգիր Ուսումնարանին Մովսէս Իսահակեանց տասն ման։ | 10. | — |
| 32. | Տ.յրի Բեթէլեան Գէորգեան Մերիմանեանց ըստ կտակի հանգուցեալ առն իւրոյ Մէրոյի Մերիմանեանց 'ի յիշատակ նորա զհազար մանէթ։ | 1000 | — |
| 33. | Քաղաքացի Բաղդասար Խոսրովեանց 'ի յիշատակ հանգուցեալ կնոջ իւրոյ չորս հարիւր ման. . . . . | 400 | — |
| 34. | Քաղաքացի Գաբրիէլ Տ.բէլեան Շադինեանց զտասն և հինգ հատ ընտիր հայերէն գրեանս. | | |
| 35. | Քաղաքացի հանգուցեալ Բէշմիշեանց Յովսէփայ այրի Մարիամ 'ի յիշատակ առն իւրոյ զհարիւր յիսուն մանէթ. . . . . . . . . . | 150 | — |
| | 'ի 1859 ամի. | | |
| 36. | Տ.յրի Խամփէրի Զարդարեանց 'ի կենդանութեանն 'ի յիշատակ հոգւոյ իւրոյ զերկու հարիւր մանէթ։ . . | 200 | — |
| 37. | Քաղաքացի Ամիրաղեանց Գէորգայ այրի Բեթէլեան կտակաւ զերեք հարիւր մանէթ. . . . . . . | 300 | — |
| 38. | Քաղաքացի Գաւիթ Գուլուլեանց 'ի շինութեան կրպակաց՝ որ հանդիպոյ հնոյ Ուսումնարանին վասն միոյ կրպակի երկրորդի կարգաւ և նորին նեքե- | | |

| Թուեա- յօրագրա- ծոյ։ | | Արծաթ | |
| --- | --- | --- | --- |
| | | ռուբլի | կոպէկ |
| | Նաատան 'ի կողմանէ կրպակացն պարոն Պ. ամբարեանց զհազար հինգ հարիւր մանէթ այնու պայմանաւ, զի արդեամբք նոյն կրպակին պահպանեսցի և ուսցի 'ի Դպրոցին որդեգիր մի անխափան 'ի յիշատակ տոհմին իւրոյ։ | 1,500 | |
| | **'ի 1860 ամի։** | | |
| 39. | Հանգուցեալ այրի Շուշանն Հախիջանեանց յիսուն մանէթ. . . | 50 | — |
| 40. | Կապիտան Պետրոս Սատաթեանց զտասն հատ «Կիրակոս Պատմագիր» կոչեցեալ գրեանս։ | | |
| 41. | Նորէ Սոլոմէն Սայիփեանց 'ի յիշատակ հանգուցեալ առն իւրոյ Սարգսի զերկու հարիւր մանէթ. . . | 200 | — |
| 42. | Քաղաքացի Զօհրաբ Նմիրաղեանց կտակաւ իւրով որ յ9 ն հոկտեմբերի 1859 ամի, աւանդեալ է յօգուտ Դպրոցին 'ի գոյից իւրոց զհինգ հազար մանէթ. զորս այրի նորա մուրհակաւ տուեալ Հոգաբարձութեանս՝ պարտաւորեալ հատուցանել սմին։ | 5000 | — |
| 43. | Քաղաքացի Զալբէկ Խարազեանց յիւրմէ սեփհականութենէ վըճարեաց զբոլոր ծախս նորոգ տպագրութեան եօթն հարիւր հատ Խորհրդատետրից յօգուտ Ուսումնարանին ընդ ամէնն հարիւր երեսուն ման։ | 130 | — |

| Թուե-յօրդու-ծոց։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| 44. | Սողոմոն Ջաւուշտրեանց կտակեալ է զերկու հարիւր մանէթ, որք տակաւին չեն ստացեալ 'ի ժառանգացն։ . | 200 | — |
| 45. | Սարգիս Եղիազարեանց կտակաւ զհինգ հարիւր մանէթ. զորս տակաւին չեն վճարեալ ժառանգք նորա։ . . | 500 | — |
| 46. | Տիտուլեարնի Սովետնիկ Աղէքսանդր Թահիրեանց Հոգաբարձու Ուսումնարանին 'ի յիշատակ երեց որդւոյ իւրոյ Քրիստափորի առաքեցելոյ 'ի Ռուսաստան յուսումնաւութիւն՝ իւրովք ծախուք բերել տայ 'ի պէտս Ուսումնարանին զմի ձեռք «Ճռաքաղ» անուանեալ ամսագիրն Մսերեանց։ | | |
| 47. | Պօրուչիկ Մովսէս Արապխանեան Զօհրաբեանց զտասն հատ «Պարապոյ ժամք» և զութն հատ «Շիլլօնեան Կալանաւոր» անուանեալ տետրակս։ | | |
| | 3. Նուիրատուք անշարժ կալուածոց։ | | |
| 48. | Ազնուական Գէորգ Մանդինեանց ընծայեաց զկտարկ տեղի մերձ դըպրոցապատկան այգւոյն Աղանլուխի։ | | |
| 49. | Քաղաքացի Յարութիւն Օքյեանց կտակաւ ընծայեաց զշարժական կայս իւր արժողութեամբ իբր 1500 մանէթի և զհինգ կրպակս հանդերձ | | |

| Թիւ յօդուածոյ. | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |
| | այլովք հին շինուածովք և դատարկ գետնով արժողութ̃ երեք հազար մանէթից, որք գտանին 'ի վերայ հեղեղատի Կուր գետոյ յ3 մասին 1 թաղի քաղաքիս Տփխիսայ № 1811, 1832, և 1843, յորոց գոյանան արդիւնք 'ի տարին ոչ աւելի քան զհարիւր յիսուն մանէթ 'ի պատճառս խախտեալ գոլոյ մեծի մասին այնոցիկ առ հնութեանն, որք և ունին պէտս մեծամեծ նորոգուե̃ց. | | |
| 50. | Զանգուցեալ Տփխիսայ քաղաքացի Մ.ետիք Փիրոյեանց կտակաւ ընծայեալ զիւր մեծակառոյց կրկնայարկ շինուածս բաղկացեալս 'ի բազում կրպակաց, սենեկաց և 'ի ներքնատանց, գտեալս 'ի Տափիթաղ կոչեցեալ տեղւոջ յ1 մասին 2 թաղի քաղաքիս Տփխիսայ № 270 և 356, յորոց գոյանայեն արդիւնք 'ի տարին 'ի կենդանութեան լուսահոգի Փիրոյեանցի իբր 1500 ման., իսկ այժմ մերով հոգատարութեամբ բերեն մինչև ցերիս հազար մանէթս. . . . . . . | | |

| Թիւ յօդուածոյ: | | Արժէք | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |
| | 4. Անուանք ազգասէր անձանց, որք ընդ ժամանակս ժամանակս նուիրեալ են Ուսումնարանին զհետեւեալ դրամս վասն պահպանելոյ և ուսուցանելոյ 'ի նմին զժառանգաւոր որդեգիրս 'ի հաշիւ իւրեանց 'ի մասին եկեղեցականութեան, 'ի 1851-էն մինչեւ ց1861 ամն: | | |
| 51. | Քաղաքացի Զօհրաբ Սահակեան Ամիրաղեանց վասն պահպանութեան միոյ որդեգրի 'ի կենդանութեանն ետ Ուսումնարանին զամս վեց մինչեւ ց1858 ամն 'ի տարին 60 մանէթ. ընդ ամէնն երեք հարիւր վաթսուն մանէթ. . . | 360 | — |
| 52. | Ժառանգական պատուաւոր քաղաքացի հանգուցեալ Գաբրիէլ Յովհաննիսեան Խամամջեանց 'ի պահպանութիւն երից որդեգրաց 'ի 1-էն յունիսի 1853 ամի ց1857 ամն ետ ընդ ժամանակս ժամանակս բոլորն ինն հարիւր իննսուն եւ մի մանէթ երեսուն երկու կոպէկ. . . . . . . | 991 | 32 |
| 53. | Կոլլեժսկի Ասեսոր կնեազ Գահրաման Գուլթեան երկայնաբազուկ Արղութեանց վասն պահպանութեան երից որդեգրաց 'ի 1852-էն մինչեւ ց1861 ամս ընդ ամէնն հազար իննսուն մանէթ, և զայսպիսի նուիրատուութիւն ունի շարունակել եւս. . . . . | 1090 | — |
| 54. | Կոլլեժսկի Ասեսոր Յովսէփ Յովհաննիսեան Աֆէնդեանց վասն պահ- | | |

| Թիւ յօդուածոյ. | | Արծաթ | |
| --- | --- | --- | --- |
| | | մանէթ | կոպէկ։ |
| | պանութեան միոյ որդեգրի զամս հինգ 'ի տարին 80 ման. ընդ ամենն չորս հարիւր մանէթ։ . . . . . | 400 | — |
| 55. | Հոգաբարձու Ուսումնարանին Տիտուլեարնի Ոսկէանիկ Աղէքսանդր Դողարեան Թահիրեանց վասն պահպանութեան հնգից որդեգրաց հետ զհետէ 'ի 1852-էն մինչև ց1861 ամ հազար երեք հարիւր ութսուն և երեք ման. երեսուն և երեք կոպ։ Երկուք 'ի յիշեալ որդեգրացն պ. Թահիրեանցի այժմ գտանին 'ի հոգևոր կոչման։ | 1383 | 33 |
| 56. | Հոգաբարձու Ուսումնարանին Տիտուլեարնի Ոսկէանիկ Դաւիթ Յովհաննիսեան Թամամշեանց 'ի կենդանութեան իւրում զամ մի և եթ վաթսուն մանէթ։ . . . . . | 60 | — |
| 57. | Ղզլարեցի երկրորդ գիլդիի վաճառական Մինաս Պետրոսեան Սամուէլեանց եդեալ է 'ի յայսկոյս Կովկասու Պրիկազն հասարակաց խնամատարութեան զհազար հինգ հարիւր մ. որպէս զի տարեկան տոկոսեօք նորին պահպանեսցի 'ի Դպրոցին մի որդեգիր։ | 1500 | — |
| 58. | Այրի Կատարինէ Լօռումելիքեանց 'ի յիշատակ հոգւոյ առն իւրոյ ազնուական Տարիէլի Լօռումելիքեանց վասն պահպանութեան միոյ որդեգրի 'ի մարտ ամսոյ 1853 ամի ցվերջն 1856 ամի 'ի տարին 100 մանէթ, բոլորն երեք հարիւր եօթանասուն և հինգ մանէթ։ . . . . . . . | 375 | — |

| Թիւ յօրինուածոց | | Արժէք | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |
| 59. | Գուբերնսկի սեկրետար Նիկողայոս Թումամշեանց 'ի յիշատակ հօր իւրոյ Տիտուլեարնի Սովետնիկ Գաւթի Թումամշեանց վասն պահպանութեան երկուց որդեգրաց զերիս ամս և եթ 'ի 24-էն սեպտեմբերի 1834 ամի մինչև ց1857 ամն 'ի տարին երկու հարիւր ման․ բոլորն վեց հարիւր ման. | 600 | — |
| 60. | Նախսաւէտապօլսեցի Պօղոս և Նազար Պետրոսեան Մելիքեանք նուիրեցին վասն պահպանութեան միոյ որդեգրի զամս չորս 'ի տարին 100 ման. բոլորն չորս հարիւր մանէթ. . . . | 400. | — |
| 61. | Ալեքսանդրապօլսեցի պատուաւոր քաղաքացի Կարապետ Գրիգորեան Սառաֆեանց վասն պահպանութեան միոյ որդեգրի ամ ըստ ամէ նուիրեաց ընդ ամէնն չորս հարիւր յիսուն ման. | 450. | — |
| 62. | Այրի Մարիամ Մէհրաբեանց համաձայն կտակի առն իւրոյ Մելքոյի Մէհրաբեանց հազար մանէթ, զորս և պահեաց առ ինքն այնու պայմանաւ, զի ցորչափ ժամանակս կենդանի իցէ ինքն, տացէ Ուսումնարանին զտոկոսիս այնր գումարի 'ի տարին հարիւր մանէթ վասն պահպանութեան միոյ որդեգրի, իսկ յետ մահուան իւրոյ եթէ ժառանգք իւր ոչ շարունակեսցեն զտուչութիւնն այնքան տարեկան տոկոսեաց, յայնժամ Ուսումնարանն առասցի 'ի նոցանէ զհազար մանէթ մայր դրամն, ըստ այսմ պայմանա- | 1000 | — |

| Թւա- յօրինուա- ծոյ: | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Մանէթ | Կոպէկ |
| | դրութեան յիշեալ այրին Մելքոյի Մէհրաբեանց 'ի 1854 ամէ սկսեալ մինչև ց1860 ամն վճարեաց Ուսումնարանին զտարեկան տոկոսիսն ընդ ամէնն վեց հարիւր եօթանասուն և հինգ մանէթ. զոր ունի շարունակել և յապայն: . . . . . . . | 675. | — |
| 63. | Մարիամ այրին Գաբրիէլի Փուղլինեանց 'ի յիշատակ առն իւրոյ զհազար մանէթ, յորոյ հաշիւ ուսաւ և պահպանեցաւ մի որդեգիր, և յետ արձակմանն ձեռնադրեցաւ 'ի քահանայ. | 1000 | — |
| 64. | Քաղաքացի Պաւլիթ Ստեփաննեան Գուլուլեանց 'ի մի նուագ նուիրեաց հազար մանէթ, յորոյ 'ի հաշիւ տոկոսեացն պահպանի մի որդեգիր. . . | 1000 | — |
| 65. | Աստիճանաւոր բժիշկ Ռոստոմ Նադիրեանց վասն պահպանութեան միոյ լիաթոշակ և միոյ կիսաթոշակ որդեգրաց 'ի հոկտեմբեր ամսոյ 1854 ամի մինչև ցվերջն 1859 ամի տուեալ է ընդ ամէնն երեք հարիւր ութսուն և ութն ման. երեսուն կոպէկ, զոր և շարունակելոց է. . . . . . . | 388. | 30 |
| 66. | Պ. գլարարնակ ազնուական Բօտմիստր Կարապետ Քալանթարեանց վասն միոյ որդեգրի յ30-էն ապրիլի 1855 ամի ց30-ն ապրիլի 1858 ամի 'ի տարին 100 մանէթ, բոլորն երեք հարիւր մանէթ. . . . . . . . . | 300. | — |
| 67. | Պատուաւոր քաղաքացի Գաբրիէլ Տէր Մելքոսէլեանց վասն միոյ որդե- | | |

| Թուե յօրդառա ծոյ։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | մանէթ | կոպէկ |
| | գրի 'ի 1-ին յենուարի 1856 ամի մինչև ցվերջն 1859 ամի առ մի ամն 100 մանէթ, բոլորն երեք հարիւր իննսուն և մի ման. վաթսուն և եօթն կոպէկ. զոր և շարունակելոց է. | 391. | 67. |
| 68. | Ժառանգական պատուաւոր քաղաքացի Սարգսան Արշակունի վասն միոյ որդեգրի 'ի 1-ին ապրիլի 1857 ամի ցվերջն 1861 ամի, բոլորն հինգ հարիւր տասն մանէթ, ութսուն և հինգ կոպէկ։ Նոյն զայսպիսի տուրս շարունակելոց է ևս. . . . . . . | 510 | 85 |
| 69. | Գաւառական Պրապօրշչիկ Աղեքսանդր Կաճկաճեանց վասն միոյ որդեգրի յ2-էն սեպտեմբերի 1857 ամի ցվերջն 1860 ամի 'ի տարին ութսուն ման. բոլորն երկու հարիւր վաթսուն և վեց ման. վաթսուն և վեց կոպէկ. այժմ ևս շարունակէ։ . . . . | 266 | 66 |
| 70. | Կօլլեժսկի Սեկրետար Ղևոնդ Գալստեան Տէր Մկրտչեանց վասն միոյ որդեգրի եա 'ի 1858 և 1859 ամս միայն երկու հարիւր մանէթ. . . | 200 | — |
| 71. | Քաղաքացի Յարութ Մռտաղեանց վասն միոյ որդեգրի 'ի 1-ին յենուարի 1858 ամի ցվերջն 1860 ամի եա առ մի ամն հարիւր ման., բոլորն երկու հարիւր իննսուն և մի ման. վաթսուն և եօթն կոպէկ, զոր և շարունակէ. | 291 | 67 |
| 72. | Քաղաքացի Իսահակ Մարտիրոսեան Թանդըլեանց վասն միոյ որդե- | | |

| Թւէ յօդուածոյ։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ռուբլ | Կոպէկ |
| | դրի եւ 'ի 1 ոյն մայիսի 1658 ամի ցըն-վերջն 1859 ամի հարիւր վաթսուն և վեց մանէթ վաթսուն և վեց կոպէկ։ | 166 | 66 |
| 73. | Քաղաքացի Սողոմոն Մովսիսեան Խաստամանեանց վասն միոյ որդեգրի 'ի 1-ոյն յունվարի 1858 ամի ց1861 ամն առ մի տարին հարիւր ման. բոլորն երեք հարիւր մանէթ. . . . . | 300 | — |
| 74. | Սարիճանաւոր Մելքոն Տէր Ղուկասեանց վասն միոյ որդեգրի 'ի 1-ոյ ապրիլի 1859 ամի ցվերջն դեկտեմբերի 1861 ամի 'ի տարին հարիւր մանէթ, բոլորն երկու հարիւր եօթանասուն և հինգ ման. զոր և շարունակելոց է։ | 275 | — |
| 75. | Պ. զւարեցի 2-րդ գիլդիի վաճառականի որդի Եսայի Աստուածատրեան Իզմիրեանց վասն 2-ուց որդեգրաց եւ 'ի 4-էն յունիսի 1859 ամի ցվերջն 1861 ամի ընդ ամենն չորս հարիւր իննսուն և ութն մանէթ երեսուն երեք կոպէկ. . . . . . . . . . | 498 | 33 |
| 76. | Ժառանգական պատուաւոր քաղաքացի Նիկողայոս Յովսէփեան Միրիմանեանց վասն միոյ որդեգրի 'ի 1860 ամի հարիւր քսան մանէթ. . . . | 120 | — |
| 77. | Կոմմերչեսկի Սովետնիկ Յովհաննէս Ստեփանեան Յոնանեանց եւ վասն միոյ որդեգրի 'ի 1-ոյ յունվարի ցվերջն 1861 ամի հարիւր քսան մանէթ, շարունակելոց է. . . . . . . | 120 | — |

| Թւե-յօրինա-ծոյ։ | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |
| | 5. Ձրիաբար ծառայողք յօգուտ Ուսումնարանի զանազան պաշտօնիւք։ | | |
| 78. | Հոգաբարձութեան պաշտօնակատարութեամբք առանց երբէք վարձու։ | | |
| | ա. Հանգուցեալ Տիտուլեարնի Սօվէտնիկ Գուլիթ Թամամշեանց յ9-էն մարտի 1851 ամի ց1 սեպտեմբերի 1853 ամի։ | | |
| | բ. Տիտուլեարնի Սօվէտնիկ Աղէքսանդր Թահիրեանց յ8-էն սեպտեմ. 1853 ամի ցվերջին ամիսս 1861 ամի։ | | |
| | գ. Պրապորշչիկ Գէորգ Մանդինեանց յ9-էն մարտի 1851 ամի ցվերջին ամիսս 1861 ամի։ | | |
| | դ. Ազնուական Գուլիթ Խերոդինեանց յ3-էն մարտի 1851 ամի ցվերջին ամիսս 1859 ամի։ | | |
| 79. | Կօլլեժսկի Սօվէտնիկ բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեան Յովհաննիսեանց յ9-էն մարտի 1851 ամի մինչև ցայժմ վարէ զպաշտօն բժշկի Հիւանդանոցի Ուսումնարանին։ | | |
| 80. | Նադվօրնի Սօվէտնիկ և Ասպետ Յովհաննէս Ղազարեան Ղայթմազեանց պաշտօնիւ Տեսչի Ուսումնարանին 'ի 1-ուն յունվարի 1859 ամի ցըսկիզբն 1861 ամի։ | | |
| 81. | Արապիոն աւագ քահանայ Տէր Մովսիսեանց, Սարգիս քահանայ Տէր Յա- | | |

| [illegible] | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | ռուբլի | կոպէկ |
| | րուֆեանց պաշտօնիւ վերատեսչի աւագ պահարանին մոմավաճառութեան 'ի 1851 ամէ ց7-ն մարտի 1858 ամի. | | |
| 82. | Օհնի Նոյա Իսահակ աւագ քահանայ Սահառունի յ7-էն մարտի 1858 ամի մինչև ց1-ն մայիսի 1860 ամի. | | |
| | Ղազար աւագ քահանայ Պրութեանց ուսուցչութեամբ երաժշտութեան 'ի 1851 ամէ ց1855. | | |
| 83. | Նեռոէք աւագ քահանայ Պողոսեանց ընդ ժամանակս ժամանակս ըստ յանձնարարութեանց Հոգաբարձութե հաւաքեալ է զկամաւոր նուէրանս յօգուտ շինութեան ոմանց ուխտատեղեաց և զպարաուիկս Ուսումնարանին. | | |
| 84. | Յակոբ քահանայ Զառափեանց պաշտօնիւք՝ վերատեսչի շինութեան նորոց կրպակաց հանդէպ հին Ուսումնարանին 'ի 1858 ամէ մինչև ց1860 ամն, և վերակացուի բոլոր կալուածոց եղելոց շուրջ զՈւսումնարանաւ 'ի 1-ոյն յուլիսի 1860 ամի մինչև ցայսօր. | | |
| 85. | Յովհաննէս քահանայ Տէր Սարգսեանց վերատեսչութեամբ մոմավաճառութեան կրպակաց Տփխիսայ 'ի 1853 ամէ մինչև ցարդ. | | |
| 86. | Կարապետ քահանայ Տէր Գրիգորեանց վերակացութեամբ կալուածոց կտակելոց յՕքսեանցէ 'ի 1859 ամէ մինչև ցարդ. | | |
| 87. | Յովհաննէս քահանայ Տէր Պետ- | | |

| Թիւ յօդուածոց. | | Արժէք | |
|---|---|---|---|
| | | մանէթ | կոպէկ |
| | րոսեանց վերակացութեամբ այգւոյն Սօղանլուխի 'ի 1-ոյն յունվարի 1859 ամի մինչև ցայժմ. | | |
| 88. | Տփխիսայ քաղաքացի Ղազար Ոսմիկեանց երեսփոխանութեամբ Կըրծանիսու Գէորգաւանից ուխտատեղւոյն և վերակացութեամբ շինութեանց նորին 'ի 1851 ամէ ցարդ. | | |
| 89. | Եսայի քահանայ Մեհրաբեանց վերատեսչութ. ուխտատեղեացն Թեկէթի և Ղահնաքաթի և շինութեանց նոցին. 1, 'ի 15-էն յունիսի 1851 ամի ց15-ն սեպտեմբերի 1856 ամի. 2, 'ի 28 էն մայիսի 1857 ամի ցվերջըն 1858 ամի. և 3, 'ի 11-ոյն փետրվարի 1860 ամի ցներկայ 1861 ամս. | | |
| 90. | Գէորգ քահանայ Տէր Գալստեանց վերատեսչութեամբ շինութեանց և նորոգութեանց փոշտայի տան և նորակառոյց կրպակաց 'ի 1855-էն մինչև ց1860 ամն. | | |
| 91. | Գէորգ քահանայ Թէմուրազեանց վերակացութեամբ սբ Գէորգայ մասանց Դաշտի Խաչի 'ի 15-էն հոկտեմբերի 1859 ամի մինչև ցարդ. | | |
| 92. | Կարապետ քահանայ Մատինեանց վերատեսչութեամբ մոմավաճառութե և ուխտատեղեաց Ելիսաւետապօլոյ 'ի 1851 ամէ ցարդ. | | |
| 93. | Աստուածատուր քահանայ Մամաջանեանց և Գէորգ քահանայ Տէր Սարգսեանց վերատեսչութեամբ ուխ- | | |

| Թւա-կանու-թիւն | | Արծաթ | |
|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կոպէկ |
| | տատեղեաց և մամալաճառութեանց Թէկլաւի, առաջինն 'ի 1853 ամէ, և երկրորդն 'ի 1859 ամէ մինչև ց1861 ամս : | | |
| 94. | Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփաննոսեանց վերատեսչութեամբ մամալաճառութեան և ուխտատեղեաց Սղնախի 'ի 1855-էն ց25 յունիսի 1860 ամի: | | |
| 95. | Դաւիթ քահանայ Նարալեանց օգնականութեամբ վերատեսչի մամալաճառութեան և ուխտատեղեաց Գօրւոյ 'ի 1856-էն ց1859 ամն. և 'ի նոյն ամէ վերատեսչութեամբ մինչև ց1861 ամս. | | |
| 96. | Երեցփոխանն Դուշէթու Հայոց եկեղեցւոյ Միքայէլ Տէրտէրեանց յ30-էն ապրիլի 1855 ամի մինչև ցարդ վերատեսչութեամբ սուրբ Գէորգ Ուխտատեղւոյն Իւրեանց. | | |

## Պատճէն Հրամանագրի Սրբազան Սինօդին որոյ Էջմիածնի առ Կոնսիստորիայն Հայոց Վրաստանի 'ի 17 ապրիլի 1842 ամի, համար 763։

'Ի Սինհոդոսէ շնորհ պաշտօնագրեամբ 'ի տեսչէն Հայոց Ուսումնարանին Թիֆլիզայ՝ հոգեւոր Ճեմարանի վերակացուէ ելոյ. վասն որոյ ըստ ՀՐԱՄԱՆԻ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ 'ի հաւաքեալ 'ի մասին պատկանելութեան Հոգեւոր Տեսչութեան նախկին Ուսումնարանին Հայոց Թիֆլիզայ, այժմ անուանելոյ Հոգեւոր Ճեմարան՝ ծանօթութեանցն, 'ի վեր անդր մանրամասնաբար գծագրելոց՝ տեսանի. 1. թէ յիշեալ Ուսումնարանն հիմնարկեալ է 'ի 1821 ամի և աւարտեալ է շինութեամբն 'ի նախկին Առաջնորդէն Վրաստանի, յԱրք Եպիսկոպոսէն Հայոց Ներսիսէ ծախիւք Պատրիարքական Աթոռոյն Էջմիածնի և եկեղեցեացն Հայոց Թիֆլիզայ, մասամբ և աննշանաւոր իմն ձեռնտուութեամբ ժողովրդականացն Հայոց Վրաստանի. 2. Կառուցեալ է այն 'ի վերայ հողոյն պատկանելոյ Վանքի եկեղեցւոյն Տփխիսայ. 3. Յայս Ուսումնարան՝ նախակարգեալ 'ի յիշեալ Արք Եպիսկոպոսէն վասն հոգեւոր Ճեմարանի՝ 'ի սկզբան անդ բացման այնորիկ ընկալեալ լինէին տնօրէնութեամբ Նորին Բարձր Սրբազնութեան բաց 'ի մանկանց հոգեւորական վիճակի և որդիք անձանց ամենայն կացութեանց յաշխարհական կոչմանէ այնու միայն դիտաւորութեամբ, զի յայնժամ բաց 'ի յաղնուական Ուսումնարանէն Թիֆլիզայ անուանելոյն ապա Ճեմարան, յոր ընկալեալ լինէին մի-

այն որդիք յազնուական տոհմէ, չէին տակաւին բացեալք ազգային Ուսումնարանք 'ի Վրաստանի. 4. Յապաղութիւն պատկանելութեան յիշեալ Ուսումնարանին Հոգեւոր Տեսչութեան, կառուցման և պահպանութեան այնորիկ արդեամբք Ս. Աթոռոյս Էջմիածնի և եկեղեցեացն Հայոց Թիֆլիզայ կարեն լինել յետագայ հանգամանք. ա. 'ի ժամանակի հիմնարկութեան և շինութեան այսր հոյակապ շինուածոյս՝ բարեյիշատակ Կաթուղիկոսն ամենայն Հայոց Եփրեմ՝ պարտաւորեալ գոլով 'ի նեղսակութեանց անտի նախկին կառավարութեանն Պարսից հեռանալ 'ի կաթուղիկոսական Ս. Աթոռոյն Էջմիածնի 'ի Վրաստան և Ս.րք Եպիսկոպոսն Ներսէս ունելով 'ի Նորին Վեհափառանութենէ զկատարեալ իշխանութիւն կառավարելոյ զըգիւղս յիշեալ Ս. Աթոռոյն, ստանայր 'ի զանազան տեղեաց՝ եղելոց 'ի տէրութեան Ռուսաց և արտաքոյ սահմանի այնորիկ, զմեծամեծ գումարս դրամոց՝ պատկանելոց Էջմիածնի, 'ի կեր ածելով զայնոսիկ, որպէս 'ի պաշտպանութիւն Կաթուղիկոսին և ընդ նմա եղելոցն բազմաց, նոյնպէս և 'ի շինութիւն յիշեալ Ուսումնարանին, զոր մարթ է տեսանել և 'ի գրութենէ յիշեալ Ս.րք Եպիսկոպոսին առ նախկին գլխաւոր Կառավարիչն Վրաստանի՝ Գեներալ Երմոլովն 'ի 16 մայիսի 1824 ամի. համար 126. բ՛, 'ի ժամանակի կառավարութեան Ս.րք Եպիսկոպոսին Ներսիսի Թեմին Հայոց Վրաստանի մայր գումարք դրամոց և արդիւնք եկեղեցեացն Հայոց. տեղւոյն գոլով յանընդմիջական իշխանութեան նոյն Ս.րք Եպիսկոպոսին առանց իւիք հաշուատուութեան ումեք, ըստ անօրէնութեանց Նորին Բարձր Արքայնութեան 'ի կեր ածեալ են մեծամեծ գումարք յեկեղեցական դրամոց աստի 'ի վերջաւորութիւն շինութեան յիշեալ Ուսումնարանին և 'ի պաշտպանութիւն այնորիկ. գ. Ազնուականք և վաճառականք Հայոց Վրաստանի թէպէտ և հաղորդ են գտեալ 'ի շինութեան Հոգեւոր Ուսումնարանին մասնաւոր սակաւաթիւ նուիրանօք և ժողովարարութեամբ նուիրանաց կարգեալ գանձանակացն յեկեղեցիս, այլ սոյնօրինակ ձգտումն նոցա յօգուտ աստուածահաճոյ շինուածոյն, ըստ շաւղաց Ջերմեռանդ նախ-

նեայցն իւրեանց, ոչ տայ նոցա զիրաւունս ստորագրելոյ զհոգևորական շինուածս ներգործութեան և տեսչութեան նուիրողաց: Է. Հոգևոր Ուսումնարանն Հայոց Թիֆլիզայ յաւարտիլ շինութեանն 'ի ժամանակս կառավարութեան յիշեալ Արք Եպիսկոպոսին հոգևորական գործոցն Հայոց 'ի Վրաստան՝ հանապազ ստանայր զդրամս 'ի պաշտպանութիւն իւրեանց յարդեանց եկեղեցեացն Թիֆլիզայ. և մանաւանդ երկուց ուխտատեղեացն նոյն քաղաքի. իսկ 'ի փոխելն յիշեալ Արք Եպիսկոպոսին 'ի վիճակն Հայոց Բեսարաբիոյ և 'ի նշանակել Առաջնորդ Վրաստանի ներկայ Կաթուղիկոսիս ամենայն Հայոց Յովհաննու, ըստ տնօրէնութեան Նորին Վեհաստիճանութեան. ընդ որ հաւանեալ էր Տ. Գեներալ Ֆելդմարշալ Իշխանն Վարշաւու և կոմն Երևանու Պասկեւիչ, յանձնեցաւ այն հոգաբարձութեան կազմեալ յայնժամ առանձին Կոմիտետի վասն բարեկարգութեան նոյն Ուսումնարանին ընդ Գլխաւոր հսկողութեամբ Թեմական Առաջնորդին Վրաստանի, յորմէ և տուեալ էին Կոմիտետին այնմիկ կանոնք 19 պարբերութեամբք յ3 փետրվարի 1831 ամի: Յիշեալ Կոմիտետն տեսեալ զանկարելութիւն մատակարարելոյ զնունդ պաշտպանութեան յիշեալ Ուսումնարանին առանց նպաստաւորութեան յարդեանցն եկեղեցեաց՝ խնդրեաց առ այն զլուծումն Նորին Վեհաստիճանութեան առաջարկութեամբ 'ի 17 օգոստոսի նոյն 1831 ամի համար 43. ընդ որ Նորին Վեհաստիճանութիւնն առաջադրութեամբ 'ի 19 նոյն օգոստոսի նուիրեալ յօգուտ նոյն Ուսումնարանին զկտակեցեալ յԱրք Եպիսկոպոսէն Ներսիսէ արդեամբք Էջմիածնի և եկեղեցեացն Թիֆլիզայ Քարվանսարայն 'ի վերայ եկեղեցական հողոյ, որ հանդէպ նոյն Ուսումնարանին, արգել Կոմիտետին ձեռնամուխ լինել յարդիւնս եկեղեցեաց. և Ե). Կոմիտետն վասն բարեկարգութեան յիշեալ Ուսումնարանին ստանալով զարդիւնս վերնայարկ տանն այն Վաճառանի, 'ի կրպակաց և 'ի սենեկաց Քարվանսարային, այդուոյն Ողջանլուղոյ և 'ի կտակէ հանգուցեալ Ազնուական Գէորգայ Արծրունւոյ 150 մանէթս 'ի տարին, բոլոր 3452 մանէթս արծաթոյ

'ի տարին, հաստուցանէր 'ի դրամոց առոլի զմնունդ Ուսում-
նարանին մինչև ցբանիլ 'ի Վրաստան հոգունակութեամբ
բարերար Տէրութեանն վասն որդւոց ամենայն վիճակի և
կոչման ազգային և մանաւոր Ուսումնարանաց, ուրանոր
'ի Թիւս այլոց մատակարարի և լեզու Հայոց. այլ Ան-
դամք Կոմիտէին ջանացեալ գոլով ոմանք պարտաւորու-
թեամբք ծառայութեան, և այլք առևտրական և այլովք
սեփական պարապմամբք, այսու պատճառաւ չկարացին 'ի գործ
դնել զպարտաւորութիւն հոգաբարձութեան վասն բարեկարգութեան
չէալ Ուսումնարանին, այլ վասն և 'ի միասին ընդ Բոլորեան
Բոյլարբէկեյ 'ի հրամանէ Նորամոյն 'ի ձեռին կարևորին վասն այնո-
րէն խնամածութեան, ստացեալ և միջոցին կարևորն 'ի պաշտ-
պանութիւն Վարժարանին և յայսօրինակ դրութեան Ու-
սումնարանին եւ Բարձրագոյն Հաճութիւն 'ի մասին այ-
լափոխելոյ զձև կառավարութեան հոգևորական գործոց
Հայաստանեայց եկեղեցւոյ 'ի Ռուսաստան, գծագրեալն 'ի
Կարգադրութեան 11 մարտի 1836 ամի. Վեհաստիճան Կա-
թուղիկոսն ամենայն Հայոց տեսանելով զխանդարեալ դը-
րութիւն Ուսումնարանին Հայոց Տիփլիզայ՝ և հրահան-
գելով 8 գլխով յիշեալ կարգադրութեան ըստ նախըն-
թաց Թղթակցութեան յամսեանն օգոստոսի 1836 ամի
ընդ ձեռն նախկին գլխաւոր Կառավարչին Վրաստանի ընդ
Խնամարարութեանն ներքին գործոց, առաջադրութեամբ 'ի
19 մայիսի 1837 ամի համար 257. յանձնեաց Թեմական
Արք Եպիսկոպոսին Կարապետի ընդ մտանել 'ի կառա-
վարութիւն յանձն եղեալ նմա Թեմին, իսկոյն ընկալնուլ
յիւր տեսչութիւն 'ի յիշեալ Կոմիտէէն զՈւսումնարանն
Հայոց, զոր համաձայն նախանշանակութեան այնորիկ
դարձուցանել 'ի Հոգևոր Ճեմարան, և 'ի միասին ընդ
այնմիկ փակեալ զԿոմիտեան՝ ստանալ յիւր տեսչութիւն
զամենայն գործս այնորիկ և զամենայն պատկանեալսն Ու-
սումնարանին, զորմէ նոյն իսկ Թիւ համար 259, հաստու-
ցաւ 'ի ծանօթութիւն նախկին գլխաւոր Կառավարչին Վը-
րաստանի. Առ որ Թէ և ստացաւ յԱրք Եպիսկոպոսէն
Կարապետէ կատարողական յայտարարութիւն 'ի 21 մայի-
սի 1838 ամի համար 239. յարակցելով Թէ՝ յիշեալ

Կոմիտեան յանձնեալ է Նորին Բարձր Սրբազնութեան զՈւսումնարանն 70 աշակերտօք և 7 ուսուցչօք, այլ զգործս և զծախս վեցամեայ կառավարութեան այնորիկ յիշեալ Վարժարանին ոչ կարաց ստանալ, այլ 'ի ստանալ Կաթողիկոսին ամենայն Հայոց զգրութիւն տեառն Գլխաւոր Կառավարչին Վրաստանի 'ի 20 մայիսի նոյն 1838 ամի համար 4,743, որ պահանջէրն Թողուլ զայն Ուսումնարան 'ի նախկին դրութեան իւրում ցուցարար գործոյն 'ի Նախարարութիւնն ներքին գործոց, որ ըստ առանձին նախենթադրութեանց՝ 'ի մասին յիշեալ Ուսումնարանին՝ Թողեալ են յայնմ վասն ուսմանց որդիք անձանց զանազան վիճակի և կոչման: Տ. Գլխաւոր և եկամտական աղբերք արդիւնաբերք յիշեալ Ուսումնարանին են այսոքիկ. նուիրեալ 'ի 1831 ամի 'ի Մեծափառեան Կաթողիկոսէն ամենայն Հայոց Քարվանսարայն, որ պարունակէ զ36 կրպակս և զ10 սենեակս, որք բերեն զարդիւնս 'ի չափ 840 մանէթից 'ի տարին 'ի պատճառս գոլոյ այսր քարվանսարայի յարուարձանի քաղաքին Թիֆլիզոյ՝ ոչ յարաժամ 'ի վարձու լինին ամենայն կրպակքն այնորիկ. Նոյնւ այգիք՝ մին մեծ 'ի գեղջն Սօղանլուխ նուիրեալ 'ի հանգուցեալ զեներալ մայեօր Կնեազ Օթարէ Ամիլախվարեանց, որ տայ արդիւնս զ200 մանէթս 'ի տարին. իսկ միւս փոքրն 'ի Թիֆլիզ նուիրեալ է յԱզնուականէ Ահմեդանց, այլ ոչինչ արդիւնս բերէ տակաւին 'ի պատճառս նորատունկ գոլոյն և մատղաշութեան ծառոց պտղաբերից և որթոց խաղողոյ. և ստացեալ դրամքն 'ի վերնայարկէն յիշեալ Ուսումնարանին տուելոյ 'ի վարձու վասն Ազնուականաց Ժողովոյն Թիֆլիզոյ 900 մանէթից 'ի տարին, ընդ ամէնն 1940 մանէթ արծաթոյ 'ի տարին. Բայց քան զայս յորդեան ժամանակի Հոգևոր Ճեմարանն չունի զայլ արդիւնս և այսու իսկ պատճառաւ ըստ միջնորդութեան Կարապետ Արք Եպիսկոպոսին Թոյլատրեալ էր հրամանաւ լուսաւորչական Հայոց Սինոդոսի Էջմիածնի ցուցանել զնպաստ օգնականութեան յիշեալ Ճեմարանին յորդեանց անտի մոմավաճառութեան եկեղեցեացն Թիֆլիզոյ յ1 յունվարի արդէնընթաց ամի, զորմէ հասուցեալ

է ՚ի ծանօթութիւն Նախարարութեանն ներքին գործոց ՚ի ձեռն տեառն գլխաւոր կառավարչին Սրբատանի առաջարկութեամբ ՚ի 6 օգոստոսի 1838 ամի, համար 877.

6.) Սանեցի հայազգի մահտեսի Գասպարն Զարխչեանց ՚ի 12 նոյեմբերի 1824 ամի կտակեալ է յօգուտ յիշեալ Ուսումնարանին զ՚4600 մանէթս արծաթոյ: Այսոքիկ դըրամք մնալով ՚ի տեսչութեան կտակակատարացն յիշեալ Զարխչեանի Ազնուականին Արծրունւոյ և Թիֆլիզեցի քաղաքացւոյն Շերմազանի Սարգսեանց թէ որքան են աճեալ դրամքն այնուհետև տոկոսեօք, չէք ինչ ինչպէս յայտնի տակաւին զայնմանէ Ս. Էջմիածնի Իշխանութեանն Սրբատանի, զի որովհետև գործն յաղագս այսորիկ չէ աւարտեալ ՚ի Կոնսիստորիայի Սրբատանի ՚ի պատճառս ոչ կատարելոյ Ռուսաքական Պօլիցիայի Թիֆլիզայ զբաղմանեմի պահանջմունս այդորիկ ՚ի մասին առնլոյ զմնացամասն հաշիւ այնոցիկ դրամոց ՚ի ժառանգաց յիշեալ կտակակատարացն Զարխչեանի, նոյնպէս և ՚ի պատճառս ոչ ըստանալոյ զգործս նախկին Կոմիտետին չէք ընաւ ծանօթութիւն ինչ ոչ ՚ի Սինհոդոսի Էջմիածնի և ոչ ՚ի Կոնսիստորիայի Սրբատանի՝ թէ ո՞ր արդեօք գտանի առ ձեռն գումար դրամոց յիշեալ Ուսումնարանին, որ համարի, որպէս տեսանի այս ՚ի գրութենէն տեառն Ստիկանին Թիֆլիզայ ՚ի 28 փետրուարի 1839 ամի համար 1733, 1140 մանէթ արծաթոյ, որք տան ՚ի շահումն տոկոսեօք, և ստանի՞ն արդեօք ՚ի Գէորգեայ յաւագ քահանայէ Թէլէթու Մէհրաբեանց՝ 20 մանէթքն և ՚ի պօղպօլկովնիկէն Արծրունւոյ 150 մանէթքն արծաթոյ յամի ամի, որք կըտակեալ են ՚ի հօրէ նորա յօգուտ Ուսումնարանին և ապահովեա՞լ է արդեօք հոգևոր ուսումնարանական գոյքս այսորիկ օրինաւոր նախազգուշութեամբ առ ամբողջութեամբ պահպանելոյ զայնոսիկ թէ ոչ. և բաց յայսմանէ չէ յայտնի Հոգևոր Իշխանութեանդ, թէ որո՞վ հիմնաւորութեամբ և որո՞վ պայմանաւ պարտին մնանել յօգուտ յիշեալ Ուսումնարանին 8000 մանէթքն արծաթոյ զինի մահուան այրւոյ քաղաքացւոյն Խստախոսեայ. և առ ո՞վ գտանին Սըկայագիրքն բոլոր վերոյգրեալ գումարացն դրամոց յիշեալ

Ճեմարանին. 7. Տպարանն Հայոց կազմեալ 'ի հանգուցեալ Ազնուականէ Գէորգայ Արծրունւոյ յօգուտ յիշեալ Ուսումնարանին, որ 'ի վախճանի կատարելագործեալ է և բարեկարգեալ արդեամբք Աթոռոյս Էջմիածնի և եկեղեցեացն Հայոց Թիփլիզայ, կայր ընդ անընդմիջական իշխանութեամբ Հոգևոր Իշխանութեանդ Վրաստանի, որ յետոյ անօրէնութեամբ Վեհաստիճան Կաթուղիկոսին ամենայն Հայոց յանձնեալ էր 'ի միասին ընդ Ուսումնարանին հոգունակութեան Կոմիտէտին վասն բարեկարգութեան նոյն Վարժարանի. այլ յընթացս բոլոր ժամանակին շարունակութեան գործառնութեան Կոմիտէտին կալով յանգործութեան և ոչինչ օգուտ բերելով Ուսումնարանին 'ի վերջն 1841 ամի ըստ անօրէնութեան Վիճակային Իշխանութեանդ Հայոց Վրաստանի, հաստատելովն 'ի Սինհոդոսէս Էջմիածնի՝ եդեալ է 'ի գործ, որ վասն և մարթ է ակնունել, զի ժամանակաւ արդիւնաւորեսցէ այն զմեծագոյն օգուտ վասն Հոգևոր Ճեմարանին Հայոց: Նու 8 Հոգևոր Ճեմարանն Թիփլիզայ 'ի պատճառս սակաւութեան միջոցաց յարդեան ժամանակի, բաժանի յերկուս դասատունս, յորում ուսուցիչքն են 7. և մի վերատեսուչ, մատակարարին լեզուք երկու՝ Ռուսաց և Հայոց, առարկայք ուսմանն՝ այժմ մատակարարեալք յայնմ են՝ 'ի հայ լեզու հարուստ Քրիստոնէական Վարդապետութիւն, Աստուածաբանութիւն, Քերականութիւն, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Ազգային Պատմութիւն Հայոց և Հոգևոր Երգեցողութիւն. 'Ի լեզու Ռուսաց՝ Վայելչագրութիւն, Քերականութիւն, Ճարտասանութիւն, Գործնական փիլիսոփայութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Ընդհանուր պատմութիւն և Թարգմանութիւն 'ի Ռուսաց լեզուէ 'ի հայ բարբառ և անդրադարձն. Իսկ Թիւ ուսանելեացն 'ի Ճեմարանի անդ է 160, յորոց 83 են 'ի հոգևորական կոչմանէ, 3 յազնուականաց, իսկ 74 'ի հասարակ վիճակէ. Համեմատեալ զամենայն զվերոյգրեալ համեմատ ընդ պահանջմանն՝ նշանակելոյ 'ի գրութեան անդ տեառն Ռոտիկանին Թիփլիզայ 'ի 28 փետրվարի 1839 ամի, համարաւ 1783 Սին-

հոդոսս Էջմիածնի գտանէ, թէ շինուածն նախկին Ուսումնարանին Հայոց Թիֆլիզայ, կառուցելոյ ծախելով 'ի վերայ այնորիկ զմեծամեծ գումարս դրամոց յորդւոց Աթոռոյս Էջմիածնի եւ եկեղեցեաց Հայոց Թիֆլիզայ, նոյնպէս անշարժ կալուածք եւ մայր գումարք դրամոց, նուիրեալք յիշեալ Ուսումնարանին 'ի Վեհաստիճան կաթողիկոսէն ամենայն Հայոց Յովհաննու եւ յայլոց անձանց կտակելով զաննահանջելի սեփհականութիւն եկեղեցական, ոչ կարեն համարիլ հասարակական պատկանելիք քաղաքին Թիֆլիզայ. բայց յայտնանէ ունելով 'ի նկատման եւ զայն եւս, թէ նոյն ինքն արդիւնքն իսկ Էջմիածնի եւ եկեղեցեաց Հայոց Ռուսաստանի յառաջ գան 'ի միակ աղբերէ անտի՝ 'ի ջերմեռանդ նուիրանաց Հայոց տեղւոյն եւ եղելոյ արտաքոյ սահմանի Տէրութեան մերոյ, թէպէտ եւ Վեհաստիճան կաթողիկոսն ամենայն Հայոց եւ Սինհոդոս Էջմիածնի ձգտելով առ միակ նպատակն լուսաւորելոյ զհամբաւս Հայոց 'ի հոգեւորական եւ 'ի քաղաքական մասին, զնախենթադրութիւնն կազմելոյ զհաստատուն արուեստից վաճառականութեան 'ի Ճեմարանին Թիֆլիզայ օգտաւէտ համարին, եւ ը̅ ամենայնի համաձայն ընդ արդեան հասարակութեան վաճառականութեանն Թիֆլիզայ, այլ ընկալեալ 'ի մտադրութիւն զմիջոցս Հոգեւոր Ճեմարանին Ռուսաստանի, որք ստանան յանշարժ կալուածոց այնորիկ, Սինհոդոս արդարապէս պարտաւորի ասել թէ, եթէ կէս մասն յիշեալ միջոցաց նշանակեսցի վասն սահմանելոյ զյիշեալ հաստատունն, յայնժամ միւս կէսն ոչ թէ անհնարին լիցի հասուցանել Ճեմարանին զկարեւորն եւեթ պաշտպանութիւն, այլ եւ հազիւ ուրեմն մարթ իցէ 'ի ձեռս բերել եւս եւ զվայելուչ իսկ տեղի վասն այնորիկ. ոչինչ ասելով զայնմանէ, թէ՝ եթէ եւ վաճառեսցի սեփհականութիւն Ճեմարանին, 'ի գին այնորիկ ստացեալ դրամքն 'ի միասին ընդ մայր գումարացն տացին 'ի մին 'ի շինուածոց դրամափողքն, անհնարին լիցի բնաւ ին արդեամբք միոյ կիսոյ տոկոսեացն պաշտպանել զնախենթադրեալ հաստատունն արուեստից վաճառականութեան. Ուստի բաց այսոցիկ հանգամանաց Սինհոդոս Էջմիածնի ոչ հայեցեալ ընդ ամե-

նոյն յանկութիւնս իւրոց բաղձանաց տալոյ զկարելութիւն հաստատուն վաճառականաց քաղաքին Թիֆլիզայ՝ մարզելոյ զհամբակս Հայոց 'ի գիտութիւնս վաճառականութեան, ոչ համարի իրաւունս ինքեան զրկել զեկեղեցին 'ի պատրաստել յայնմանէ միջոցացն վասն լուսաւորելոյ զհամբակս՝ նախապատրաստեալս 'ի կոչումն հոգևոր. վասն որոյ Սինհոդոս Էջմիածնի վարկանի, որոշեաց և բոլոր վերոյգրեալ կայքն և մայր գումարքն դրամոց նախկին Ուսումնարանին Հայոց Թիֆլիզայ, որ է այժմ Հոգևոր Ճեմարան. և նոյն ինքն շնորհածն այնորիկ է սեփականութիւն եկեղեցւոյ, որ ինքնին իսկ կարօտի մեծամեծ նպաստաւորութեանց առ 'ի լուսաւորելոյ զուսումնական տեղիս 'ի վիճակին Հայոց Վրաստանի, ուստի և զանկարելութենէ անտի 'ի կատար ածելոյ զնախընթացութիւն իւր առհմանելոյ 'ի Ճեմարանին Թիֆլիզայ զհաստատուն վասն արուեստից վաճառականութեան 'ի հաշիւ սեփականութեան Հոգևոր Ճեմարանին Հայոց, հասուցանելով ընդ ձեռն Տեառն Կառավարչին Վրաստանի 'ի ծանուցութիւն Նախարարութեանն Ներքին գործոց՝ խնդրել զտնօրէնութիւն թոյլ տալոյ ուսուցանել 'ի Հոգևոր Ճեմարանին Հայոց Թիֆլիզայ որդւոց վաճառականացն Հայոց տեղւոյն զմատակարարեալ յայնմիկ ուսմունս, և այնու տալ Սինհոդոսիս զկարելութիւն իմն երախտահատոյց լինելոյ անդուլ ջերմեռանդութեան նոցա առ հայրենի եկեղեցին իւրեանց, որոյ անհնարական կարիքն լցուցանին առատաձեռն նուիրանօք նոցա ըստ օրինակի բարեպաշտօն նախահարց իւրեանց. Ընդ այսմ ամենախոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Տեառն Գլխաւոր Կառավարչին Վրաստանի ստիպելոյ զանդամս նախկին Կոմիտէտին յաղագս բարեկարգութեան յիշեալ Ուսումնարանին փութալ յանձնել համաձայն տնօրէնութեան Կաթուղիկոսին ամենայն Հայոց, որ յառաջադրութեան Նորին Մեծապատուութեան առ յիշեալ Կոմիտէտն յ9 մայիսի 1837 ամի համար 258՝ զգործս, կալուածագիրս և զհաշիւ այնորիկ 'ի միասին ընդ առ ձեռն գտեալ գումարացն դրամոց յիշեալ ուսումնական տեղւոյն 'ի թիւ 1140 մանէթից արծաթոյ տոկոսեօքն

հանդերձ 'ի տեսչութիւն Թեմական Իշխանութեան Հա-
յոց Աստրախանի, իսկ յաղագս փութապէս կատարելոյ ըզ-
պահանջմունս Կոնսիստորիայից Աստրախանի, 'ի մասին
առնլոյ զմանրամասն հաշիւ 'ի ժառանգաց կտակակատա-
րաց հանգուցեալ մահտեսի Կասպարին Զարուխչեանց յա-
ղագս կտակեալ 'ի նմանէ յօգուտ յիշեալ Ուսումնարա-
նին 4600 մանէթից արծաթոյ, և միանգամայն պահան-
ջելոյ զայսոսիկ դրամս տոկոսօքն հանդերձ յորոց հարկն
է և հաստատնելոյ 'ի Կոնսիստորդ տալ հրաման Քաղա-
քական Պօլիցիային Թիֆլիզայ և զհետեւմանցն յարդել
զԱլէնհօղովս ծանօթութեամբ իւրով։ Զայսմ տնօրէ-
նութենէս առեալ ծանօթութիւն հրամանագրօք Թեմական
Ռուս Եպիսկոպոսին և Կոնսիստորիայից Աստրախանի, յանձ-
նել առաջնումն. 'ի տանել զգործս և զհաշիւ նախկին
Կոմիտետին վասն բարեկարգութեան Ուսումնարանին Հա-
յոց Թիֆլիզայ՝ մատուցանել Ալէնհօղովսի զանցելութիւն՝
ա, թէ ի՞նչ դրամք են՝ յականէ յանուանէ 1140 մա-
նէթք արծաթոյ՝ առեալք յայնժամ տոկոսօք. բ. Երբ
է նուիրեալ առաջ քահանայն Թէլէթու Գէորգն Մէհ-
րաբեանց զ20 մանէթս արծաթոյ յամի ամի. վասն քանի՞
ամաց է առեալ նա զայնոսիկ դրամս և վասն քանի՞ ա-
մաց, և ո՞րքան հաշուին 'ի վերայ նորա յապառիկս 'ի դը-
րամոց աստի. և գ, որո՞վ հիմնաւորութեամբ և ըստ որո՞ց
պայմանագրութեանց պարտին ստանալ յօգուտ Ուսում-
նարանին զկնի մահուան այրւոյ քաղաքացւոյն Թիֆլիզայ
Ռէժանի Խօատիսեանց 8000 մանէթքն արծաթոյ, ընդ
որում առաջի առնել և զամենայն վկայագիրս վասն բա-
լոր գումարացն վերադրելոյ, որք զկնի վերաքննելոյն վերա-
դարձուսցին ըստ պատկանելումն վասն պահպանութեան,
իսկ Կոնսիստորիայից Աստրախանի յանձնել ունել յիւր-
ւմ կողմանէ զմիջնորդութիւն և զնկատողութիւն յաղագս
յիւրում ժամանակի կատարման պահանջմանց այնոցիկ 'ի
կողմանէ Քաղաքական Պօլիցիային Թիֆլիզայ 'ի մասին
կտակեալ 'ի մահտեսի Կասպարէ Զարխչեանց դրամոցն և
զհետեւմանցն յայտնել Ալէնհօղովիս։

Ծանօթութեան։ Յայս Հրամանագրէ Սինոդոսին յայտնապէս երևի համառօտ իմն նախադասութիւն վասն վարձատրելոյ զհին Ուսումնարանն և 'ի ձեռս բերեալ դրամոց զկէսն առ յօգուտ Տփխիսոյ արքունի Գիմնազիային վասն բանալոյ 'ի նմա առանձին դասատուն 'ի կրթել զՀայ մանկունս յարհեստ վաճառականութեան, իբր զի ոմանք 'ի ժողովրդոց մերոց մանկանց իցեն եղեալ կամաւոր նուիրանօք 'ի շինութիւն այնր Ուսումնարանի. իսկ զմիւս կէսն թողուլ յօգուտ Հոգևոր Ուսումնարանին. և այս՝ որպէս պա՛րտ է կարծել, յաղագս եկեալ է 'ի մասնաւոր խնդրոց կամ 'ի պահանջողութեանց ոմանց մերայոց առ Գուբեռնեար Կառավարութիւնն. որ և հաստատեալ է Ուսումնարանն շինեալ է արդարև արդեամբք և ծախիւք Հասարակութեան, և պա՛րտ է թողուլ զայն յօգուտ նորա, և ձեռնամուխ լեալ գործոյ՝ արարեալ է զթղթակցութիւն, բայց Սինոդոսն Էջմիածնի ապացուցեալ է զիւրն Հոգևոր իրաւունս վասն պահպանելոյ շինութեան Ուսումնարանին և կանոնացն նորա Հոգևոր Տեսչութեան իւրոյ և շինելոյ ընդ անընդմիջական իւրով իշխանութեամբ 'ի կրթել 'ի նմին զորդիս հոգևորականաց հոգևորական առարկայիւք, զորս կարո՛ղ են ուսանիլ, ապա, և որդիք աշխարհականաց 'ի նմին։ Օրինակէ հանգամանս մա՛րթ է շինելին տեսանել 'ի գործս Սինոդոսին Էջմիածնի ոչ ենթարկեալն ընդ զօրութեան Կարգադրութեան 'ի 11 մարտի 1836 ամի հաստատելոյ Կայսերական Բարեհաճութեամբ 'ի կառավարութիւն եկեղեցեաց Լուսաւորչական եկեղեցեաց Հայոց Ռուսաստանի, որ վասն բացման Կոնսիստորիայից և Հոգևոր Դպրոցաց, որոշեալ 'ի գործս այժմեան կառավարութեան Ներսիսեան Ուսումնարանի չ՛իք պայմանէ գրագրութիւն, այլ գտաւ այն 'ի Կոնսիստորիայի տեղւոյս, յորմէ և հրամանաւ Վիճակաւոր Արք. Նիկողայոսի Սարգսի ստացաք մեք պատճէն նորա վասն հրատարակելոյ զայն տպագրութեամբ.

Պատճէնք կոնդակաց և այլոց հրամանագրութեանց վերաբերե-լոց կառավարութեան Հոգաբարձուաց Ուսումնարանի և նշանա-կելոց ըստ թղթահամարաց:

## Համար 68, 69 և 70:

ՏԵՂԻ ԿՆՔՈՅ

Ներսէս Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի Ազնուականաց աղայ Գաւիթ Յովհաննիսեան Թամամշեանից, աղայ Գաւիթ Գրիգորեան Խերոդինովից և աղայ Գէորգ Բաստամեանի Մանդինեանց հարազատից ամենաբարեպաշտ առաքելական Եկեղեցւոյ Հայոց և մեր նուիրեալ զաւակին Քրիստոսական հայցելով 'ի Նորուն մարդասիրութեանց հանգուցանել 'ի վերայ մարմնոյ ձեր և հոգւոյ զշնորհսն ամենազօր ողջունի իւրոյ այժմ և յաւիտեան: Եւ ընդ այսմ մերում բարեմաղթութեանց առ Աստուծոյ վասն ձեր և ձերայնոց ամենեցուն առաջի առնեմ ձերում Ազնուականութեան, զի առաւել քան զամենայն վայելչականսն աշխարհիս այսորիկ տիրապէս պսակ պարծանաց մահկանացու մարդկութեան են աստուածսիրութիւն և ազգասիրութիւն, որովք յաւիտենական անմահութեամբ հանդիսանայ յաղգս ազգաց 'ի լեզու ամենեցուն յիշատակ աստուածասիրաց և ազգասիրաց, որպէս տեսանեմք և լսեմք մեք ամենեքին մերովք աչօք և ականջօք: Յաղագս որոյ 'ի բազում ամաց հետէ առաւել մերձաւոր բարեկամութեամբ ձերով ինձ՝ գոլով քաջածանօթ ձերում աստուածսիրութեան և ազգասիրութեան հարուստ յուսով իմով վասն ձեր աստուածասիրաբար և ազգասիրաբար բարեջանութեանց յաղագս աստուածահաճոյ ազգօգուտ գործոյ յանձն առնեմ ձեզ զվերատեսչութիւն ամենայն հարկաւորացն վասն

բարեկարգ և վասն բազմարդիւն յառաջընթացութեանց ուսուցչութեանց և աշակերտութեանց յՈւսումնարանի Հայոց Թիֆլիզայ՝ կանգնեցելոյ անձնանուէր մերով աշխատաւորութեամբ և ոչ հարստութեամբ, այլ զի գրեալ է թէ, յամենայն գործառնութիւնս՝ լաւ են երկու քան զմի, որոց գոն վարձք բարիք 'ի վաստակս նոցին. և թէ՝ առասան երեքկին ոչ խզեսցի, համաձայն այսցիկ բանից իմաստնագոյն Սողոմոնի 'ի սմին աստուածսիրական և ազգասիրական հասարակաշահ պաշտօնատարութեան վասն հայրենի ազգի կարգեմ և հաստատեմ զձեր Ընդունականութիւնն [illegible] և Հոգաբարձու վասն կանոնաւոր դասատուութեանց ուսուցչաց, վասն հանապազորդելոյ աշակերտաց յՈւսումնարանին, և վասն արիաջան աշխատութեանց նոցուն ջերմեռանդ ունկնդրութեամբ դասատուութեանց ուսուցչացն իւրեանց և վասն համեստ կենցաղավարութեանց իւրեանց 'ի յՈւսումնարանի և 'ի դուրս իւրեանց յՈւսումնարանէ, կամ 'ի գնալն 'ի տուն իւրեանց, նաև վասն գնալոյ յեկեղեցի 'ի կարգադրեալ յաւուրսն վասն աշակերտաց, և վայելչական աստուածային պաշտօնատարութեանց կանգնելոյ յեկեղեցւոջ առանց զրուցատրութեան և առանց հայհոյութեանց յայսկոյս և յայնկոյս և առանց երևեցուցանելոյ տեսոյաց անարժան ուսումնարանական աշակերտաց զանհամեստ շարժութիւն իւրեանց 'ի մէջ եկեղեցւոյ, ունելով տպաւորեալ 'ի սրտի իւրեանց զբան Աստուածահայր Մարգարէին Դաւթի, զոր ասէր նա վասն իւր. «Մտից 'ի տուն քո, և երկրպագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քով». նաև վասն ընկալելոյ զաշակերտս 'ի յՈւսումնարանն, և վասն արտաքսելոյ զամեհիսն և զվայրենաբարոյ և զանհնազանդսն ուսումնարանական կանոնաց յանձն առնեմ նոյնպէս ձերում միաբան արժանապատուութեանց։

Նոյնպէս ես վասն որդեգրաց Ուսումնարանի յանձն առնեմ ձեր երեցուն միաբան հոգունակութեանց՝ ունել զմշտնջենաւոր զգուշութիւն վասն դասատուութեանց նոցա և վասն բարուոք զգուշութեանց յաղագս համեստ-

թեամբ և աստուածահաճոյ կենցաղավարութեամբ վարելոյ նոցա ընդ միմեանս և ընդ ամենեցուն որպէս յՈւսումնարանի, նոյնպէս և արտաքոյ Ուսումնարանի և 'ի սուրբ Տաճարի Աստուծոյ յԵկեղեցւոջ: Նոյնպէս ևս վասն կառավարութեանց կերակրոյ նոցա և հարազատութեամբ կամ անհարազատութեամբ մատակարարութեանց կերակրեղինաց յատկացելոցն ծախսարարի և կամ այլոց պաշտօնատարաց 'ի խոհանոցի նոցին ունել արժանապէս զգուշութիւն յաղագս խարդախութեանց իւրաքանչիւրոց նոցին վասն անհարազատութեամբ գնելոյ նիւթոցն և վասն անհոգութեամբ եփելոյ և պատրաստելոյ զայնս: Եւ առ միարան բովանդակելով յանձն առնեմ երեցուն ձեր աստուածսիրաբար և ազգասիրաբար հոգունակութեանց զամենայն զվերաբերեալսն բոլոր վերատեսչութեանց և արժանապէս պահպանութեանց Ուսումնարանին, որպէս վասն ուսուցչաց և վասն աշակերտաց, նոյնպէս և վասն շինուածոց Ուսումնարանին:

Ըստ օրինակի ուսումնարանական կառավարութեանց յանձնեմ ձեր երեցուն համաձայն կառավարութեանց նաև զկառավարութիւն եկեղեցական մոմավաճառութեանց 'ի մեծ շտեմարանին եկեղեցական մոմոց, որ 'ի վերնայարկսն Ուսումնարանի այժմ, ևս և 'ի խանութս մոմավաճառութեանց իւրաքանչիւր եկեղեցեաց, կալով հաւաստի, թէ ձեր վերատեսչութիւնն և հոգունակութիւնն վասն արդիւնաւորութեանց 'ի մոմավաճառութեանց, յաղագս օգտի եկեղեցեաց և ուսումնարանաց Հայոց որպէս 'ի Թիֆլիզ քաղաքի, այնպէս և յամենայն քաղաքս և 'ի գեօղս բոլոր վիճակի Հայոց Վրաստանայ ունի լինել բաւական արդիւնաւորութեամբ, ըստ վերատեսչութեանց Ուսումնարանի և ուսումնարանական բարեկարգութեանց և եկեղեցական մոմավաճառութեանց, յանձն առնեմ երեցուն ձեր վերահայեցողութեանց նաև զՏպարանն Ուսումնարանի եղելոյ ընդ գործադրութեամբ բարեջան տէր Սահակ աւագքահանայի Սահառունւոյ, նոյնպէս ևս զհանճարաւոր վերահայեցողութիւնն վասն արդեանց ամենայն ուխտատեղեաց Թէլէթու, Շանաքաթի, Գաշտի խաչի, Նաթլուղայ և Բօլնիսու սուրբ Գէորգ եկեղեցեաց, և Աշտա-

նիաւ Օ՛երանաւոր անուանեալ սուրբ Աստուածածին ե-
կեղեցւոյ և այլոց ևս որոց և իցէ ուխտատեղեաց, որոց ա-
մենից զվերատեսչութիւնն ունի յանձնեալ ինքեան առ 'ի
մէնջ նոյն նա առաջ. քահանայն Սահառունին, այսու մե-
րով Կոնդակաւ յանձն առնեմ երեցուն ձեր խոհական
տեսչութեանց զինքն զտէր Սահակ առաջ. քահանայն և զա-
մենայն ուխտատեղեան յանձնեալսն նմա, զի դուք ձերով
արժանադատութեամբ տնօրինել վասն անկորուստ ստաց-
ման կամաւորական նուէրանացն 'ի բարեպաշտօն ուխտա-
ւորաց ունիցիք պահպանել ընդ ձերով կառավարութեամբ և 'ի
գործ արկանել յաղագս ուսումնարանական կառավարութեանց.

Նոյնպէս ևս այգին, որ 'ի Սողանլուխ, և այգին՝ որ 'ի
Թէլէթ նուիրեցեալ 'ի Նորին Պայծառափայլութենէ Օթար
Սէվաշեան Միլախլովեանց և 'ի Ստեփաննոս Պօղոսեան
Պամբարեանց վասն իւրեանց յաւիտենական յիշատակաց
յանձնեմ ձերում արժանապէս հոգանակութեանց յա-
ղագս պաշտպանելոյ զշինութիւն նոցա յարաժամ վերա-
հայեցողութեամբ բարւոքապէս պահպանութեանց նոցին և
արդիւնաւոր առնելոյ վասն Ուսումնարանին. Նաև ըստ որում
մահկանացու վճռակաւորի գտանի անմահ տեղակալ Կոն-
սիստօրն վճռակի և Սինօդն Էջմիածնի, հարկն վասն մըշ-
տնջենաւոր անխափան ընթացից եկեղեցական կամ ուսում-
նարանական կառավարութեանց պահանջէ, զի որպէս ա-
մենայն գործավարք ազգական գործոց եկեղեցականաց և քա-
ղաքականաց, այնպէս և ձեր ազնուական արժանաձնու-
թեանց մեծավայելուչ պարտաւորութիւն համարիմ, զի
'ի լըման իւրաքանչիւր ամսոյ զհաշուէցուցակ վասն արդ-
եանց և ծախուց Ուսումնարանին և վասն այլոցն հարկա-
ւոր դատեցեալ որպիսութեանց յաղագս ուսուցչաց կամ
աշակերտաց առաքեսջիք 'ի Կոնսիստօրն զմի օրինակն, և
Կոնսիստօրն յերեք ամսոյ երեք ամիս 'ի տարին չորս ան-
գամ մատուսցէ զօրինակն ստացելոյ ինքեամբ 'ի Սինօդն
Էջմիածնի յաղագս հանապազորդեան արժանապէս ընթա-
ցիցն հաւատարիմ կառավարութեանց Ուսումնարանի, Տպա-
րանի, արդեանց ուխտատեղեաց, այգեաց Ուսումնարանին
և եկեղեցական մոմավաճառութեանց.

Վասն այս ամենայն յանձնարարութեանց մերոց ձերում աստուածասէր և ազգասէր Ազնուականութեանց առաքեալ զօրինակ այսմ միում կոնդակի 'ի Սինոդն Էջմիածնի և 'ի Կոնսիստօրն վիճակային՝ պատուիրեցաք նոցա վասն ամենայն ընդ առաջ ելեալ հարկաւորութեանց ձեզ, զորս յայտնել ունիցին ինքեան ու ուսումնարանական վերատեսչութեանն, ունիցին ըստ ամենայն կարևորացն ինքեանց գտանել միշտ օգնական ձեզ. յ9-ն մարտի 1851 ամի և ազգական 1300.

'Ի վերայ բնագրին՝ Ներսէս Կաթողիկոս ամենայն Հայոց.

Համար 343.

Տ. Կ.

Ներսէս Ծառայ Քրիստոսի և . . . . . . . . . . . Հարազատի որդոյ առաքելական Եկեղեցւոյ Հայոց աստուածասիրութեամբ և ազգասիրութեամբ բարեհամբաւեալ բարեծնունդ Ալէքսանդր Ղազարեան Թահիրեանց սիրեցեալ մեր առաւելապատիւ յուսով մեր 'ի վերայ աստուածասիրութեան և ազգասիրութեան ձերոյ կարգեմք զձեզ Հոգաբարձու Ուսումնարանի Հայոց 'ի Թիֆլիզ քաղաքի կառուցելոյ մեօք և գործակից Հոգաբարձուաց նորուն ազնուական տեառց Դաւիթ Գրիգորեան Խերոզբինեանց և տեառ Գէորգ Ռոստոմեան Մանդինեանց. և հարուստ յուսով իմով 'ի վերայ Աստուածային մարդասիրական շնորհացն որ զձեզ 'ի նորուն աշակերտութեանց զարգացուցեալ նախապատրաստեալ է 'ի ժամանակի յայսմիկ լինել Հոգաբարձու և բարեջան աշխատաւոր վասն հայրօրէն վերատեսչութեանց բազմութեանց աշակերտաց յուրաքանչիւր կարգի այնմ Ուսումնարանի և վասն արդիւնաւորութեանց ձերոց աշխատութեանց 'ի բարեյոյս զարգացումն մանկանց հայրենի ազգի 'ի փառս և 'ի պարծանս Հայրենի Եկեղեցւոյ և

համօրէն ազգի ժառանգաւորացն մեծ Նահապետացն հայկազանցն Հայկայ և Արամայ և սրբոց Լուսաւորչացն մերոց Առաքելոցն Քրիստոսի Թադդէոսի և Բարթուղիմէոսի և առաքելահաւասար յաջորդի նոցա սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի.

Քաջածանօթ էք դուք՝ իսկ քրիստոնէական Աւետարանութեանցն. «Որ արբուսցէ միում ումեք բաժակ մի ջուր ցուրտ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր» և ըստ այնմ քրիստոնէական վկայութեանց՝ ձեզէն իսկ կարող էք լինել վճարեալ վասն վարձուց ձերոց աշխատութեանց յաղագս արբուցանելոյ հարիւրաւոր և հազարաւոր մանկանց Հայրենեաց ոչ սակ ջուր ցուրտ բաշխական զովացուցիչ մտաց ծարաւելոց, այլ ջուր կենաց զովացուցիչ և պարարեցուցիչ յաւիտենական կենաց ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ փառք մարդկութեան և զարդ քրիստոնէութեան 'ի վեր քան զամենայն պարծանս ազգի ջուր իմաստից, որով միայն ածի և զօրանայ ամբառնայ բարձրանայ լինի ծաղկաբեր և պտղաբեր որպէս և գրէ Աստուածահայր Մարգարէն, թէ՝ «Եղիցի նա որպէս ծառ, որ տնկեալ է 'ի գնացս ջուրց»։ Նա որդի նորա արքայն Իմաստունն Սողոմոն ասէ. «Երանի եղէ ընդ ամենեսին, որոց առաջնորդէր իմաստութիւն. զի անպակաս գանձ է նա մարդկան, որով՝ որք վարեցանն առ Աստուած առաքեցին զբարեկամութիւն»։ Որում փորձառու էք և դուք ըստ չափու. Իսկ արդ յիշեցուցանելով զայս ամենայն խնդրեմք 'ի բարեծննդութենէ ձեր յարգել զայս մեր յառաջադրութիւն ձեզ և յանձն առնուլ աստուածահաճ կամօք զպարտաւորութիւն Հոգաբարձութեան Ուսումնարանի և Ընծայարանի հիմնեցելոյ մեօք և պաշտպանեցելոյ մինչև ցայժմ աստուածային յատուկ մարդասիրութեամբ և գտանել ապագայիւրաբար վասն արդիւնաւորութեանց նորին կրթութեամբ բազմութեանց մանկանց մերոց Հայրենեաց աստուածպաշտութեամբ աւետարանական, առաքելական և մարդայեական պատուիրանաց հպատակութեամբ ծնողաց և եղբարց և ընկերաց հարազատութեամբ և հաւատարմութեամբ, և որպէս պատկերակից Աստուծոյ կրթել և դաստիարակել զմիտս և զկամս աշակերտելոց լինել Աս-

ուածանման մարդասիրութեամբ և ողջախոհութեամբ վայելչացեալ. առանց որոց զրկեն զանձինս ամենայն մարդիկ ՚ի գերազանց մեծ վայելչութեանց իւրեանց՝ աստուածանմանութեանց. վասն որոց քարոզէ սաղմոսերգու Մարգարէն «Մարդ ՚ի պատուի էր և ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա՝» խամրացուցանելով զաստուածանմանութիւնն.

Բազմապատիկ մերով յուսով հրաւիրել զձեր բարեծննդութիւնն ՚ի համազգական հասարակօգուտ պաշտօնատարութիւն աստուածահաճոյ Հոգաբարձութեան Ուսումնարանի մանկանց Հայոց, մնամք հանապազ աղօթաւոր առ Աստուած վասն յաջողելոյ ձեզ ընդ ամենայն գործոց ձերոց և զմեծագոյն յաջողութիւն ՚ի ձերում Հոգաբարձութեան վասն յաւիտենական յիշատակի ձեր և տիրապէս մխիթարութեանց ազգի Հայոց հարազատից որդւոց Լուսաւորչական եկեղեցւոյ հայրենեաց. յԱմի ազգական 1302 և փրկչական 1853, սեպտեմբերի 8. ՚Ի Թիֆլիզ.

՚Ի վերայ բնագրին՝ Կաթողիկոս ամենայն
Հայոց Ներսէս.

Համար 345.

Տ. Կ.

Ներսէս Ծառայ Քրիստոսի . . . . . . . . . . .
Բազմաշխատ պատուարժան Ազնուական աղայ Պաւլէ Գրիգորեան և աղայ Գէորգ Արտամեան բարեջան Հոգաբարձուաց Ուսումնարանի և Սեմինարիի Հայոց Թիֆլիզայ ծանուցանեմք, զի վասն օժանդակութեանց բազմահոգ կառավարութեանց ուսումնարանական հոգաբարձութեանց հարկաւոր ծանուցեալ ընտրելագոյն գտանելոց ընդգաստիարակեալն ՚ի նմին Ուսումնարանի Հայոց և զծանուցեալն հարազատութեամբ որդւոյ եկեղեցւոյ Հայոց և աստուածսիրութեամբ և ողջախոհութեամբ զբարեծնունդ

Ալէքսանդր Ղ. Ղազարեան Թահիրեանց կարգել ձերում ար-ժանանձնութեանց գործակից և խորհրդակից և անդամ Հո-գաբարձութեան ուսումնարանական կառավարութեանց. և հարուստ է յոյս իմ, թէև ձեր արժանանձնութեանն ե-ղիցի առնուլ հաճոյական և հաւատարիմ գործակից ըստ ամենայն կարելեացն իւրոցն անձնական հոգևորական և մը-տաւորական կարողութեամբ յայտնել զանձն իւր մեզ և ձեզ ամենեցուն ցանկացողաց ուսումնարանական յառաջա-դիմութեանց իսկապէս անձնընծայ հարազատութեամբ. Նա որ մաղթելով հոգւոյ ջերմեռանդութեամբ և զմեծ ողորմութիւնն Աստուծոյ և զօժանդակութիւն մարդասի-րութեանց նորա ձերում միաբանութեանց՝ մնամք ձեզ ա-մենեցուն հոգւոյ ջերմեռանդութեամբ հանապազորդեան օրհնարար և աղօթարար և 'ի սրտէ բարեացակամ միշտ. յամի ազգական 1302, և փրկչական 1853 սեպտեմբերի 10. 'Ի Թիֆլիզ.

'Ի վերայ բնագրին՝ Ներսէս Կաթողիկոս ամենայն Հայոց.

---

Համար 113.

Տ. Կ.

Ներսէս Ծառայ Քրիստոսի և . . . . . . . . . .
Հոգաբարձուաց . . . . . . . . . . հարազատից ամենաբարե-պաշտ առաքելական եկեղեցւոյ Հայոց և մեր զողջոյն քրիս-տոսական նուիրեմ մեծ գոհունակութեամբ իմով լիաբե-րան օրհնաբանութեամբ վասն ձերում գովանի ազգասի-րական աշխատութեանց յայտնեցելոց մեզ զուարճալի գրու-թեամբ ձերով 'ի 21-ն ամսոյս համարաւ 27, յաղագս պատ-ուելոյ զյիշատակ բարերարացն մերում ազգական Ուսում-նարանի հաշուելով զփրկական սուրբ պատարագ յաւուր նոր կիւրակէի 'ի Վանքի Եկեղեցւոջ. որով հզօրացաւ յոյս իմ առնուլ յոյժ յոյժ 'ի վերայ այնպիսի խոհական և բազմահանճար մտախորհութեանց ձերոց 'ի մասին ինքնա-

յօժար ստանձնելոյ ձեր զայնքան ծանր զաշխատութիւնս վասն յառաջադիմութեանց ուսումնարանական կառավարութեանց, և ամենապատրաստ կամօք խորհրդածութեանս այնպիսեաց, որպէս պատկերացուցանեն առաջին գրութիւնն ձեր 'ի 17 մարտի համարաւ 8, և այս գրութիւն ձեր երկրորդ՝ որովք ազգասիրական հոգւոյ ձեր ներգործութիւնք հզօրացուցանեն զիմ զյոյս, թէ պտուղք ձերոց բարեջան աշխատութեանց ունին .քաղցրացուցանել զքիմս հայրենի ազգի մերոց մանկանց և ձերոց, որոց գոհունակութիւնքն յազգս յազգաց ունիցի մնալ յիշատակ յաւիտենական վասն ազգասիրական այդպիսի ձերում բարեջանութեանց, առ որ նախ այժմ այսու իմով գրութեամբ մատուցանեմ ձեզ զանհուն գոհունակութիւն իմ վասն այսօրինակ ջերմաջերմ սիրոյ ձերոց կամաց և յօժարամտութեանց առ հասարակօգուտ աշխատութիւնն վասն զարթուցանելոյ զմիտս մանկանց մերում հայրենի ազգի 'ի .քնոյ թմրութեանց դարաւոր ժամանակօք, որով գտանի իբրև վերջացեալ 'ի .քնաւից իւրոց հայրենի գերարժանաւորութեանց։ Իսկ վըկայեմ վասն իմ, թէ այնքան գտանի զուարճացեալ սիրտ իմ և հոգի 'ի վերայ ցայս վայր յայտնեցեալ ձերում հոգեկան բարեդրութեանց, մինչև գերազանցել .քան զբազումս զայլս զուարճալիս անձնականս, այն զի եթէ անձն իւրա.քանչիւր զուարճանայ մասնաւորաբար իւրեան անձնական բարեօքն, .քաջայայտ է, թէ որ.քան մեծահանդէս զուարճալի ունի լինել վասն ամենեցուն ընդհանրական համազգական բարութիւնն առ հասարակ ամենեցուն։ Ապա.քէն այսու մեծ մխիթարութեամբ իմով 'ի վերայ ձեր երեցուն այսպիսի միաբան բարեջանութեանց, հաւատարմացուցանեմ ձերում արժանանձնութեանց, Ըէև էս ընդջէզ առ ամենայն բարեջանութիւնսն ձեր 'ի մասին ցանկացեալ բարեդրութեանց Ուսումնարանի և Տպարանի նորա և մամալաճառութեանցն, և յառաջադիմութեանցն ուսմանց աշակերտացն եկեղեցականաց և .քաղաքականաց, չորրորդ և որպէս և կամէի և գործէի ջէզ՝ ես լինքն ունիմ ձեզ ամենապատրաստ կամօք իմովք յամենայն դէպ.քս և 'ի դժուարինս վասն ազգաշահ Ուսումնարանի բաց-

մաղթում արդիւնաւորութեանց և փառաւորութեանց որ-պէս մայր բազմածին։

Ողջ լերո՛ւք և մեք միամք բարեացապարտ ձերում ազ-գասիրական բարեջանութեանց մշտնջենաւորապէս օրհնա-բան ձեզ և աղօթարար վասն ձեր և վասն ամենայն կեն-դանեաց և ննջեցելոց ձերոց։ յամի 1851, և ազգականն 1300, յապրիլի 27, 'ի սուրբ Էջմիածին։

'Ի վերայ բնագրին՝ Կաթողիկոս ամենայն Հայոց Ներսէս։

Համար 303։

Տ. Ա։

Ներսէս Նշանայ Գրիգորեան և . . . . . . . . . . . . Ան-ժամայորդ Հոգաբարձուաց . . . . . . . . . . Նուիրեմք քրիս-տոսական ողջունիւ զաստուածային ամենազօր օրհնութիւն լիուլի գոհունակութեամբ յաղագս բազմամեայ ձերում ան-խոնջ աշխատասիրութեանց վասն համազգական բարու-թեանց դաստիարակութեամբ հարիւրաւոր բազմութեանց մանկանց հայրենի ազգի որդւոց սրբոյ առաքելական Եկե-ղեցւոյ Հայոց և սրբոյ Լուսաւորչացն նորին. ընկալեալ սարագրութեամբ երկոցուն ձեր գրութիւնն առ մեզ հա-մարաւ 201. 'ի յուլիսի 22. իրաւացի ազդարարութեամբ 'ի մասին պարտաւորելոյ մեր զձեր Ընդունակութիւնն 'ի ծանրակիր պաշտօնի Հոգաբարձութեան ուսումնարանական կառավարութեանց. միօրինակ մերով կոնդակաւ 'ի մարտի 9 յամի 1851 համարաւ 68, 69 և 70, առանձին առանձին երկոցուն ձեր միօրինակ դժուարակիր պարտաւորութիւն հը-րաժարելոյ լինել վերստեսուչ բարեկարգ և բազմարդիւն յառաջընթացութեանց ուսուցչութեանց և աշակերտու-թեանց Ուսումնարանի Հայոց Թիֆլիզու և կատարեալ կարողութեամբ որպէս փոխանակ իմ գտանիլ իբրեւ զա Վերստեսուչ և Հոգաբարձու վասն կանոնաւոր դաս-

տուութեանց ուսուցչաց և վասն հանապազորդելոյ աշակերտաց յՈւսումնարան և կալոյ ըստ ամենայն վայելչական ուսումնականութեանց բարեդրութեան, ընդ այնոցիկ և զկատարելութիւնն եկեղեցական մոմավաճառութեանց նաև զվերատեսչութիւնն Տպարանի Ուսումնարանի արժանապէս գործադրութեանց և զվերատեսչութիւնս ամենայն ուխտատեղեաց յաղագս ընկալելոյ զնուիրանս բարեպաշտութեանց ուխտաւորաց առ օգուտ գիտնական կրթութեանց բազմութեան մանկանց ազգի հայրենեաց։ Ոչ 'ի վերայ այն ամենայն ծանրակրութեանց շնորհակալ եմք մեք առաւել յոյժ հոգունակութեամբ յաղագս վայելչական ձերում ազգասիրութեանց և աստուածսիրութեանց կատարելոյն զամենայն զյանձնարարութիւնս մեր ձերում Ազնուականութեանց առաւելապատիկ աշխատասիրութեամբ ձեր ընդ որոց և զոչ սակաւ ծանրակրութիւնս ձեր յաղագս համաձայն մերում յանձնարարութեանց 'ի լրման իւրոքանչիւրոց ամսոց առաքելոց ձեր 'ի Կոնսիստորն վիճակային զհաշուեցուցակ ամենայն ամսական մտից և ելից և երեք ամսոյ երեք ամիս 'ի տարին չորս անգամ առաքելոյ Կոնսիստորին զայնս 'ի Սինոդն Էջմիածնի յաղագս մշտնջենական ապահովութեանց ուսումնարանական բազմաշահ ազգի հայրենեաց անվտանգ մշտնջենաւորութեանց։

Յոյժ խրախուսեցի են գրեալքն ձեր 'ի սմին գրութեան առ մեզ, զի դուք համաձայն մերոց յանձնարարութեանցն ձեզ 'ի վերոյիշեցեալ կոնդակաւ մերով հանապազորդեալ էք 'ի Կոնսիստորն առաքել զհաշուեցուցակ ամսական մտից և ելից յամենից յանձնեցելոցն ձերում Հոգաբարձութեանց Ուսումնարանի, Տպարանի, Ուխտատեղեաց, 'ի Սողանլուխ և 'ի Թէլէթ եղեալ այգեաց Ուսումնարանի և եկեղեցական մոմավաճառութեանց արդեանց և ծախուց և 'ի վերայ ամի այնոցիկ մշտնջենական ամսական հաշուեցուցակաց նաև յամի 1851 'ի հոկտեմբերի 13 ըստ մերում համաձայնութեանց 'ի հանդիսի հրապարակական քննութեանց աշակերտաց Ուսումնարանի 'ի ներկայութեան բազմութեանց Կնեազաց, Ազնուականաց, Քաղաքապետաց, Արհեստաւորաց և բազմութեանց ժողովրդականաց և բազմաց հո-

գևորգականաց և ամենից կոնսիստօրիական Ատենակալաց ընթերցեալ Հաշիւ մտից և ելից և բոլոր գործառնութեանց Հոգաբարձութեան յորէ սկզբնաւորութեանց նորուն զմի օրինակ այնորիկ ընդ այլոց կարևոր թղթոց մատուցեալ մեզ. 'ի 20 Հոկտեմբերի նյնմ ամի Համարաւ 327, յետ այնմ ընդՀանրական Հաշուացուցութեանց Հոգաբարձութեանն դարձեալ նոյին շարունակութեամբ 'ի լման իւրաքանչիւր ամսոց առաքեալ 'ի Կոնսիստօրն Հոգաբարձութիւնն զիւր զՀաշիւսն, 'ի սմին ամի ևս 'ի մարտի 17, ընթերցաւ ըստ առաջնոյն մանրամասն Հաշիւ մտից և ելից 'ի կոլուածոց Ուսումնարանի 'ի ջերմեռանդից ազգական կրթականութեանց յուսումնարանական ընծայաբերութեց ևս և յամենից իւրոց գործառնութեանց յորէ յանձնելոյ Դպրոցին 'ի տեսչութիւն Հոգաբարձութեան ձեռամբ Ատենակալութեանց մինչև ցվախճան 1852 ամի, զոր և տըպագրեալ լինելը բացայայտ և պարզ Հանգամանօք մի առ մի յատուկ յատուկ 'ի Տպարանի Ուսումնարանի Հրատարակեալ գտանի քանի Հարիւրաւոր թերթիւք, այլ 'ի վերայ ամենայն իւրոց ամենաջերմեռանդ աշխատութեանց նըշանակելոյ չունի Հոգաբարձութիւնն ոչ 'ի Կոնսիստօրիայէն և ոչ 'ի մէնջ ստացեալ զապաՀովագիր վասն ուղղութեանց այն ամենայն ամսական նաև երկիցս ընդՀանրական Հրապարակական Հաշուացուցութեանց վասն արդեանց և ծախուց և վասն ամենից Հրատարակեցելոցն 'ի Տպարանի Ուսումնարանի տպեցեալ մանրամասնեայ Հանգամանօք տեղեկութեանց շարունակութեանցն Հոգաբարձութեան գործոց, առ որ Հարկաւոր Համարի ունիլ առ 'ի մէնջ զՀաւաստապատում ապաՀովագիր. բայց որպէս ապացուցական իսկական ճշմարտութիւն է լռութիւն Կոնսիստօրի կամ մեր 'ի վերայ այն ամենայն Հրատարակեցեալ ամսական և տարեկան ընդՀանրական Հաշուացուցութեանցն Հոգաբարձութեան, ինքն ըստ ինքեան գտանի ամենաՀաւաստի ապաՀովագիր, այն զի եթէ չէին Հարազատօրէն յանկացեալ պարտաւորութեանց Սնճակային Կոնսիստօրի և մեր, ոչ ներէին լռել, որպէս և Հատարակեալ վճռադատութիւն է ամենայն ազգաց, թէ լռութիւնն է խոստովանէ

խոստովանութիւն, բայց յորդելով զձեր ամենաբարեպաշտ հոգւով գրութիւնն համառօտութեամբ ամենից ազգասիրական հոգւով յաւիտենական յիշատակաց արժանաւոր անխոնջ ջանից և աշխատութեանց ձերոց վասն մշանջենաւորութեանց Ուսումնարանի և վասն յառաջադիմութեց ուսումնարանական աշակերտաց հարիւրաւորաց, որ ոչ միայն է յոյս պահպանութեանց ժառանգական հարազատութեանց Ածանուն նահապետացն հայկազանց Հայկայ և Արամայ և սրբոց լուսաւորչացն մերոց սրբոց Առաքելոցն Քրիստոսի Թադդէոսի և Բարդուղիմէոսի. և առաքելահաւասար յաջորդի նոցա սրբոյն Գրիգորի մեծին Պարթևի և յաւիտենականութեանց ամենաբարեպաշտ Եկեղեցւոյ մերոյ հայրենեաց, առանց որոց զրկանք բազմաց հայկազանց 'ի շնորհաց առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի և անարգալաց իւրեանց զհայր և զմայր հարուածեալ 'ի չարաչար իւրեանց աղքատութեանց՝ Թափառական 'ի դաշտս և 'ի լերինս որոնեն զիւրեանց զհայր և զմայր, ափշեալ 'ի Թմրութեանց մտաց իւրեանց և մոլեգնեալ 'ի ասլից դարանակալաց գերարժանաւորութեանց նախածնողացն իւրեանց ազգապետացն հայկազանց ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ խցանելով զականջս իւրեանց առաքելական ձայնարկութեանցն, որ քարոզէ զինքեանս զհայր և զմայր անարգուս. Եւ հաւատարմացուցանեմք ըստ Աստուծոյ խղճական բանիւ ճշմարտութեանց, զի յոյսն իմ առաւել է, զի առաւել քան զմեզ ամենասուրբ եկեղեցին Հայոց և միաբանութիւնն համազգական ունիցին յայտնել ձեզ զանսահման շնորհակալութիւն իւրեանց վասն բարեպաշտ կամաց ազգասիրաբար ձերոց Հոգաբարձութեանց ազգական մանկանց Հայոց բազմութեան ըստ օրինի նորածնելութեան լուսաւորութեամբ մտաց առ ճանաչումն գերարժանաւորութեանց նախահարցն իւրեանց մարմնականաց և լուսաւորչաց ըստ քրիստոնէական ամենաբարեպաշտ հաւատոյ սրբոյ առաքելական Եկեղեցւոյ Հայաստանի ամենակատար ուղղափառութեամբ, առ որ և մնամք յաւիտենական պարտաւորութեամբ լինել գոհունակութեամբ վասն անձնատանջ ձերոց աշխատութեանց հանապազ աղօթարար վասն ամե-

Նոյն կենդանեաց և ննջեցելոց ձերում Սրբազնութեանց։ Յամի փրկչական 1853 և ազգականն 1302. յուլիսի 29, 'ի Թիֆլիզ.

'Ի վերայ բնագրին՝ Ներսէս Կաթողիկոս ամենայն Հայոց.

## Համար 183.

Տ. Կ.

Ներսէս Նախաայ Բրիտոսի . . . . . . . . . . . . Զգրութիւն ձեր առ մեզ 'ի յունիսի 3 համարաւ 124, և մի ևս առանց համարոյ հասեալք առ մեզ 'ի յունիսի 9 արդարև մեղադրելի ենք, զի մինչև ցայսօր գտեալ անպատասխան՝ մեզէն իսկ զգամք զմեր անվայելչական պատահմունսն.

Որպէս խոստացայք ձերում Սրբազնութեանց, թէ շուտով ունիմք դարձուցանել առ ձեզ 'ի Թիֆլիզ զհարազատն որդւոյ Եկեղեցւոյ հայրենեաց և մեր և ամենայն միաբանութեանց մերազանց զՍարգիս շնորհազարդ Եպիսկոպոսն, թէպէտ և համաձայն մերում խոստմանց ոչ անագան ձեռնադրեալ զնա եպիսկոպոս՝ պատրաստեցաք յաղագս վերադարձուցանելոյ զնա առաջնորդական պաշտօնութեամբ, այլ զի Նորին Պայծառափայլութի կընեազ Վասիլ Յովսէփեան Բէհբուդեանց զգրութիւն մեր առ մինիստրն ոչ կամեցեալ առաքել ինքն, դարձուցեալ էր առ մեզ և գրեալ. զի առաքեսցուք առ Նորին Բարձր Գերազանցութիւնն Նիկոլայ Նիկոլայեւիչ Մուրավէվ տէր փոխարքայն՝ որ գտանի 'ի բացակայութեան իւրում ամենահարկաւոր ծանր զբաղանօք, այլ զի Կոնսիստորիական կառավարութիւնք Հայոց ոչ գտանին համաձայն կացուցմանցն իւրեանց վերադիտողութեամբ բարեկարգութեանց, որ վասն և ամենայն գործք ենթադրեալք նոցուն Տեսչութեանց գըտանին առաւել յոյժ աղաւաղեալ. որպէս և յայտնի է ձեզ իսկ, առ այն թէպէտ և չունէր արգելք առաքելն

մեր ըմբռնման Սարգիս ծաղկեցուցան, այլ առաւել հար-կաւորագոյն համարելով զկանոնաւորելն Կոնսիստորիական կառավարութեանց, յորոց կախեալ գտանին և ամենայն բարեկարգութիւնք եկեղեցւոյ եկեղեցականաց և ժողովրդականաց ըստ վայելչութեանց քրիստոնէական կառավարութեանց, և վասն այնորիկ բարւոք դատեցաք զձեր մտադրութիւնն միայն ձգել յանձն մեր, և ազատել զմեզ ՚ի դատապարտութեանց տիրական Գլխոյն սրբոյ եկեղեցւոյ իւրոյ, որում գտանիմք անուանակիր.

Բայց առաւել դժալի գտանի մեզ, զի լսելի լինին ՚ի հասարակական համբաւոց շշնջիւնք ոչ պատկանեալ Ուսումնարանաց հայկազանց, իբրև թէ ակարութեամբ կատարելութեան գիտութեանց Աստուածաբանութիւնք կամ այլ շարադրութիւնք նախնեաց Հայոց չեն այնպէս կատարեալք, որպէս են կատարելագործեալք յամենայն Եւրոպայ կամ մանաւանդ ՚ի Գերմանիայ. Հարիւրաւոր ամօք հռովմէական ամբարիշտ քարոզչացն էին գայթագղութիւնք անուանումն, այլ Քրիստոսեան աստուածային վարդապետութեամբ առաքինացեալ ազգաց բազմաց գայթագղութիւնք ընդ ամենայն տեղիս. իսկ ոչ ՚ի վաղուց ժամանակաց առաւել քան զնոցայն սկզբնաւորեցին եւրոպական ուսուցչութեանց գայթագղութիւնք Լուտերականաց և Գերմանացւոց, որպէս ոչ ՚ի վաղուց յայտնեցաւ ՚ի Ղարաբաղ և ՚ի մերձաւոր ժամանակաց հետէ յամենայն սահմանս տէրութեան Օսմանցւոց, նա իսկ և ՚ի Կոստանդնուպօլիս, և իբրև ոչ անհաւատ բաւական հաշակահաւորութեամբ նաև ՚ի Շամախի քաղաքի. մի՛ և մի՛ արասցէ ամենակատար Աստուածն, հաւատոյ Աստուած մեր զթոյլատուութիւն այնպիսեաց գայթագղեցուցչաց մերազանց ՚ի Քրիստոսապատուէր առաքելական վարդապետութեանց որոց լուսաւորչացն իւրեանց Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյն Գրիգորի Պարթևի. Որպէս մտայն հաւատի և այլ իրաց, այնպէս և հաւատոյ մտայն գտանի սիրելի անձնահաւան ընթերցասիրաց, բայց մի է ճշմարտութիւն հաւատոյ, զոյն՝ զոր պատուիրեաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս ուսուցանել ամենեցուն, և զոր ուսու-

ցին նոքա մինչև ցմասնատումն բազմաթիւ հաւատոյ, յորմէ պահեսցէ Տէր Աստուած մեր զմեզ և զամենայն ազգն Հայոց։ Եւ այս ինքն է պատճառ, զի 'ի մասին ուսումնական ընթացից 'ի մերում Ուսումնարանի ընտրելագոյն համարիմք սպասել մինչև ցառաքումն Սարգիս Սրբազան Եպիսկոպոսի։ Ողջ լերուք և զամենայն զկարողութիւն ձեր մտաց և խորհրդոց մի' խնայեսջիք վասն արժանապէս դաստիարակութեամբ աշակերտաց Ուսումնարանի հաւատացելոյ ձերում աստուածահաճոյ հոգունակութեանց. և մեք եմք հանապազորդեան օրհնաբան ձեզ։ յԱմի ազգական 1304, և փրկչական 1855, օգոստոսի 13, 'ի սուրբ Էջմիածին։

'Ի վերայ բնագրին՝ Կաթողիկոս ամենայն
Հայոց Ներսէս։

Համար 205.

Տ. Կ.

Ներսէս Ծառայ Քրիստոսի և . . . . . . . . . . .
ընկալեալ զտոմսակն առ մեզ 'ի 12-ն սոյն օգոստոսի և ծանուցեալ վասն տարակուսանացն ձերոց 'ի մասին ոչ համաձայն խոստմանցն մերում ձեզ վերադարձուցանելոյ ըզՍարգիս Եպիսկոպոսն Ջալալեանց վասն օժանդակելոյ ձեզ 'ի մասին նորոգ առ 'ի մէնջ կարգաւորութեանցն յաղագս Ուսումնարանի մերոյ համաձայն մերում անօրէնութեանց ուսուցանելոյ ըստ այնոցիկ նպատակացն մի առ մի նշանակեցելոց առ 'ի մէնջ յայնմիկ նորոգ կարգաւորութեանն մերում, այլ զի ստիպեալ 'ի հարկէ բարուոքելոյ զկառավարութիւնն հոգևորական ատենից յանձն եղելոց վերադիտողութեանց Սինոդի Էջմիածնի և մերում ընդհանրական ծայրագոյն Տեսչութեանց, պարտաւորեցաք զՍարգիս Եպիսկոպոսն Ջալալեանց և զՍտեփաննոս քահանայն Մանդինեանց կարգել վերաքննիչ ուղղաբար գործավարութեանց

Վիճակային Կոնսիստորիայի Երևանայ· առաւել հարկաւորագոյն համարելով զայսպիսի վերաքննութիւն յաղագս եկեղեցական բարեկարգութեանց, զոր ճանաչեմք օգտակարագոյն վասն պատրիարգական և ; Սինոդական և Կոնսիստորիական և այլ հոգևորական տեղեաց կամ անձանց կարելի կերպիւ ազգաշահ կառավարութեանց· Իսկ յուսով եմք թէ ոչ ևս անագան աւարտեալ զքննութիւնն այն Կոնսիստորի Երևանայ վիճակի, առաքեսցուք 'ի գործակցութիւն ձեզ և Կոնսիստորի Վրաստանայ և Իմերեթու զվերձառեալ հարազատն սրբոյ եկեղեցւոյ և ազգի Հայոց և մեր զՍարգիս Եպիսկոպոսն Ջալալեանց·

Իսկ յաղագս վարժապետաց ըստ այնմ մերում նախատնօրէնութեանց վասն մերոյ խորհրդակցութեանս կարգելոյ և ռուճիկ նշանակելոյ ըստ որում կանխաւ յառաջ գտանին նշանակեցեալ ուսուցիչք, այժմ և մեք ևս համաձայնեալ եմք տնօրէնութեանցն Հոգաբարձուաց մինչև ցայժմ, խնդրեմ զի որպէս և արժան դատել ունիցի միաբանութիւնն Հոգաբարձուաց, ըստ այնմ ունիցի յառաջ վարել զուսուցչութիւնն, որ աղագաւ Սարգիս Սրբազան Եպիսկոպոսն Ջալալեանց 'ի գալն իւր յաւարտ հաշուաքննութեանցն Կոնսիստորի Երևանայ համաձայն մեր ընդ նմա խորհրդածութեանց, եղիցի նա ինքն գործակից ձեզ· Այսմ զայս այժմ ծանուցանեմք ձերում Ազնուականութեանց, զի լսելի լինի մեզ լուր անարժան մերում եկեղեցական Ուսումնարանի · իբրև զի յառաջադէմ աշակերտք Ուսումնարանի անհաւանք գտանին գրութեանց գերարժան հեղինակաց Հայոց Գրիգորի Նարեկացւոյ, Ներսիսի Շնորհալւոյ, նա իսկ և Սաղմոսարանաց Գրաթի և այլոց հիմանց եկեղեցւոյ Քրիստոսի հրաշաքան Աստուածաբանութեանց, ևս և կրօնի կուսական կարգաց եպիսկոպոսութեանց և վարդապետութեանց և այլոց զանազան եկեղեցական կարգաւորութեանց, ևս և աղօթից և ճգնաւորական վարուց, որք համարին առ 'ի մէնջ հօտ 'ի մահուանէ 'ի մահ, և ոչ 'ի մահուանէ 'ի կեանս, վասն որոյ խնդրեմ հանճարաւոր ուշադրութեամբ գտանիլ ներքահայեաց. թէ ընդէ՞ր իցեն տարածեալ այսպիսի անար-

ժան մերում Ուսումնարանի չարահամբաւ լուրք։ Իբր մեք ՚Հոգ կալցուք փութացուցանել զՍարգիս Սրբազան Եպիսկոպոսն յաղագս ապահովացուցանելոյ զմեզ և զձեզ և զամենասուրբ առաքելական Եկեղեցի Հայոց. յԱմի ազգական 1304, և փրկչական 1855, յօգոստոսի 27. ՚ի սուրբ Էջմիածին.

՚Ի վերայ բնագրին՝ Կաթողիկոս ամենայն Հայոց Ներսէս.

---

Պատճէն յայտարարութեան Վիճակաւոր Սարգսի Արք Եպիսկոպոսի առ Տեղակալ Աթոռակալ Ամենահօգոսին Էջմիածնի Ղուկաս Արք Եպիսկոպոսն, ՚ի 28 դեկտեմբերի 1857 ամի.

---

## Համար 120.

՚Ի վիճակային Կոնսիստորիայէ Հայոց Վրաստանի և Իմերէթի ընթերցեալ եղև գրութիւն կառավարչական մասին Սինոդի սրբոյ Էջմիածնի յ8 անցեալ նոյեմբերի համարաւ 2166, որով պահանջեալ զտեղեկութիւն վասն կատարման հրամանի Սինոդին ՚ի 14 յունիսի համար 1081 ՚ի մասին արձակելոյ զկարգեալ յերջանկայիշատակ Մեծափառ Հայրապետէն ամենայն Հայոց զաշխարհական անձինս ՚ի վերատեսչական և ՚ի խորհրդակցական պաշտամանց Հոգևոր դպրոց, յառաջադրէ Կոնսիստորին յայտնել նմին, թէ ՚ի կատարումն այնր հրամանագրութեան զո՞րպիսի կարգադրութիւն է արարեալ, յաւելլով ընդ նմին, թէ աշխարհական Հոգաբարձուք Հոգևոր Ուսումնարանին տեղւոյս ՚ի թիւս միւս աշխարհական Վերատեսչաց արձակեցա՞լ են թէ ոչ, եթէ արձակեալ են, ո՞յք ոմանք կարգեցա՞լ են ՚ի տեղի նոցա, եթէ չեն արձակեալ, ըստ որպիսի պատճառանաց։

Գիտելով իմ թէ որպիսի անախորժ եղեն հետևանք անօրէնութեանն արձակելոյ զնոսկին Կոմիտեան բարեկարգութեան Ուսումնարանին Թիֆլիզոյ և դարձուցանելոյ

գոյն 'ի Սեմինարիայ առանց իրիք խորհրդակցութեան ընդ ժողովրդոց, կամեցայ շօշափել զմիտս երևելեաց քաղաքիս ըստ նորկայ առարկայի, ուստի առանձինն բացի զայս խորհուրդ քանի մի խոհական իշխանաւորաց. նոքա խորհուրդ ետուն ինձ մի՛ բնաւ ձեռն տալ յայս գործ և մի՛ զկծե-ցուցանել զմիտս ժողովրդոց, որք միամտաբար առատա-ձեռնեն զտուրս, հաղիւ հաղ՝ ասեն դադարեալ է իմ ն-տո 'ի միջի մերում, այսպիսի անօգնութիւն կրկին առիթ լինելոց է յառաջ վարել զգիրագրութիւնն անաւարտ մնա-ցեալ 'ի Գլխաւոր Կառավարութեան վասն այսր Ուսում-նարանի, վաղ ուրեմն՝ ասեն, կարէաք ցուցանել զիրաւունս ժողովրդեան 'ի վերայ այնր Ուսումնարանի, այլ խոհակա-նութիւնն չթողու. ըստ որում գիտեմք քաջ, զի եթէ յառա-կացի այն ժողովրդեան՝ անշուշտ ունի մտանել ընդ տես-չութեամբ ուսումնական կառավարութեանց, և յայնժամ լեզու և դպրութիւն Հայոց, ուսումն կրօնի հացէ յայն աստիճան, յորում գտանի արդէն Ճեմարանն Լազար-եանց, վասն զի ըստ հասարակեալ կարգի Ուսումնարանաց բազմանան զանազան առարկայք, և լեզուի մերոյ և գրա-կանութեան այլ ոչ ևս մնան ժամք պարապոյ.

Իսկ եթէ Հոգևոր Իշխանութիւնն ստիպեսցէ 'ի սպառ զրկել զժողովրդականս 'ի մասնակցութենէ Հոգևոր Դպր-ոցէ՝ յայնժամ յետինն լինի չար քան զառաջինն. յետ այսորիկ ես դարձուցի զնկատողութիւն իմ 'ի գործս նա-խորդաց իմոց՝ յորս և գտի զյետագայ տեղեկութիւնս. 'Ի 1821 ամի եղեալ է հիմնարկութիւն այսր Ուսումնա-րանի 'ի ձեռն արժանայիշատակ Կաթուղիկոսին ամենայն Հայոց Ներսիսի, յայնժամեան Առաջնորդին Վրաստա-նի, և որպէս երևի, մեծ գումար հասեալ է 'ի ձեռս նո-րա 'ի կամաւոր նուիրանաց ժողովրդոց վասն այսր աստուա-ծահաճոյ գործոյ, այն է Հոգևոր Դպրոցի. և որպէս Ու-սումնարանն, նոյնպէս և հանդիպակայ կրպակքն շինեալ են նովին իսկ գումարօք. և այս յայտնի է ամենեցուն. և յետ շինութեան Ուսումնարանի՝ տեսչութիւն այնորիկ ե-ղեալ է 'ի ձեռն բազմախնամ կառուցանողին նորին մինչ

խորհրդակցութեամբ քանզի էր ազգասէր իշխանաւորաց քա-
ղաքին ։ (1)

. . . . . . . . . . . . . . . . . .

Խօսելով ըստ արդար խղճի մտաց կարգեալ 'ի Նորին Վեհափառութենէ Հոգաբարձուքն՝ Մ.ղնուակեանք Պաւլէ Պօղդարեան Խերոզլինեանց, Պաւլէ Յովհաննիսեան Թամամշեանց և Գէորգ Արտամեան Մանդինեանց, յո-րոց զանուն առաջնոյն 'ի պատճառս մահուան նորին փո-խարինեաց յետ երկուց ամաց Տիտուլեարնի Սովետնիկ Ալէքսանդր Թահիրեանց, Հոգաբարձուք ոչ հայեցեալ 'ի բազմոգնի գործառնութեանս իւրեանց, մինչ ջերմ-եռանդութեամբ փութացեալ են 'ի պէտս յառաջադիմու-թեան Դպրոցին ըստ ամենայն մասանց, բազում խոչք և խութք եղեալ են նոցա ընդ առաջ, այլ նոքա զայնց զամենե-քունց արարեալ 'ի 1851 ամէ ցայսօր ժամանակի վարեն զիւրեանց պաշտօն անքուն հոգացողութեամբ, վառեալ մի-այն հոգւով աստուածսիրութեան և մարդասիրութեան ըստ չափու իւրեանցն կարողութեան ։ Եղեալ են այս սոցա նախանձորդք, մասնաւք, զկծեցուցիչք և քսու ամբաս-տանութեան մատուցանողք, այլ սոքա անյողդողդ կա-ցեալ յիւրեանց վաստակս՝ զարմանալի իմն համբերութեամբ շարունակեն ցարդ զիւրեանց պաշտօն առանց ամենայն մարմ-նական ակնկալութեանց, յառաջի արարեալ ընդ աչս տես-րակէ Բարձր Արքայութիւն Ձեր բարեհաճեսցի տեսա-նել զերկամեայ գործողութիւն Հոգաբարձութեանն և զհա-մակրութիւն ժողովրդեանն ընդ նոսա, 'ի նմին տետրակի ակներև տեսանի առաջնոյն արիական ջան 'ի բարեկարգել զՈւսումնարանն նորին և արտաքին բարեզարդութեամբ, իսկ վերջնոյն՝ յօժարութիւն յառաջացանել զկամաւոր նուի-

(1) Ծանօթութիւն ։ Օ՛ չէ այսր Նորին Բարձր Արքեպիսկոպոսու-
թեան տպարանքն զնծայ Աստուածարանին յորէ բազմաչարչարելոյն ար-
ժանայ՛ շարժ Հիմնադրի նորա 'ի Բեսարաբիա և զբոսնել Հոգա-
բարձական Աստուածարանին, զոր կարող են ընթեռնլ գտանել 'ի
վերոյգրեալ Տետրակին Աստուածարանին .

ջանս, իսկ հաշիւս ելից և մտից և գործողութեանց Հոգաբարձութեանն ցվախճան ներկայ ամի. զոր ունիմ ոչ աննաղան ստուգեալ առաջի առնել Ձերդ Բարձր Սրբազնութեան, թերևս 'ի զարմանս կրթեսցէ զամենայն ակն մանրաքննին. նաև յուրախական գործակցութիւն զարթուսցէ զամենայն հոգի ազգասէր, ցաւ է արդարև և նախատինք մերում կոչման և աստիճանի հակակրութիւն ազգայնոց, որք միանգամայն շրջուցեալ յամաց շահասէր հոգևորականաց՝ ոչ յօժարին աւանդել 'ի ձեռս նոցա զիւրեանց նուիրանս յատկացելոյ վասն այսօրինակ մեծի գործոյ, ապացոյց բանիս բազումք են, սակայն զայլովքն զանց արարեալ խօսեսցուք միայն զառաջիկայես. 'Ի 1837 ամէ ց1851. Ուսումնարանն կայր գրեթէ ընդ անմիջական իշխանութեամբ հոգևորականաց. և յայնմ միջոցի չեղև և ոչ մի ոք նուիրատու. այլ 'ի բառնալ Հոգաբարձութեանն իւրև 'ի վերոյ հաստատուն հիմանց և յանձնել ելից և մտից նորին վերատեսեալ անձանց յաճախեցին նուիրատուք հարիւրաւոր և հազարաւոր մանէթիւք. և այս չյաջողէր երբէք, եթէ ոչ տեսանէին հեռաւորք և մերձաւորք զերախայրիս համամիտ ձգանց և չունիցէին զյոյս ապագայ մեծամեծ արդեանց, մի՛ ինչ թեթև համարեսցի տեր յայսպիսում քաղաքի, ուր ամենայն պիտոյք կենաց դժուարաւ և թանգագնոյ բերին 'ի ձեռս 'ի պահպանութիւն վաթսնիւ չափ որդեգրաց, մեծամեծ շինութիւնք եղեալք 'ի Թէքէթ, 'ի Նուիրանաւոր, 'ի Շաւնաքաթ, յայգւոջ Սողանլուխ՝ պատկանելոյ Ուսումնարանին և յայլս բարձրաբարբառ քարոզք են վաստակոց Հոգաբարձութեանն, հոյակապ շինութիւն եկեղեցւոյն Ջխէթայի առ նախկին կաթուղիկոսարանաւ. Արդ ցուցանէ զքրիստոնէական ջերմեռանդութիւն և զանխոնջ վաստակս Հոգաբարձութեանն, գնումն մեծատարած շինուածոյ նախկին փոստային Տփխիսայ մերձ Ուսումնարանին և կառուցումն 'ի նմին մեծածախս հիմնաւոր շինուածոյ 'ի բնակութիւն որդեգրաց 'ի գետեղումն Տպագրատան և այլոց ևս 'ի տուչութիւն 'ի վարձու՝ արդիւնք են Հոգաբարձութեանն։ Եթէ չասացուք պատճառս շիջուցանելոյ զեռանդն հոգւոյ Հոգաբարձուաց, ոչ

անագան ունին ձեռն արկանել 'ի յաւերժական յիշատա-
կաց արժանի շինութեան հանդիպակայ կրպակաց Ուսում-
նարանին, եթէ ոչ տայցուք միմեանց ձեռն օգնականու-
թեան, զիա՞րդ հնար է մեզ ունել զայս ամենայն, չէին
նախորդք մեր պակաս քան զմեզ, այլ խորթութիւնն մը-
տեալ ընդ մէջ՝ չկամեաց զայժ զամրութեան նոցա, ան-
ցին գնացին նոքա առանց թողլոյ ինչ զերևելի գործ յօ-
գուտ ազգի և եկեղեցւոյ։ Զուգութիւնն է մայր բարեաց և
անզուգութիւնն է ծնող չարեաց, զայս անհերքելի ճշմար-
տութիւն գիտեմք ամենեքեան, այլ գործովք յանզուգու-
թիւնն եմք հակամէտք։ Չգիտեմ զոր մասս բերէ մեզ։
եթէ 'ի ձեռն հաստատարիմ և ազգասէր աշխարհականաց
մատակարարեսցին մուտք և ելք նաև Հոգևոր Դպրոցաց,
թող թէ այսր Ուսումնարանի, որոյ վախճան՝ որպէս ցուցաւ
'ի վերոյ, չէ յայտ, ո՞ր դադարելոց է, ուսուցչութիւնն 'ի
Հոգևոր Դպրոցս չէ արգելեալ աշխարհականաց, իսկ Հո-
գաբարձուք ըստ ներկայ գրութեան կառավարչական մա-
սին Սինօդին պարտին լինել ոչ յաշխարհականաց, այլ
'ի հոգևորականաց ըստ օրինակի վերատեսչաց և խորհրդակա-
նաց հոգևոր գործոց։ 'Ի պաշտաման Հոգաբարձութեան
ես չտեսանեմ զեկեղեցական հոգևոր գործոց անտեսու-
թիւն, չիք 'ի սմին ոչ լուծումն պսակի, ոչ վերահայեցո-
ղութիւն եկեղեցական բարեկարգութեան և ոչ այլ ինչ
այսպիսեաց, պարտաւորութիւն Հոգաբարձութեանն նը-
շանակեալ է 'ի կանոնակի արժանայիշատակ Կաթուղիկո-
սին Ներսիսի յԹ-ն մարտի 1851 ամի, որոյ պատճէն դը-
տանի 'ի գործս Սինօդին։ և նոյն չէ երբէք արտաքս ելեալ
քան զիւրն սահմանն։ սակայն գիտեմք, թէ չիցեն և բա-
նաւոր արգելառիթք արձակելոյ զաշխարհական Հոգաբար-
ձուս և կարգելոյ զհոգևորականս, ո՞ր են այնոքիկ հոգե-
ւորականք վկայեալք հաւատարմութեամբ, բարեբարոյու-
թեամբ, արդիւնաւոր վաստակօք, և որ մեծն է, յանկու-
ցանօղք յինքեանս և զսէր և զյարգանս ժողովրդեան։ ըստ
մերում տարաբաղդութեան կամ կարի սակաւք են այնո-
քիկ, կամ չիք բնաւ, «Բազումք են կոչեցեալք, և սակաւք
են ընտրեալք», բազմաթիւ են համազգիք մեր բնակեալք

յՕսմանեան տէրութեան, դարաւոր փորձիւ տեսեալ թէ մի միայն հոգեւորականք չկարեն կառավարել զազգն յամենայն մասանց, համամիտ խորհրդակցութեամբ հոգեւորականաց և աշխարհականաց, որպէս յաքքայանիստն 'ի Պոլիս, նոյնպէս և յամենայն քաղաքս կարգեցին 'ի կառավարութիւն ազգային գործոց զերկուս ժողովս՝ հոգեւորական և աշխարհական, յորոց առաջնոյն գործ է տեսչութիւն կրօնական, ծիսական և եկեղեցական գործոց, իսկ երկրորդին է պաշտօն՝ տնօրէնութիւն ազգային դրամոց, վերահսկութիւն Ուսումնարանաց և ազգային աստուածահաճոյ շինուածոց. և զայս համարիմ ես իրաւացի. Մեզ յանձնեալ են յԱստուծոյ Եկեղեցին և հոգք հոգւոց հաւատացելոց և ոչ թէ պանձք նոցա. և երանի՜ թէ զառաջինն և եթ կարիցեմք 'ի գլուխ տանել զպաշտօն.

Գիտէք թէ Ուսումնարանն քաղաքիս բոլորովին մխագրեալ է 'ի Սեմինարիայ որպէս և կոչի արդէն, մի օրէնք են այնք. որք արգելուն կառավարել նոցա 'ի ձեռն աշխարհականաց, ըստ զօրութեան 113 յօդուածոյ Բարձրագոյն կամք հաստատեալ Կարգադրութեան վասն կառավարութեան գործոց Հայոց Եկեղեցւոյ 'ի Ռուսաստան՝ Հոգեւոր Դպրոցն Էջմիածնի պարտի լինել ընդ անմիջական տեսչութեամբ Պատրիարգ Կաթողիկոսին ամենայն Հայոց, իսկ այլ կղերիկոսական դպրոցք կախեալ կան ըղթեմակալ առաջնորդաց. և 'ի 114 յօդ. նոյն Կարգադրութեան նշանակեալ են պարտաւորութիւնք կառավարութեան Դպրոցաց ընդ տեսչութեամբ և պիտոյութեամբ Թեմակալ Արք Եպիսկոպոսաց, յորմէ բացայայտ երեւի թէ Հոգեւոր Դպրոցք պարտին ունել զկառավարութիւն (Նաչալստվօ), այլ թէ յումմէ և յորո՛ց պարտի բաղկանալ այն չէք նշանակեալ, այս ուրեմն չէք ինչ կարեւորութիւն ըղկարգեալն օտարբեր կառավարութիւն ոչնչացուցանել և ջանալ 'ի ձեռս բերել զանփորձ իմն կառավարութիւն.

Օմերոդրելոյն ամենայնէ 'ի կարճոյ խնդրհարկաւ յայտ արարեալ Ձերում Բարձր Սրբազնութեան, յաւելում զիմ կարծիս իբրու Անդամ Եկեղեցւոյ և ազգիս. իբրու Անդամ Սինոդին Էջմիածնի և իբրու Կառավարիչ Թե-

մեր Ռուսաստանի, թէ ըստ այժմեան դրութեան աշխարհիս մի միայն վարժարան քաղաքիս կարէ լինել ապաստանարան Հայոց Դպրութեան յայսոսիկ կողմանս, չասացից 'ի բոլոր Ռուսաստան. և 'ի կոչել յատկապէս Հայոց Ուսումնարան ընդ անուամբս Հոգևոր Դպրոց, զի մի՛ ձեռն օտար խառնեսցի 'ի կառավարութիւն սորին, սոյն սա ևեթ ունի զմիջոցս տարածանելոյ զազգային լեզու և զգրականութիւն, եթէ հոգևորականքս 'ի մերմէ կողմանէ ևս օժանդակ լիցուք սորայն յառաջդիմութեան, 'ի սոյն յայսմ Ուսումնարանէ, որպէս վեցամեայ փորձն վկայէ, մարթ է ակնունել ուսումնական և բարեբարոյ հոգևորականաց, արդարամիտ վաճառականաց և արժանաւոր արուեստաւորաց. եթէ մնասցէ ընդ տեսչութեամբ աշխարհական Հոգաբարձուաց, եթէ և մեք 'ի մերմէ կողմանէ ըստ ամենայն հնարից գործակից և օժանդակ լիցուք նմին, իսկ եթէ են 'ի մեզ տարանդաւոր անձինք՝ զօրաւորք առնել զբազմաց գործ միայնակ, բազումք են ապարէզք, թողցուք զՈւսումնարանն տեղւոյս կառավարել ըստ խրում ընթացից և դարձուսցուք զաչս յայլ քաղաքս, յորս 'ի սպառ չգտանին այնպիսիք. Ընդ սմին յաւելում և զայս՝ եթէ Բարձր Ազնուութիւն Ձեր բարեհաճեսցի յիմ ողջախոհ յայս կարծիս վասն թողլոյ յիւրում վիճակի զՀոգաբարձութիւնն Հոգևոր Դպրոցի տեղւոյս, պարտիք տալ Սինոդին զհրաման դադարեցուցանելոյ զիւր պահանջ յիշատակեալ 'ի վերատուեալ գրութեան կառավարչական մասին. անկախ յայսմանէ կարի կարևոր և օգտակար է և մշտնջենական փառս յաւելցէ անուան Ձերում, եթէ Բարձր Ազնուութիւն Ձեր՝ առ 'ի տալ այսմ Հոգաբարձութեան զձև հաստատուն կառավարութեան, հաճեսցի կարգադրել, զի Հոգաբարձուք ընտրեսցին եռամեայ ժամանակաւ յիշխանաց, յԱզնուականաց և 'ի պատուաւոր Քաղաքացեաց 'ի ձեռն Վիճակաւորի՝ խորհրդով համայնից քաղաքիս և ընտրեալքն կատարեսցեն զայն պաշտօն ընդ գլխաւոր կառավարութեամբ Վիճակաւորին, այս է ցանկութիւն ժողովրդոց քաղաքիս, նաև ներկայ Հոգաբարձուաց, որք յետ եօթնամեայ բազմաջան վաստակոց՝ թախանձեն զիս աշ-

դային խորհրդով նշանակել զայս 'ի տեղի իւրեանց և զին-քեանս արձակել 'ի նոյն պաշտօնէ որպէս զգտեալ 'ի ձեռս իւրեանց աւանդ յանձնեալ անձանց՝ նշանակելոց 'ի Վի-ճակաւորէն, և ինքեանք ազատ լիցին 'ի պատասխանատու-ութենէ առաջի Աստուծոյ, առաջի ժողովրդեան և առա-ջի կառավարութեան։

Պատճէն առաջադրութեան Վիճակաւոր Սարգիս Տէր Եպիսկոպոսէ առ Հոգաբարձուս Ուսումնարանի 'ի 14 փետրվարի 1859 ամի։

## Համար 44.

Ընթերցայ զհաղորդագրութիւն Վերատեսչի Ուսում-նարանի մերոյ Նորին Ազնուութեան պարոն Յովհաննի-սի Պայթմաղեան գրեալ առ Հոգաբարձուս յաղագս բարեկարգութեան աշակերտաց և վարժապետաց և նոցին 'ի նորոյ յաւելեալ ռոճկաց։

Ես այս պարտ անձին համարիմ յայտնել Ձերում Արժանանձնութեանց, նախ՝ զօգտից դաստիարակութեան, երկրորդ՝ զհանգամանաց շարունակելոց ցայս վայր 'ի մե-րում Ուսումնարանի առաջին և այժմեան դրութեան, և երրորդ՝ զհամաձայնութենէ մերմէ յաղագս 'ի նորոյ յաւե-լեալ ռոճկաց։

Բայց յայտնի են ձեզ, թէ դաստիարակութիւնք ման-կանց յամենայն դարս եղեն նախնական հոգ և գլխաւոր զպարապումն իշխանաց, Ազգաց և Առաջնորդաց ժողովր-դոց, վասն զի նովաւ միշտ պայծառացաւ Եկեղեցին Աս-տուծոյ, բնակեցան բարք և քաղցրացան վարք մարդկան, լուսաւորեցան նոցայն միտք և ուղղեցան սիրտք, հրահան-գութեամբ երիտասարդաց հասարակաց ծաղկեցաւ վաճա-ռականութիւնն, հարստացան ժողովուրդք, շինեցան քա-ղաքք և յերեան եկին բիւր ազգի բարիք կենցաղօգուտք։ Այսմ միտ եդեալ երջանկայիշատակ Կաթուղիկոսն ա-մենայն Հայոց Տէր Ներսէս՝ յաւուրս իւրոյ Առաջնոր-

գութեան 'ի Տփխիս կառոյց զայս Հայկազեան Ուսումնարանն, ուր մուտ արարին 'ի կրթութիւն մանկունք Հոգեւորականաց և ժողովրդականաց: Այժմ մերոյ անարժանութեան վիճակեալ նոյն պաշտօն, ուստի պարտաւորութիւն է և մեզ լինել հետամուտ նորին աստուածահաճոյ բաղձանաց և կամաց, բայց ցաւ է ինձ ասել, թէ այն Հոգեւոր Ուսումնարան յետ վերաչուելոյ Ներին Մեծափառութեան 'ի Բեսարաբիայ՝ կորոյս զիւր երջանիկ վիճակ. և որպէս յառաջն նոյնպէս և 'ի վերջին անգամ յաւուրս Ներին Մեծափառութեան ոչ սակաւ ընկալաւ զգունազան յեղափոխութիւնս 'ի լաւ և 'ի վատ՝ անկայուն 'ի միում մնալով կացութեան. Քանզի 'ի 1848 ամի որպէս երեւի ընտրեցան Հոգաբարձուք 'ի պատուելի արանց 'ի պահպանութիւն կարգաց և կանոնաց վարժարանաց, սակայն այնոքիկ ընտրեալքն ոչ կային 'ի նմին պաշտօնի 'ի բազումս, այլ յարուցեալ զանհամաձայնութիւն 'ի խորհուրդս և 'ի կարծիս իւրեանց ցրուեցան, յետ այնորիկ ձեր Ազնուութիւնն կալեալ զտեղի նորա և զպաշտօն, թէպէտ շարունակ յայսոր պահեցիք զհաւատարմութիւն, բազմացուցիք զօգտաւէտ և զչափաւոր շինութիւնս, ցուցիք զնշանաւոր գոմար յօգուտ այնր Ուսումնարանի, սակայն այսու ամենայնիւ դեռ ևս մասն ուսումնական և բարեկարգութիւննерին մնայր դայթ 'ի դայթ և յանկայուն վիճակի, ուստի առ 'ի բարւոքել հիմնովին զընթացս ուսման և կարգի հրաւիրեցաւ 'ի վերատեսչութիւն Ազնուական պարոն Պետրոսն Շանշեանց, բայց և այն ոչ յաջողեցաւ ընդ երկար. ըստ որում նա զմիայնութիւն և նեղ խնդրէր, և ոչ կամէր ունել ինքեան ընկեր կամ խորհրդակից, առ այս Ներին Մեծափառութիւնն անհամաձայն գտեալ՝ խափանեցաւ 'ի սպառ. և նա դարձաւ 'ի Ս. Պետերբուրգ, յետ նորա կալաւ զայն պաշտօն առ ժամանակ մի Տէր Գաբրիէլն Պատկանեանց, և ապա յորդելն Յակոբ վարժապետն Կարինեանց և պարոն Միքայէլն Պատկանեանց, յաւուրս որոց որպէս երեւի կարգ ուսումնական սակաւ առ սակաւ յառաջ խաղայր 'ի լաւ անդր, սակայն 'ի 1851 ամի չգիտեմ վասն էր, բայց որպէս լսի, ըստ թախանձանաց պարոն Ազա-

փոխի Դաւթեան Հակիմեանց, աղայ Դաւիթն Թա-մամշեանց և աղայ Դաւիթն Խոճերոդինեանց գրեն առ պա-րոն Պրոկուրորն սրբոյ Էջմիածնի Կարապետ Յովսէփեան Մատակեանց և խնդրեն հաճեցուցանել զկամս Նորին Մե-ծափառութեան 'ի դարձ պարոն Շանշեանցի 'ի վերատես-չութիւն նոյն Ուսումնարանի, զոր և նա յայտնեալ և ընկալեալ զշնորհաճութիւն Նորին Մեծափառութեան, ծանուցանէ այնոցիկ պատուելեաց, յորում նամակի գրէ, թէ «միայն այսու պայմանաւ, զի պարոն Շանշեանցն հա-«մաձայնութեամբ ձերով և Հոգաբարձուացն վարեսցէ զպա-«շտօն վերատեսչութեան և ոչ ըստ առաջնոյն որպէս «վարէր մէն միայն ըստ եղական ձայնիւ.» 'ի բառական մտաց այնր նամակի անկերև տեսանի համաձայնութիւն Նորին Մեծափառութեան, բայց ըստ ոչ ցանկութեան յիշեալ պարոն Շանշեանցի ըստ առաջնոյն կարգի:

Նոցին արժանանձնութիւնն հիմնեալ 'ի վերայ այսր նա-մակի, հրաւիրեալ են զպարոն Շանշեանցն. և նա վերա-դարձեալ է 'ի Տփխիս, 'ի լսելն զայս Նորին Սրբութիւնն 'ի 26 ապրիլի 1852 ամի համար 168 համաձայն գտեալ նո-ցին հրաւիրանաց հրամայէ ընդունել 'ի պաշտօն համահաճ խորհրդով 'ի վերատեսչութիւն զպարոն Պետրոս Շան-շեանց, ապա ըստ բառական մտաց այնր կոնդակի խնդրեն 'ի պարոն Շանշեանցէ գրոշմել 'ի դիր զմտաւորական ձև և զխնամանական նպատակ այնր շարունակութեան, զոր և կատարեալ զխնկականն առաքէ առ Նորին Մեծափառու-թիւնն և զպատճէնն առ նոցին Ազնուականութիւնս: Յետ որոյ Մեծափառութիւն Նորին տեսեալ՝ զի ուսումն և դիտութիւն ըստ այնր եղանակի և ձևոյ ոչ յառաջ խաղան 'ի լաւ անդր հակառակ յուսոյ իւրոյ և ակնկալու-թեան, այլ ըստ ամենայնի երևի ապարդիւն, նոյնպէս չը-կարողանայ յուսալ և յապայն, վասն որոյ ինքն յօրինէ զձև և զեղանակ դաստատութեան և առաքէ առ նոցին Ազնուութիւնս յ30 յունիսի 1854 ամի, համարաւ 233, յորում յետ խօսելոյ զառաջադիմութեանց և զշնորհկալ-դութեանց, ասէ «այլ սոյնպիսի իմ ցանկութիւն համա-«րիմ ցորդ ապարդիւն 'ի մերում Ուսումնարանի և չկա-

«բողոքնամ» յուսալ թէ ունիցի յաղագս» ապա բաժանէ զԱստուածաբանն 'ի չորս կարգս, յորս յականէ յանուանէ նշանակէ զառարկայս նոցին և զձև դասատուութեանց ըն-դուշացուցանելով միանգամայն 'ի դասատուութենէ ձեռա-գիր օրինակըք օտար Քրիստոնէական Վարդապետութեան, զոր ինքնակամ 'ի գործ դնէր պարոն Շանշեանցն.

Յետ գրելոյ Նորին Սրբութեան զայս կոնդակ և հրա-մայելոյ վարել ըստ այնմ պարապեցաւ նա համաձայն մտաց այնր կոնդակի ընդլայնել զնոյն կարգադրութիւն, նշանակելով յականէ յանուանէ զեղանակ և զձև ուսուց-չութեան և ուսանողաց, ըստ մեծի մասին հակամէտ յայն, զի ուսեալքն եղիցին քաջակիրթ յեկեղեցական և յԱստ-ուածաբանական առարկայս, բացառութեամբ քանի մի արուեստից, այն է մարդակազմութեանց, պատմութեանց և այլոց, վերստին զգուշացուցանելով 'ի դասատուութենէ Քրիստոնէական Վարդապետութեան օտար ձեռագիր օրի-նակօք. և աւարտեալ զնոյն կարգադրութիւն յայտնէ նո-ցին արժանանձնութեանց 'ի 1-ն մայիսի 1855 ամի համար 108, սակայն այսուքիկ երկու կոնդակք Նորին Վեհա-փառութեան մնացեալ էին և մնացին ըստ ամենայնի ան-կատար, մանաւանդ՝ որ վնասակար էր 'ի մասին Քրիստո-նէական Վարդապետութեան. և այնուհետև որպէս և ա-ռաջին նոյնպէս և յաղագս կարգ և բարեվայելչութիւն ու-սումնական կառավարութեանց մնացին ամենևին յողբալի դրութեան. Յետ այսորիկ եհաս լուրն Նորին Վեհա-փառութեան 'ի լինելն իւր 'ի սուրբ Էջմիածին երկու ան-ախորժ անգոսնելի և աղփափաս համբաւ անստորագիր նա-մակաւ, առաջինն թէ՝ Աստուածաբանութիւնք 'ի վար-դապետաց Հայոց շարադրեալ կատարելութ̃ք իւրեանց ոչ հա-սանեն Աստուածաբանութեանց Եւրոպական ազգաց Աստ-ուածաբանութեանց, մանաւանդ Գերմանացւոց. և թէ ար-դէն աշակերտք վերին դասատան ժայթքեն հետ զհետէ զմթերեալ անախորժ գրութիւնս և անհաւան գտանին շարադրութեանց և վարուց երանելի նախնեաց մերոց և զճգնողական վարս նոցա և զառաքինութիւնս յայտնի ար-համարհեն, իսկ երկրորդն՝ ատէն անդրելի գեռ. ևս. Ասուէ

Նորին Վեհափառութիւնն 'ի խոր խոցեալ 'ի սիրտ և 'ի հոգի գրեաց գպատասխանիս ձեռամբ Արժանանձնութեանց զառաջինն ի 13-ն օգոստոսի և զերկրորդն 'ի 17 նոյն ամսոյ 1855 ամի համարօք 183 և 205, յորս յետ խոստանալոյ առաքելոյ զմեզ վասն ապահովացուցանելոյ որպէս զինքն նոյնպէս զձեզ և զամենայն առաքելական Եկեղեցին Հայոց՝ համառօտակի գրէ զանախորժ և զվնասակար իրաց տարածելոյ յիւրում Ուսումնարանի: (1)

. . . . . . . . . . . . . . . . . . . .

Յետ այսորիկ կենդանւոյ դարձեալ գնալով գնայր և բոլորովին թուլանայր բարեկարգութիւն մերոյ Ուսումնարանի, մի միայն դատաւորութիւն Քրիստոնէական Արդարութեան ձեռագիր օրինակօք ոչ վերջանայր, թէև Կաթուղիկոսն յերկուսին կոնդակս իւր արդելեալ էր հաւտուցանել զՔրիստոնէական Արդարութիւն ձեռագիր օրինակօք, այլ տպեցելովք համաձայն առաքելական Եկեղեցւոյ Հայոց, բայց հրաման նորա մնաց անկատար:

'Ի վերջոյ պարոն Տանշեանցն անհաճոյ գտեալ ամենայն կարգադրութեանց և կանոնաց եղելոց 'ի Նորին Վեհափառութենէ՝ զիւր կամքը յառաջ վարել կամի, իսկ Նորին Վեհափառութիւնն նոյնպէս անհամաձայն գտեալ մնաց նորա և կամաց, ոչ թոյլատրէր առնել ըստ նորին հաճոյից, յայսոցիկ յերկուց ներհակ կամաց և հաճութեանց Ուսումնարանն էջ ը լրումն 'ի վերջին թշուառութիւն և աշակերտք նորին կային յողորմելի դրութեան թափառեալ աստ և անդ, յայտնի իսկ է, թէ քանիցս անգամ դուք և մեք 'ի միասին խնդրեցաք 'ի Նորին Վեհափառութենէ ընդարձակել պարոն Տանշեանցի առ 'ի վարել զիւր պաշտօն, բայց Նորին Սրբութիւնն յամենայն դէպս կրկնէր մի և նոյն հրաման, թէ ես միանգամայն

---

(1) Ծանօթութիւն՝ Նորին Բարձր Սրբազնութիւնն առ յառաջ բերէ բառս առ բառս զարդէն 'ի վեր անդր արտագրեալ կոնդակս Նորին Հայրապետի ընդ համարօք 183 և 205, զոր աւելորդ համարեցաւ կրկնել.

եղեալ եմ խնով կոնդակաւ զկարգ և զսահման, եթէ կա-
մի՛ կարէ վարիլ ըստ այնմ, ապա թէ ոչ ըստ Նորին կա-
մաց երբէք ընդդիմակել չկամիմ, մանաւանդ 'ի մասին Քրիստոնէական Առաքելութեան, մինչ այս մինչ այն Նորին Վեհափառութիւնն վճարեաց զառօրեայ կեանս թողով զԱւսումնարանն անդ այս յողբալի դրութեան։

Յետ այսորիկ Արժանաձնութիւն ձեր 'ի բարին դիտեալ միտս գտանել կամեցայք զեղանակ առ 'ի տալ զընթացս ուսման աշակերտաց, ուստի կարծեցիք զձև և զօրինակ դաստուութեան, քաղելով 'ի կոնդակէ Նորին Վեհափառութեան, վերստին հրաւիրելով 'ի նոյն պաշտօն զպարոն Րանշեանցն, բայց ոչ համաձայն ըստ մասց հանգուցելոյն, մանաւանդ ի մասին տնտեսական պարտաւորութեան, և այն՝ որպէս թէ 'ի հետևումն բանաւոր հրամանաց Տեառն Ներսիսի հանգուցեալ կաթուղիկոսի, ընդ այս ձեր ներգործութիւն անհամաձայն գտեալ իմ՝ չկամեցայ ստորագրել, ըստ որում չէր այնպէս. բայց որպէս դուք նոյնպէս և պատուելի Յակոբ վարժապետն Կարինեանց հաւաստի արար ինձ, թէ պարոն Րանշեանցն հանդերձեալ է անշուշտ գնալ 'ի Ս. Պետերբուրգ յետ մայիսի, ուրեմն բարւոք է բաժանիլ 'ի միմեանց շնորհակալութեամբ և բաւականութեամբ հանդերձ, մանաւանդ անբասիր պահել զանուն հանգուցելոյն յաղագս նորօրինակ թողլոյն զԱւսումնարանն յանկարգութեան. քաջ յայտնի էր ինձ, թէ նա չունի գնալ 'ի Պետերբուրգ որպէս և ասացի, բայց այսու ամենայնիւ զիջեալ 'ի բազմաթախանձ ձեր խնդիր՝ մակագրեցի և ես, սակայն այնու պայմանաւ, զի դաստուութիւն Քրիստոնէական Առաքելութեան եղիցի տպեալ մասնիւք համաձայն մտաց կոնդակի Նորին Սրբութեան, յետ որոյ գնացի ես 'ի սուրբ Էջմիածին և կացեալ անդ զամիսս ութն՝ դարձեա ըստ կանուխ նախասահմանութեան անհասանելի կամացն Աստուծոյ, որպէս թէ լրութիւն բանից արժանայիշատակ հանգուցելոյն Տեառն Ներսիսի և համաձայն նորին կոնդակաց՝ վերադարձայ, եթէ ոչ 'ի նորին կենդանութեան՝ գէթ զկնի մահուան եղէ վերահասու և տեսի,

ոչ ըստ նորին կամաց և ցանկութեանց յառաջանայ
ուսումն և բարեկարգութիւն 'ի նմին Դպրոցի, աշակերտք
շիջին ըստ իւրեանց հաճոյից ցիրեցան, բարձի թողի
զկանոնն արարեալ, ոչ զոյ հսկողութիւն բոլորովին և ոչ
հոգք. ոչ 'ի գիշերի և ոչ 'ի տունջեան, առնեն զոր
ինքեանք կամին. սանձել զանառակս հաճոյս նոցա ոչ ոք
գտանի. Հրաման Նորին Սեհափառութեան՝ մեր և ձեր
կարգադրութիւն միայն անէնեւին անկատար, անընդհատ շա-
րունակի զարձեալ դասատուութիւն Քրիստոնէական Վար-
դապետութեան ձեռագիր օրինակաւ յինքենէ շարադրեալ,
զոր քանիցս անգամ խոտիլ արգելեալ Նորին Սեհափա-
ռութիւնն իւրով կոնդակաւ. և յորպիսեաց յամենայն դէպս
ծագեալ է և ծագի վնաս Եկեղեցւոյ և հաւատոյ. Տեսեալ
իմ զայս վշտալի դիպուած՝ կոչեցի զձեզ զնոյն ինքն պա-
րոն Շահնշանեանցն, զպարոն Պրոկուրորն սորա Էջմիածնի և
զպարոն Պատկանեանցն և յետ հարուստ խօսակցութեանց
ցանկացայ տալ նմա զպատշաճեալն կանոն 'ի բաց բառ-
նալոյ 'ի նմանէ մի միայն զՔրիստոնէական Վարդապե-
տութիւն իբրև ոչ պատկանելի նոյնպիսւոյ մերում ու-
սումնարանի, 'ի լսելն զայս նորին Ազնուութեանն և գի-
տելով հաւաստի թէ այնուհետև չունի նա շարունակել
զդասատուութիւն Քրիստոնէական Վարդապետութեան,
այլ ոչ ես սպասեալ երկար ժամանակի կամ կարգաց յինէն
խոստացելոց, ինքնակամ հրաժարեալ 'ի բաց եկաց 'ի նոյն
պաշտօնէ, զորմէ դուք ձերով յայտարարութեամբ յայտ-
նեցիք ինձ յ9-ն հոկտեմբերի 1857 ամի, որում պատաս-
խանեցի և ես 'ի 12 նոյն ամսոյ, ըստ այսմ «Դամին Հո-
«գաբարձութեան քաջ յայտնի էր անհնարելի դրութիւն նոյն
«Ուսումնարանի 'ի քանի ամաց հետէ, ուստի 'ի մտանել
«իմ յայս քաղաք, փոյթ կալայ ըստ իմում սեպուհ պար-
«տաւորութեան դարձուցանել զկարգադրութիւն իմ 'ի վե-
«րայ Ուսումնարանից, համաձայն ինձ տուեալ իրաւանց
«և արտօնութեանց, վասն որոյ կոչեցի զյարգելի Հոգա-
«բարձուս գործն, զպարոն Պրոկուրորն Սինոդին Էջմիածնի,
«զաւագ վարժապետն Միքայէլն Պատկանեանց և զնոյն
«ինքն Ազնուական պարոն Պետրոս Շահնշանեանց, խորհուրդ

«ի մէջ բերելով առ 'ի վերածել զԱւստմնարանն 'ի լա-
«տինդր, և յետ բազմադիմի խօսակցութեանց կնքեցաք զբանս
«մեր այսու համառօտութեամբ, զի պարոն Պատկանեանցն
«յօրինեսցէ զյուսալի եղանակ կամ ձև, թէ վասն վար-
«ժապետաց, թէ վասն կարգի դասատանց և թէ վասն ան-
«խնամ մնացեալ աշակերտաց 'ի կողմանէ մշտական հրա-
«կողաց, այն է նադզիրատելաց. 'Ի ժողովն անդ պարոն
«Ռանչեանցն համաձայնեալ ասաց, բարի է. եթէ եղա-
«նակն այն կամ ձևն եղիցի համաձայն իմում նպատակի՝
«յօժարիմ 'ի շարունակել, իսկ եթէ ոչ՝ չկամիմ. Բայց
«այսու ամենայնիւ ոչ սպասեալ Նորին Սրբութեան
«հանդիպել վերանորոգեալ նոր կարգաւորութեանց՝ հրաժա-
«րել կամեցաւ 'ի պաշտօնէ, զորմէ և յայտնեաց ինձ պա-
«րոն վարժապետն Պատկանեանց. Ես այս պատշաճ հա-
«մարիմ յայտնել դմին, թէ պարոն Ռանչեանցն 'ի շա-
«րունակելն զպաշտօն իւր չունէր ինչ արգելառիթ յիմմէ
«կողմանէ բաց 'ի դասատուութենէ Կրօնագիտութեան,
«զոր ինքնայօրդոր կամօք սեպհականեալ էր ինքեան, և այն
«ձեռագիր օրինակօք՝ հակառակ եկեղեցական և կայսերա-
«կան օրինաց. Եկեղեցական՝ ըստ որում անտրակն այն չէ
«անկեալ ընդ դատաքննութեամբ Սինոդին Էջմիածնի կամ
«Կաթուղիկոսին ամենայն Հայոց. և Կայսերական՝ ըստ
«որում խստիւ արգելեալ է ամենայն աշխարհականաց ան-
«ձանց դասատուութիւն Կրօնագիտութեան. Սերեմն բա-
«ցառութեամբ այսր առարկայի՝ կարէր նա ըստ ամենայն
«իրաւանց տուելոց ինքեան շարունակել զիւր պաշտօն ընդ
«իմով առանձին վերահայեցողութեամբ՝ եթէ կամէր, ուս-
«տոր հաճեսցի Հոգաբարձութիւնդ յայտնել նմա զբա-
«րեհաճութիւն իմ 'ի լրումն արդէն յուցեալ բաղձանաց
«իւրոց».

Այս հրաւիրեցաք ժամանակաւոր կերպիւ'ի նոյն պաշտօն զպարոն Արղանեանցն. զայն Արղանեանցն՝ զոր երջանկայիշատակ Կաթուղիկոսն կարդեալ էր առաջին անդամ Հոգաբարձութեանդ 'ի 1848 ամի ընդ գիտնական պատուելեաց քաղաքիս, Զոր և շարունակեաց նա յաջող եղանա-

կաւ, որքան էր հնարաւոր, բայց աշակերտք վերին դասա-
տան և քանի մի անբարեմիտ անձինք՝ յաղագս հեռանալոյ
'ի նոյն պաշտօնէ պարոն Շանշեանցի, սկսան ուքսն և կա-
րացին աղմկել զմեր բարեկարգութիւն, գանգատ զվերա-
տեսչէ բառնալով հանապազ, բայց ինձ քաջ գոլով յայտ-
նի, թէ դիտաւորութիւն նոցա ոչ հայէր 'ի վերատեսչու-
թիւն Երզնեանցի, այլ 'ի խանգարումն բարեկարգու-
թեան, որով մարթասցին արկանել զգօղ 'ի վերայ առաջ-
նոյ կառավարութեան և առ 'ի ծածկել յաչաց ժողովր-
դոց զառաջին անբարեկարգ կառավարութիւնսն, սկսան
համբաւել զլուրս անտարժանս, թէպէտ իմ կամք էր արձակել
զաշակերտս վերին դասատան և մաքրել բոլորովին զխան-
գարեալ դրութիւն Ուսումնարանին, բայց բարեմտութիւն
ձեր անհաճոյ գտեալ ընդ այն՝ ցանկացայք այլ ևս մնալ
նոցա 'ի նմին դասատան յաղագս ուղղելոյ զինքեանս, սա-
կայն 'ի վերջոյ իմն ճշգրտեցան բանք և նոքա յարուցին զան-
տեղի աղմուկս. 'Ի վերջոյ Երզնեանցն յետ ոչ տանելոյ
զանտեղի զանազան աներդաբանութիւնս անբարեմիտ ան-
ձանց, ինքնակամ հրաժարեցաւ 'ի նոյն պաշտօնէ, 'ի
տեղի որոյ կարգեցաւ արդէն գովութեանց արժանաւոր նո-
րին Ազնուութիւն պարոն Յովհաննէսն Պաղարեան Պայթ-
մաղեանց առ 'ի ծառայել անվարձ ցգալ Նորին Վեհա-
փառութեան 'ի Տփխիս.

Անտարակոյս իսկ է, թէ երբ արձակեցան աշակերտք
վերին դասատան և վարեաց զպաշտօն վերատեսչութեան
պարոն Պայթմաղեանցն, Ուսումնարանն մեր՝ համարձա-
կիմ ասել, մերկացաւ զհանդերձ սգոյ և տխրութեան՝
վայելչուն և կանոն եդան 'ի կարգի, յաւելան ընտիր և գո-
վութեանց արժանաւոր վարժապետք, ուսումն և առաք-
կայք շարունակին ամենալաւ եղանակաւ. և կարգն օր յա-
ւուր պայծառանալ սկսանի. և մարթ է ասել, թէ այ-
սուհետև սիրտ մեր 'ի մերում կենդանութեան և ոսկերք
հանգուցեալ Հայրապետին 'ի շիրմի անշուշտ ունին մը-
խիթարել.

Իսկ վասն ռոճկաց վարժապետաց գրեմ ձերում արժանանա-
նուէնց, թէ ես բարւոք դատիմ ռուս և Ֆրանցուզ վարժա-

պնտաց և պարոն Կարինեանցի Թողուլ նոյնութ որպէս կարգադրեցաւ. և վասն միւս մնացելոց կախեալ կան զկամաց ձերոց` անօրինել խորախորհուրդ եղանակաւ։

Համար 547.

Տ. Կ.

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Ս. Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի` Պատուարժան և բարեջան Հոգաբարձուաց Ուսումնարանի Թիֆլիզոյ աղայ Աղէքսանդրի Թահիրեանց և աղայ Գէորգայ Մանդինեանց հարազատ որդւոց Հայաստանեայց առաքելական ամենաբարեպաշտ մերս սուրբ Եկեղեցւոյ սիրելեացդ նուիրեմք զողջոյն Քրիստոսական և ծանուցանեմք, զի զգրութիւն ձեր` որ 'ի 22 հոկտեմբերի սոյն ամի համարաւ 514, ժամանեցաւ առ մեզ յ31 նորին ամսոյ, ընդ որ արդարև ոչ սակաւ առաւելան վիշտք հոգւոյս մերոյ միանգամայն և անձնականս ակարութեան, այլ ոչ առաւել քան զփրութիւն հոգևոր որդւոյ մերոյ աղայ Յովհաննիսի Պայթմազեանց պատուարժան Տեսչի Ուսումնարանիդ. զի մինն զքաղաքավարական բառից և բանից բուռն հարեալ մերկանայր մեզ զմտաց գրողին, և մինն ընդ քաղաքավարութեան և զդուզնաքեայ ներգործութիւն ցասմնական կրիցն խառնեալ առաւելացոյց զվիշտս մեր զհոգւոյս ասեմ և անձնական ակարութեանս. բայց զի՞նչ. զի յընթացս իւրոց բանից անկեղծ հոգւով խոստովանութիւն զանձնէ իւրմէ հոգևոր որդի գոլ մերում հայրութեան չետ մեզ այնքան վշտանալ 'ի սիրտ` զի բնական և բարոյական ուսմամբ կրթեալ զանձն իւր որդի մերում հայրութեան գոլ անուանեաց, ուստի և այնպիսի վրդովմանց կրից նորին վերաւացի պատճառէ յառաջացեալ լինել ծանեաք և ոչ բնական կամ բարոյական ներգործութիւն ինչ հոգւոյ.

Ահ տարօրինակք էին իմաստք և երկուց գրութեանցն ձեր և յարգելի Պայթմազեանցի, զի երկոքին ես զմի և նոյն ծանօթութեանցն տային մեզ զտեղեկութիւնս զհրաժարմանէ յարգելի Յակոբ վարժապետի Կարինեանց 'ի պաշտօնէ ուսուցչութեան իւրոյ, ընդ նմին և ոմանց վարժապետաց, կարծելով թէ զկնի հրաժարման Սարգիս Ս.րբ Եպիսկոպոսի 'ի պաշտօնէ առաջնորդութեան Թիֆլիզու՝ տիրելոց է այնուհետև Կոնսիստորիայն տեղւոյդ 'ի վերայ Ուսումնարանիդ և վարժապետաց նորին՝ հաստատելով զայնօրինակ ընդունայն կարծիս իւրեանց ընդ մի յօդուած բան մեր դիտմամբ իւիք յաւելեալ 'ի ներքոյ կոնդակաց մերոց առ Սարգիս Ս.րբ Եպիսկոպոսն և առ Կոնսիստորիայն վասն դադարեցուցանել տալոյ զխաղարկութիւն Թատրոնական յՈւսումնարանի անդ. այլ թէ առ ի՞նչ դիտմամբ էր առ Կոնսիստորիայն գրելն մեր, որով և ազդել ձեզ իբրև 'ի մէնջ առ 'ի դադարեցուցանել զհանդէս Թատրոնական խաղարկութեան՝ յայտնեցաք որպէս ապագայական զգուշութեանցն էին այնք 'ի գրութեանս մերում առ պատուելի Տեսուչն Ուսումնարանիդ Յովհաննէսն Պայթմազեանց, 'ի նմանէ կարէք տեղեկանալ և հաւաստի լինել ըստ մասին. իսկ զայլոց պատճառացն տեղեկասջիք 'ի պարոն Նիկողայոսէ Տէր Յովսէփեանց, որում մեք ատեն լիովին հանգամանօք բանիւ բերանոյ բացածանուցեալ եմք անարժան դատեալ գրով յայտնելոյ ձեզ զայնս։

Իսկ դուք իբրև բողոք բառնալով զԿոնսիստորիայէն տեղւոյդ յաղագս հետ զհետէ նուազեցուցանելոյ նորա զզօրութիւնս կոնդակացն և լիակատար իրաւանցն շնորհելոց ձեզ յարժանայիշատակ 'ի Տէր հանգուցեալ նախորդէն մերմէ յ9 մարտի 1851 ամի համարօք 68, 69, 70, և ընդ այն իբրև կարի վշտակցեալ 'ի հոգի և 'ի սիրտ խնդրէք 'ի մէնջ գրաւոր բանիւք կամ յառաջադրել ձեզ կառավարել զՈւսումնարանն և զպաշտօնեայսն նմին ըստ զօրութեան յիշեալ կոնդակացն և իրաւանց. և կամ առանձին իմն կոնդակաւ մերով ցուցանել ձեզ զնոր իմն եղանակ կառավարութեան մինչև ցհաստատութիւն 'ի նորոյ կազմեցեալ սահմանադրութեանց Ուսումնարանին, զորմէ խոստանայք

ոչ անագան ներկայացուցանել մեզ։

Իսկ որ ահա այսու մերով կոնդակաւ յայտնեմք ձեզ, զի զայնոսիկ կոնդակսն շնորհեալսն ձեզ յ9 մարտի 1851 ամի համարք 68, 69 և 70. ընթերցեալ եմք մեք ատենին և չէ ինչ տարակոյս և մերոց հաճութեանց զօրութիւն իմաստից այնոցիկ կոնդակաց շնորհեցելոց ձեզ յերջանկայիշատակ նախորդէն մերմէ ՚ի 1851 ամի համարք 68, 69 և 70. թէպէտ դոն ՚ի նոսին փոփոխութեանց կարօտեալ բանք ինչ՝ զորս ունիմք կարգադրել, միայն առ այժմ առ ՚ի չթուլել զներկայ կառավարութիւն Ուսումնարանին ըստ պատմելոյ ձեր ՚ի նմին անկարգութեան, որ ոչ սակաւ վընասուց է առիթ թէ ըստ ուսումնական մասին և թէ ըստ տնտեսական ծախուց. այսու մերով կոնդակաւ յառաջադրեմք ձեզ իբրև հաստատուն Հոգաբարձուաց ջանալ զառաջս կալուլ այնօրինակ անպատեհ անցից ուսումնարանական կառավարութեանց, հրաւիրելով ընդ ձեզ և պատուարժան Տեառն Ուսումնարանին զաղայ Յովհաննէսն Պայթմազեանց ՚ի միասին համակամ հաճութեամբ ջանալ ըստ առաջնոյն ձևակերպել զկառավարութիւնս Ուսումնարանին ըստ ուսումնական և տնտեսական մասին ծանր համարելով վասն ազգի և Եկեղեցւոյ զայսպէական կորուստ ժամանակի ուսումնառութեան աշակերտաց, և զվարժապետսն՝ որք հրաժարեալք են ՚ի պաշտամանց իւրեանց՝ պարտաւորէ շէզ պաշտօն հաստատուն Հոգաբարձութեանն ձերոց հրաւիրել դարձեալ յառաջին պաշտօն ուսուցչութեան իւրեանց՝ զի չէ տէր իրաւանց Կոնսիստորիայն տիրել ՚ի վերայ նոցա կամ Ուսումնարանին. իսկ եթէ ոչ յօժարեսցին դարձեալ յանձն առնուլ զհրաւէր ձեր՝ զայլ ոք յուսումն ՚ի տեղի նոցա ընտրեսջիք ՚ի պաշտօն ուսուցչութեան.

Զայս ես ոչ անարժան դատեցաք յայտնել ձեզ, զի Ուսումնարանն այն գոլով ըստ կոչման իւրում Հոգեւոր, պարտ է և ամենից որդեգրելոց նմին յետ աւարտման զընթացս ուսման իւրեանց լինել հոգեւորական. բայց որպէս լսեմք ՚ի քանից երկուքն հազիւ յանձն առնուն ըզկոչումն հոգևորականութեան, զոր ըստ հոգևոր կոչման անվայել դատիմք մինչ իսպառ։

Ողջ լերո՛ւք գօրացեալ շնորհօք սուրբ Հոգւոյն 'ի պարծանս ազգիս և Եկեղեցւոյ աներկմիտ յուսով ակնկալեալ վասն այնօրինակ ազգասիրական հոգւով ջանասիրութեանց և հոգատարութեանց ընդունելութեան վարձուց բարեաց աստ և 'ի հանդերձելումն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. զի և մեք եմք և եղիցուք յամենայն կեանս մեր միշտ բարեմաղթ առ Աստուած վասն ձեր և ձերայնոց, ևս և վասն լրութեան ամենասիրելի ազգիս Հայոց: յԱմի փրկչական 1860, յՅ Նոյեմբերի. 'ի սուրբ Էջմիածին:

'Ի վերոյ բնագրին՝ Կաթողիկոս ամենայն
Հայոց ՄԱՏԹԷՈՍ.

Պատճէն Հրամանագրի Սինոդոսին Էջմիածնի յանուն Հոգաբարձուաց Ուսումնարանի:

Համար 566.

ՀՐԱՄԱՆ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ 'ի Լուսաւորչական Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի Հոգաբարձուաց Հոգևոր Ուսումնարանին Հայոց Տփխիսու, ըստ ՀՐԱՄԱՆԻ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ 'ի Սինոդիս լուան զյայտարարութիւն Ատենադպրի Սորին յանուն Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ 'ի 22 մարտի տարւոյս և 'ի Նորին Սրբութենէ մակագրութեամբ առեալն 'ի տնօրէնութիւն Սինոդիս, յորում գրէ թէ՝ պատիւ ունիմ ընդ սմին մատուցանել Ձերում ընթացակատար Վեհափառութեան զընդհանուր ցուցակս մտից և ծախուց եղելոց 'ի հաշուէքննութենէ հոգաբարձական կառավարութեան Հոգևոր Ուսումնարանի Հայոց Տփխիսայ, ըստ պատուիրանի Ձերում Վեհափառութեան

տուեալ է Սրբազան Սարգիս Ա.րք Եպիսկոպոսն առանձին կոնդակօք ։ Արդ յետ այսր հարկ համարիմ յանդիման առնել Ձերում Վեհափառութեան զհամառօտ նկարագիր եղանակի կառավարութեան Ուսումնարանի առ հասարակ ըստ ներքին և արտաքին մասանցն, և պատճառն տարաձայն առարկութեանց զայնմանէ ումանց 'ի հայազգեաց տեղւոյն և զխօսս նոցա առ այն, զորս ես կարեօք չափ կարացի գիտել, հասկանալ, գաղափարել և կշռել յընթացս իմում անդ կացութեան ճիշդ և միջամուխ հարցուխնդիր հետամտութեամբ։ 'Ի սկզբան անդ կարգելոյ Ժողովարանութեան ըստ անընդմիջական տնօրէնութեան հանգուցեալ Տեառն Ներսիսի Սրբազնագոյն Կաթուղիկոսի չէ կանոնաւորեալ 'ի նմանէ ոճ ինչ կամ եղանակ կարգի գործառնութեան 'ի մասին վարչութեան կառավարութեան Ժողովոյ Դպրոցին, այլ կրողութիւնք նոցա ըստ այնց պարտաւորութեանց սահմանեալ են երկտեսակ պայմանաւ՝ զհամար արդեանց և ծախուց Ուսումնարանին տալ յիւրաքանչիւրում քառորդս ամսոց Կոնսիստորիային և Կոնսիստորիայն Սինոդին։ Որով կարգաւ և նոքա անժխտելի և անխափան հրահանգեալ են զամենայն ժամանակս իւրեանց պաշտօնավարութեանց։ Ըստ 'ի վերայ այսր ամենայնի առ առաւել ճիշդ և հարազատ պահպանութիւն օգտի Ուսումնարանի հեռատես զգուշութեամբ սահմանեալ են 'ի միջի իւրեանց զկոլլեժիական կարգ գործավարութեան և համեմատ այնմ վարեալ զամենայն զգործս իւրեանց այնպէս, զի ըստ իւրաքանչիւր գրագրութեանց օտար տեղեաց և անձանց կազմեալք կան առանձին գործք, և վասն իւրաքանչիւր նշանաւոր կամ սակաւաքանակ դրամոց 'ի նուիրանաց կամ յայլոց աղբերաց մուծելոց սկսեալ 'ի միոյ կոպէկէ 'ի վեր կազմեալք են նախընթացաբար օրագրական սահմանադրութիւնք և այնպէս յանձնեալք 'ի տեսչութիւն գանձապետին առանձնապէս պարտաւորելոյ յայն գործ, նոյնպէս և վարեալ են զդրամականն ծախսարարութիւն հատարմացուցմամբ յօդուածոց ծախուցն վաւերական ստորագրութեամբք։ Ընկալս յայսմ ամենայնէ գործք տնտեսարանին վարին այլազգ կարգապահութեամբ 'ի ձեռն 'ի

Պարգեւալ ծախսարարաց է՝ անընդմիջական վերահասութեամբ առանձին վերատեսչի. Գրագրութիւնք ու հասարակ վարին 'ի ձեռն առանձին գործակալի. որում և յանձնացուցեալ է ռոճիկ փոխան աշխատանաց յարդեանց Սեմինարանին. Ըստ տեսակաց առարկայից և մտից և ծախուց նոցա կազմեալք կան առանձին մատեանք յիւրաքանչիւր ամի առանձինն. Այսոքիկ մատեանք չեն տուեալք նոցա 'ի Թեմական Իշխանութենէ տեղւոյն և կամ 'ի Սինոդէն ժապաւինեալ և կնքեալ արքունի կնքով, այլ նոքա ինքեանք են տուեալք գանձապետին վարել ըստ կարգին և խրատուն տրեցելոյ նոցա օրագրութեամբ Հոգաբարձութեանն. Յայտնի պահպանեալ է՝ որպէս 'ի վերն ասացի, Ճշմարտութիւն ըստ չափու կարեաց միջոցաց և հրահանգութեան Հոգաբարձութեանն. Հաշիւք նոցա և նոյն իսկ կրպակին մոմավաճառութեանն՝ որ ունի զշող-կալ յիւրում հաշուապահութեան ընդ հոգաբարձական գործոց, և որ մինչ ցամն 1858 դնեալ է ընդ հատուկ տեսչութեամբ միոյ 'ի Հոգաբարձուացն, Ազնուական Կաւթէի Եկեղեցեաց, բաղդատութեամբ ընդ մատենիցն իւրաքանչիւր առարկայից և վերաբերեալ նոցա գործոց երևեցան ըստ ամենայնի ճիշդ և համեմատ, այն է՝ մուտք ընդ մտից, և ծախքն ընդ ծախուց. Հոգաբարձուք յընթացս շարունակութեան այնպիսի հոգաբարձական պարտաւորութեան հանդիպեցեալ են ոչ սակաւ արդիւնաւոր և ջերմեռանդ աշխատակրութեամբք 'ի շահ Սեմինարանին. Արգասիք աշխատանաց նոցա են հոյակապ և գեղեցկաշէն շինութիւն եկեղեցւոյն յանուն սրբոյն Գէորգայ Թէքէլթու, որոյ շինութիւնն տակաւին 'ի շարունակութեան է. և այժմ յայս շուտով կատարածի ըստ փոյթեռանդն հոգատարութեան Հոգաբարձուացն. Բազմասենեակ երկյարկեան շինուածք առընթեր նոյն եկեղեցւոյ յարմարք յընդունելութիւն բազմաթիւ ուխտաւորաց յաճախելոց անդր յուխտակատարութիւն՝ պատճառ են ըստ մեծի մասին նոցա վաստակոց. Թողում առնել զմիւս նորոգութիւնս և շինուածս, որ յայլ և յայլ տեղիս Երնգիսու, Նիրամաւորի և այլոց Սեւաստանեաց, որք նոյն-

պէս որդեակք են նոցա աշխատանաց։ Ուշադրութեան հոգատարութիւն Հոգաբարձուաց 'ի յաւելումն աղբերց արդեանց Ուսումնարանին հանդիսանայ յայտնապէս և յայլ նիւթական օգուտս, մերթ անպահական նուիրատուութեամբք նոցա, գլխաւորապէս Չիտուլեարնի Աւէտնիկ Թահրիեանցի, որպէս յայտնի է և 'ի հաշուեցուցակացն, և մերթ համոզմամբ և յորդորմամբ այլոց 'ի նոյն ազգաշահ նուէրագործութիւնս դրամովք և այլ կալուածովք յորոց ոմանք արդէն մտեալք 'ի տնտեսութիւն Ուսումնարանին աճեցուցանեն և բարգաւաճեն զգումարն Ուսումնարանի, և այնու բացեալ լինի նորանոր ճանապարհ զարգացման և յառաջադիմութեան Դպրոցի և այլք հանդերձեալ են մտանել։ Ընդ նոյին հոգատար վերահասութեամբ է գնեալ գետինն, նոյն և կառուցումն շինուածոց, ուր զետեղի այժմ Ուսումնարանն։ Գործք վաստակոց ձեռաց նոցա է մեծածախ շինութիւնն հանդիպոյ Ուսումնարանին, որ յայսմ ամի յաւարտ հասեալ մեծաւ հայթհայթանօք և փոխակալութեամբ դրամոց ըստ պակասութեան դրամական միջոցացն Ուսումնարանի՝ տուաւ 'ի վարձու բաւական շահաւէտ գնով, յոյս մեծ է զի ընդ անցանել ամաց հետ զհետէ այնոքիկ շինուածք արդիւնաւորեսցին և ևս թանգագին վարձատրութեամբ։ Ըստ այսոցիկ հաստատուն, մշտատև և անսպառ աղբերաց արդեանց Ուսումնարանն այն արդէն ապահովեալ գտանի և օր ըստ օրէ աճեալ և բարգաւաճեալ աշխատասիրութեամբ ջերմեռանդ և ազգասէր անձանց՝ կարէ անշուշտ մատակցել յիւրոցն նիւթական բարութեանց և այլոց նպաստակարօտ Ուսումնարանաց և Հոգևոր Դպրոցաց ազգիս, որք յայլ վիճակս սակաւաւորս և ակարս արդեամբք։ Շինուածք նորակառոյց Ուսումնարանին՝ ուր զետեղին այժմ ուսանողք, թէպէտ ըստ ձևոյն է հոյակապ և բազմաթարան, բայց ըստ ինչ ինչ հանգամանաց իբր խմբման նկատման կարօտի առաւել ընդարձակութեան, նախ՝ զի թիւք ուսանողաց օր ըստ օրէ յաւելուն 'ի զանազան հեռաւոր և մերձաւոր տեղեաց, և Ուսումնարանն անձկանայ և պակասի 'ի յարմարութեանց բնակութեան, այլ որքան լայն ընդարձակ են շինուածք, այնքան և օգնի է 'ի

նոցին մաքուր. աշակերտք առողջ և ազատ գլխաւորապէս 'ի կացութեան իւրեանց, առանց որոյ անկարութիւնք ֆիզիքականապէս և բարոյականապէս անխուսափելի հետևանք են վասն ուսանողին, ուստի և խանգարումն առողջութեան աշակերտաց, տարապարտ կորուստ թանգագին ժամանակի և յետաձգութիւն յառաջադիմութեան ուսանողին. և երկրորդ՝ զի Ուսումնարանն այն չունի զառաջեաւ պարտէզ կամ պարապ տեղի, ուր աշակերտք 'ի ժամս ազատս յուսումնառութենէ կարիցեն զբաղել 'ի կրկնութիւնս դասիցըն, 'ի շարագրութիւնս և 'ի յօրինուածս բանից, որք պահանջեն բաւականապէս զառանձնութիւն. Նա մանաւանդ վասն անմեղ խաղուց աշակերտաց, յաւէտ փոքրահասակացն, որոց անշուշտ կարևոր է գիմնաստիկա, (անձնավարժութիւն) 'ի պահպանութիւն ֆիզիքական առողջութեան նոցա և հետևաբար մտաւորական ուժոյ և կարողութեան. Աստի առ 'ի մերժել զայսպիսի անյարմարութիւնս՝ որք յՈւսումնարանի անդ, Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան է փոյթ հոգալ զհոգս 'ի պատեհ ժամու, ըստ ներման միջոցացն կառուցանել առաւել յարմարաւոր Ուսումնարան 'ի վերայ պարապ գետնոյն պատկանելոյ նոյն իսկ Ուսումնարանի, որ զառաջեաւ նորակառոյց շինուածոցն. Ուսանողք յՈւսումնարանի անդ ըստ մեծի մասին եկաւորք յայլ և այլ տեղեաց Թեմին Վրաստանի աշխատասէրք են և ուսումնասէրք. Յառաջադիմութիւն նոցա յառաջարկելի ուսման զգալի է և ակներև. Ուսուցիչք կարեօք չափ չխնայեն զաշխատանս իւրեանց յօգուտ ուսանողացն. Որքա պարտաւորեալք են ըստ չափու աշխատանացն և ժամու ուսումնատուութեան ընկալնուլ զվարձ ռոճկի, զանցառուքն կամ յետնամնայք ըստ օրինի և իցէ պատճառանաց սակաւուք գէթ ժամուք 'ի սահմանեալ ժամանակէն՝ զրկին յիւրեանց յատկացուցեալ վարձուց. Ընդ բարգաւաճիլ ուսմանն և ընդ զարգանալ աշակերտաց՝ 'ի նմին՝ յորում զարդիս բազումք հանդիսանան, առաւել հմտագոյն և քաջուսումն ուսուցչաց պէտս ունի Ուսումնարանն. Անքուն հսկողութիւն և ազգասիրական հոգւով ջանադրութիւն Տեառն նորին պարոն Յովհաննու Պայթ-

Մագլեանց՝ յարուցանէ որպէս յուսանողսն, նոյնպէս և յուսուցիչսն զջերմեռանդութիւն 'ի ճիշդ և յարաջան կատարումն գործոց և պաշտօնից իւրեանց. Ուստիճանաւորա այս չմնայ զմերջին ճիգն 'ի պայծառութիւն Ուսումնարանին և յառաջադիմութիւն նորին, յանագան պահու կէսագիշերոյ անակնկալ երթևեկութիւն նորա յՈւսումնարանն տայ ամենեցուն 'ի պաշտօնակալաց զառանձին զգաստութիւն և արիութիւն ջանից. Ննջարանք, մահճակալք, սեղանատուն և առ հասարակ սպասուկարգ 'ի պէտս աշակերտաց են մաքուրք, յարդարք և բարւոք ձևաւորեալք. Ուրեքիկ և այսօրինակ կարգապահութիւնք՝ որքան Հոգաբարձուացն են հոգոց պտուղք, այնքան թերևս աւելի մշտապատրաստ անձամբ վերահասութիւն պարոն Դայթմագեանի. Հիւանդանոցն վասն աշակերտաց է առանձին, նպաստ և բժշկական դեղատուութեանն հոգս է պարտատան 'ի բժշկապետ Յովհաննիսեանն, որ առանց իրիք ակընկալութեան և վարձուց յընթացս աւելի քան երկոտասան ամաց վարէ զայն պարտաւորութիւն շարժեալ 'ի մի և նոյն և եթ յազգասիրական հոգւոյ առ սերընդակից մանկունս ազգիս. Տնտեսական կառավարութեանն գործ յեմուտ անդ լինելութեան թուլակի ընթանայր, պատճառն որոյ է պաղութիւն Հոգաբարձուաց առ ստանձնեալ պաշտօնս իւրեանց յետ բազմադիմի բամբասանաց զնոցուն հարազատութենէ 'ի գործս կառավարութեան Ուսումնարանին. Բնական է՝ ուր բազումք են մարդիկ, անդ և բազում տարաձայնութիւնք, բազմիցս յաջողութիւն և փառաւորութիւն միոյ պատճառէ 'ի միւսն նախանձ և ատելութիւն, բաց այսմ 'ի հայազգի հասարակութեանն Տփխիսոյ՝ որ որքան կարացի նկատել, տարազանեալք մին 'ի միւսոյն գիտութեամբ, հասկացողութեամբ, ուսմամբ և հայեցուածովք բաժանեալք են 'ի կուսակցութիւնս. Միոյն կամք հակառակ է միւսոյն. ուստի և հարկաւ զհետ գայ անհամաձայնութիւն մտաց և կամաց, և յայնմանէ տհաճութիւն և գժտութիւն. Արդ ամենք 'ի հասարակութենէ անդոյն չկարեմ հաստատապէս պնդել և ոչ իսկ հերքել ազգասիրական արդեօք նպատակաւ, թէ անձնական շա-

հուց ծանուցեն զՀոգաբարձուս անհարազատ շահուց Ու-
սումնարանին և հարազատ անձնական օգտի իւրեանց յոյժ
պաշտօնավարութեան. և այս կարծիք հաստատեն նոքա այ-
նու յաւէտ ենթադատութեամբ, իբրու թէ մուտք և ծախք
Ուսումնարանին տպատանեալ կան 'ի լոկ կամս նոցա ա-
ռանց կանոնաւոր հաշուեպահութեան, այն է վաճառել,
բաշխել, տալ, առնուլ կամի զկամաց նոցա, և թէ ծախք
մեծամեծք շինուածոց եղելոց ընդ նոցուն տեսչութեամբ ա-
ռաւել են բազմօք քան զոր պահանջէին արդեօք վասն նոյն
շինութեանց. Աստ մերջնոյն աւելորդ համարիմ բացա-
տրել ինչ, վասն զի գործք Հոգաբարձուաց և կանոնաւոր
հաշուեպահութիւնք նոցա այտացոյցք են և վկայ առա-
գութեան կամ անստուգութեան կասկածողական բանից
զնոցանէ. Իսկ վասն երկրորդին չեմ և ես անհամաձայն,
վասն զի դատելով զընդարձակութիւն բազմատեսին կա-
ռավարութեան, զմեծամեծս շինութիւնս, զբազմաձեւն մը-
շակութիւնս ընդ վերակացութեամբ զանազան անձանց
(բազմիցս առանց վարձուց) անհնարին է չթոյլատրել կո-
րուստ դրամոց, այնու առաւել պատճառանօք, զի Հոգա-
բարձուք ըստ բազմազբաղ անձնական վաճառաշահութեան
և կարևոր գործոց անձեռնհաս գտեալ երբեմն անձամբ
գործել զվերահասութիւնս, պարտաւորեալ առնեն զգործն շի-
նութեան 'ի ձեռս օտարաց, բայց այն կորուստ և վաս-
նումն դրամոց չէ մարթ յատկապէս դատել յօգուտ սեպ-
հական ակնկալութեան շահուց Հոգաբարձուացն, որպէս
վկայեն նոյն իսկ կարծիքաւորք. և չիք իսկ առ այն ըստ ի-
մումս հետազօտութեան այտացոյց կամ հաւաստիք. Տե-
սեալ եմ զխառնակութիւնս 'ի մասունս բաժանեալ հաշուա-
կութեան և անելով Սրբազան Սարգիս Արք. Եպիսկո-
պոսն Հրամ. զկոնդակ Վեհափառ Տեառնդ, զշահուցն գործ
առարտ հանել ըստ իրաւանցն տուելոց Հոգաբարձուացն
'ի նախորդէ Ձերմէ հանգուցեալ Սրբազնագոյն Կաթողի-
կոսէն Ներսիսէ, բարւոք դատեցաւ, և հարկաւ իսկ այն-
պէս պահանջէր ըստ հանգամանաց իւրեանց տնտեսին կերպա-
ընել զհաշուեքննականն յանձնարարութիւն, որպէս և զըն-
ծիցաւ; բայց առ 'ի չթողուլ զայն թողօսն յաշաց հաստա-

բոկութեանն, զի մի՛ կարծիք բամբասանաց որպէս 'ի վե-
րայ հոգաբարձուաց, նոյնպէս և զմեզ, իբրև կուսակից
և կամակից անհարազատութեանց հոգաբարձուացն, ժո-
ղով գումարեաց յականաւորաց քաղաքին, որ և նկատեալ
զհամառօտութիւն հաշուոցն հոգաբարձութեանն, զորս
'ի նոցանէ գտան բաւական աշխատասիրութեամբ նոցա, և
զորս լուաւ և եթ մնացեալ թողլին 'ի թաքնութեան
զմտաց իւրեանց խորհուրդ, և զորս զգանի մի հակառա-
կան բանս յառաջ բերեալ ոչ յօգուտ և ոչ 'ի փառս հո-
գաբարձուացն, լուծաւ այնպէս ժողովն՝ չվճարեալ ինչ վճ-
ռողապէս. Իսկ առ առաջարկութիւն Սարգիս Արք Եպիս-
կոպոսի վասն ընտրելոյ 'ի միջոյ հասարակութեան զայս բա-
րեյոյս և գործունեայս 'ի պաշտօն հոգաբարձութեան 'ի
տեղի արդեան հոգաբարձուաց որք ցանկան հրաժեշտ տալ
յայնմ պարտաւորութենէ, ոչ ոք եղև յանձնառու 'ի ժո-
ղովրդականաց առնուլ վարել զայն գործ բազմահոգս, ծան-
րակշիռ և անվարձ: Հոգաբարձուք վաստակեալք և գրե-
թէ տաղտկացեալք ի տանձնեալ պարտաւորութեանց,
ցանկան արդարև և քանիցս անգամ առաջարկեցին Սըր-
բազան Սարգիս Արք Եպիսկոպոսին և ինձ, հոգալ ընտ-
րել և կարգել զայլս 'ի տեղի նոցա, բայց համոզանք իմ
և Սրբազան Առաջնորդին խափան եղեւ առ ժամս խոր-
հրդոց նոցա մինչ ցտնօրէնութիւն Ձերդ Սրբութեան. Արդ
մնայ 'ի կամս Վեհափառութեանդ կամ յորդորել զնոսա
առանձին կոնդակաւ 'ի վարումն յիշեալ պարտաւորութեանց
մինչ ցընտրութիւն 'ի տեղի նոցա այլոց կամ հաճիլ ընդ-
արձակումն նոցա 'ի հոգաբարձական գործոց. Սոյն զայս
ես հարկ համարիմ յայտնել Ձերում Սրբութեան, զի
'ի վերջին դէպս արձակման նոցա իսկ 'ի պաշտօնից օգ-
տաւէտ համարիմ այսպէս չթողուլ 'ի ձեռաց զմին 'ի
նոցունց զպարոն Թահիրեանցն, այրն ջերմեռանդ բազմա-
շահ, կիրթ և հմուտ 'ի գործս տնտեսական կառավարու-
թեան. Մի 'ի գլխաւոր առարկայից տրտունջմանց ժողո-
վրդեան զհոգաբարձուացն է, զի երկուսն 'ի նոցանէ գո-
լով արք վաճառականք և մին ոչ այնքան ուսեալ 'ի
գիտութիւնս արհեստից չկարեն ճանաչել և դիտել զի-

ղանակ և ոչ ընթացից դաստիարակութեան և ուսմանս, և ոչ գնահատութիւն աշխատանաց և յառաջադիմութեան ուսուցչաց և աշակերտաց։ Սորի աղ. ՚ի բաւարարել ար-դարոյի վարկ ժողովրդեան և լինել զայս ամենակարեւոր պակասութիւն պարտի ընտրեալ կարգել նաև զերկու կամ զերիս քաջակիրթ կամ ուսումնական անձինս ՚ի Հոգա-բարձուս, այնպէս զի նոքա հոգւով համաձայնութեան և ազգասիրութե՛ վառեալ չխնայեսցեն զաշխատանս և զճ՛իգն իւրեանց ՚ի լուսաւորութիւն համասեռ հայազգի մանկտւոյն և ՚ի ձեռն նոցա տարածել լուսումն գիտութեան ՚ի հե-ռաւոր և ՚ի մերձաւոր վայրս հայաբնակ սահմանաց։ Այն բազմաշահ և կարեւոր գործ բարւոք դատիմ ըստ իմումս մերձաւոր ծանաչողութեան զկօլլէժսկի սովէտնիկ բժշկա-պետ Յարութիւնն Յովհաննիսեան, զնադվօրնի Սովէտ-նիկ Յովհաննէսն Պապարեան Պայթմազեանց և զկօլ-լէժսկի Ասեսօր Սամանոս Պօղոսեան Լազրեանց, զորս ուսումնականս, ազգասէրս, փութեռանդս յօգուտ ազգին, կարեմ համարձակ ասել, թէ ոչքս բաց ՚ի բարոյական ազդեցութեանց, զորս ունին ՚ի հասարակութեան և կա-րեն ունել յՈւսումնարանի անդ, ունին լինել և շահա-բեր յոյժ յոյժ նիւթական նուիրագործութեամբք և յոր-դորմամբ այլոց յայն բարեմիտ նպատակ, և թերևս անխը-նայ յիւրեանց սեպհականութեանց կարեօք չափ ըստ նե-րելոյ և ձեռնտուութեան անձնական միջոցացն, միայն այ-նու, զի տնօրէնութիւն կարգի և եղանակի ընթացից ու-սումնատուութեան և այլոց բարեկարգութեանց Ուսում-նարանին յանձնեսցի գլխովին նոցա պարտաւորական իմն պայմանաւ, այն է՝ զի յետ կանոնադրելոյ զուսումնարանա-կան կառավարութիւն ՚ի հարկէ մուծանելով յայն և զե-ղանակ տնտեսական կառավարութեան, համակամ գիտու-Հոգաբարձուաց տնտեսական մասին առանձին առանձին, նոյնպէս և զառարկայս յարաբերութեանց երկուց մասանց ընդ իւրեարս տացեն զհաշիւս և զհամար գործողութեանց իւ-րեանց ՚ի ձեռն Թեմական Իշխանութեան Սինոդին սրբոյ Էջմիածնի յերկուս նուագս ՚ի տարին. իսկ ՚ի դէպս նո-րոգ կարգադրութեանց իմիք կամ օգտաւէտ դասեցեալ

նորաձեւութեանց 'ի կառավարութեան Ս. ուսմնարանի, պարտի յառաջագոյն խնդրել զլուծումն Սինոդին նախընթաց առաջարկմամբ կանոնադրութեանն կամ խնդրոյն ենթադատութեան 'ի տես և 'ի դատ նորին, բայց և վիճակաւորն իբրև միջնորդ դէտ և պաշտպան օգտի և վնասուց հաւատացեալ. Նմա տեսչութեանն գտցի խորհրդակից կարգադրութեանց և տնօրէնութեանց Հոգաբարձուացն ։ Համաձայնող պարտաւորութիւնք Հոգաբարձուաց չեն լծորդեալք ընդ որ և իցէ նիւթական օգտից և վարձուց, վասն որոյ և ստանձնողքն այնց պարտաւորութեանց անմնադիւր իւեանց յօժարութեամբ կամաց և բաղձիւք տրտնջմանք վարեն զայն, ուստի առ 'ի զարթուցանել 'ի Հոգաբարձուս ընդ ախորժ հաճութեան կամաց և եռանդուն ազգասիրական ջերմեռանդութեան խրախուսանս, և զնիւթական իմն գնահատութիւն վաստակոց նոցա, այն է՝ պարտի վարձատրել զնոսա շքանշանօք կամ այլ պարգևօք ըստ չափու արժանաւորութեան և աշխատութեան իւրաքանչիւրոցն 'ի նոցանէ, և այնու քաջալերել զնորկայսն յէ ևս առաքինական յօգուտ մանկանց ազգի ձեռնարկս, եզրուել, յանկուցանել զմիտս ցանկութեան այլոց նոյնպիսեաց 'ի մտադիւր յանձնառութիւն այնր ծանրակշիռ և անվարձ պաշտօնավարութեան։ Այս իսկ են վերջին ըստ իմում կըշռադատութեան միջոցք առաւել ծաղկեցուցանելոյ, բարւոքելոյ և բարգաւաճելոյ զուսումնականն կարևոր կառավարութիւն 'ի պայծառութիւն լուսութեան ազգիս և 'ի փառաւորութիւն Եկեղեցւոյ։ Իսկ 'ի գործոց Սինոդիս երևի զի հանգուցեալ Պատրիարք Կաթողիկոսն ամենայն Հայոց Տէր Ներսէս կոնդակաւ գծագրելով 'ի յայտարարութեան Վիճակային Կոնսիստորիային Տփխիսայ 'ի 12 մայիսի 1851 ամի ընդ № 1095, 'ի միջի այլոց պարտաւորեալ էր զՀոգաբարձուս Հոգևոր Դպրոցին Տփխիսայ մատուցանել յամսոյ յամիս զհաշուեցուցակ ելից և մտից նորին 'ի Կոնսիստորն և զվերջինն յերեք ամսոյ յերեք յամիս առաջարկել 'ի Սինոդս վասն ուղիղ և հաւատարիմ հաշուեպահութեան արդեանց և ծախուց Հոգաբարձութեան։ 'Ի վերայ այսր հիման Սինոդս 'ի 13 դեկտեմբերի 1857 ամի

համարաւ 2475. պահանջեաց 'ի Կոնսիստորիայէն զլիակա-տար հաշիւս ամենամեայ մտից և ծախուց հոգաբարձ-ուացն յօրէ անտի բազմաց կարգակիրն մանրավաճառութեան և հաստատութեան հոգաբարձութեանն, այլ յետ բազմա-դիմի կրկնողական առաջադրութեանց ևս ևս չտեսեալ յա-ռաջադիմութիւն ինչ 'ի պատճառս չտանելոյ Կոնսիստո-րիային 'ի հոգաբարձուացն զպահանջեալ հաշիւս, 'ի վեր-ջոյ այն ևս ստիպեալ գտաւ ըստ առանձին օրագրական եզրակացութեան իւրում յանձնել տեառն Պրոկուրորի իւրում Աստաֆի Ալէքսանդրի Միրզաբեանի, զի 'ի գնալ նորա յամսեանն օգոստոսի 'ի Տփխիս քաղաք աշխատ կալ-եալ անձին գործեսցէ զանմիջական ճիշդ վերահասութիւն զէական պատճառանացն յետաձգութեան հոգաբարձուացն կատարման օրինական պահանջից Թեմական Իշխանութեան նոցա հրամանեցելոյ 'ի վերայ առաջադրութեան Սինոդիս և ապա 'ի գործ դնել զստիպողական գործակցուլ 'ի յառա-ջադիմութիւն այնց պահանջից և զհետևանայն ծանուցա-նել Սինոդի. Նա այս նորին գերազանցութիւնն 'ի 18 Հոկտեմբերի 1858 ամի № 56, 'ի միջի այլոց ծանոյց թէ պահանջեալ և վերանկատեալ հարևանցօրէն զհաշիւս յե-շեալ հոգաբարձուացն վասն աւելի քան տասն ամաց, թէ-պէտ եգիտ յայնս զինչ ինչ զանցառութիւնս զկանոնօք հա-շուապահութեան, բայց ըստ սղութեան միջոցին չկարաց մտանել 'ի մանրամասն քննութիւն հանգամանաց կանո-նաւորութեան կամ անկանոնաւորութեան եղանակի վար-չութեան հաշուոց մտեալ և ծախեալ դրամոց զամա-րաց հոգաբարձութեանն, ըստ այսմ նորին գերազանցու-թիւնն բարւոք վարկաւ առաջադրել Կոնսիստորիային Վ-րաստանի, զի համաձայն կոնդակի հանգուցեալ Կաթո-ղիկոսի Ներսիսի տուեցելոյ նմին, նոյնպէս և հոգաբարձ-ուացն ըստ վերոգրեալ առակոյի յետ ստանալոյ 'ի հո-գաբարձուաց զհաշիւս ամենամեայ գումարոց մտելոց 'ի տեսչութիւն նոցա յընթացս ժամանակի կառավարութեան նոցա հանգամանօրէն վերաքննել զայն և ապա առաջի առնել Սինոդիս հանդերձ եզրակացութեամբ նորին. իսկ զհոգաբարձուս հրաւիրել 'ի մատուցումն պատկանեալ

հաշուոց. Ուստի և Սինօդս դատելով ըստ այսմ պատասխանագրուն նորին գերագունցուն, զի պահանջեալ 'ի Հոգաբարձուաց հաշիւք գոլով դեռ յայնժամ պատրաստ 'ի ձեռս նոցա մնացեալ են այժմ տակաւին 'ի Կոնսիստորիայն 'ի 12 դեկ. 1858 ամի № 2323 ուստի առաջադրեաց Կոնսիստորիայն Վը-րաստանի փութով վերագննել զայնս մանրամասնաբէս և ճիշդ հանգամանօք առաքել Սինօդիս հանդերձ համապատշաճ իւրն եզրակացութ իւրով. իսկ եթէ չէ ստացեալ ցարդ 'ի նոցունց զայնպիսիս, յայտնեսցէ Սմին զպատճառանաց յետաձգութեան այնց հաշուոց ընդ յատուկ պատասխանատուութեամբ անդամոց նորին 'ի դէպս սակաւիկ յետաձգումն պատասխանւոյ առ առաջադրութիւն Սինօդիս. Նա այս Կոնսիստորիայն Տփխիսայ ընդ յայտարարութեան 'ի 22 դեկտեմբերի նոյն ամի № 2766 մատոյց Սմին զյայտարարութիւն Հոգաբարձուաց Ուսումնարանին զառաջարկեալն Կառավարչի Թեմին Վրաստանի, խնդրեաց զանօրէնութիւն Սորին. յետաձգելոյ զպահանջ հաշուոց Ուսումնարանի ցդալուստ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց. Սինօդս 'ի բացատրութեան Հոգաբարձուացն նկատեալ զինչ ինչ հակատականութիւն բանից և զհրաժարումն նոցա առ ժամն 'ի տուչութենէ հաշուոց ըստ օրագրուն իւրեամ կոչացելոյ յ2 մարտի սոյն ամի արար զայնօրինակ եզրակացութիւն ընկալեալ 'ի ճիշդ կշռադատուն զիրական հիմն, յորոց վերայ Սինօդս ակնկալեալ շարունակեալ է զպահանջ հաշուոց և մեկից Հոգաբարձուեն Հոգևոր Դպրոցին Տփխիսայ զօրինաւորումն ջանադրութեց վիճակային Կոնսիստորիային յիսկապէս կատարումն իրաւացի առաջադրութեն Սինօդիս ըստ սեփհականեալ ինքեան իրաւունց ըստ բացատրական բանից Հոգաբարձուաց նոյն Դպրոցի, զորս իւրով իրաւադատուն առաջարկէ Սինօդիս կառավարիչն այնր Թեմի Սարգիս Արք. Եպիսկոպոսն ընդ յայտարարութեան իւրում. Այն Սա գտանէ, զի Սարգիս Արք. Եպիսկոպոսն ունելով առաջի աչաց զԿարգադրութիւն հաստատեալ կանոնս գծագրեալս 'ի 113 և 'ի 116 յօդ. 'ի դրութեան վերն կառավարութեան Հայոց եկեղեցեաց, ըստ և զհամապատասխան նոցին պարտաւորու-

կան առաջադրութիւն 'ի Տէր հանգուցեալ Կաթուղիկոսէ Ներսիսէ, որ 'ի յայտարարութեան վիճակային Կոնսիստորիային Տփխիսայ 'ի Սինոդս 'ի 12 մայիսի 1851 ամի № 1095, պարտ էր դարձուցանել զնորին մտադրութիւն 'ի բարեպաշտական տնօրէնութիւն Փրկաւոր իշխանութեան իւրոյ 'ի տարալինութիւն և 'ի հակառականութեան բանից Հոգաբարձուացն անդ 'ի բացատրութեան նոցա ընդդէմ այնր անօրէնութեան և յաւէտ 'ի պարտաւորական պայմանս իւրոց օրինաւանդ իրաւանց հաստատեալ ինքեան իշխանութեան և մտեալ 'ի կշիռ բացատրութեան Հոգաբարձուացն, որք մերթ տարամերժելով 'ի բաց զիշխանական իրաւունս Հոգևոր Տեսչութեան 'ի վերայ Դպրոցին և պատկանելութեանց նոցա ենթադրեն զնա քաղաքական տեսչութեանց մերթ համարելով զնա 'ի ներքոյ յատկապէս Կաթողիկոսին իրաւանց՝ ազատ ճանաչեն զինքեանս 'ի պարտաւորութենէ տալոյ զհամար Թեմական իշխանութեն, և մերթ պատկանաւոր ժողովրդական տեսչութեան՝ թողուն զնա յածորոշ և յանպայման վիճակի ցուցանել նոցա զթերութիւն կարծեաց նոցա և զհիմն իրաւանց, ըստ որոյ Դպրոցն այն համարի ոչ ժողովրդական, ոչ քաղաքական, այլ յատկապէս ենթադրեալ Հոգևոր Տեսչութեն, և ըստ այնմ պահպանեալ իսկութեամբ զօրէնս. որք վերաբերին եղանակի և միջոցաց նորուն կառավարութեան և ոչ հարևանցի իմն ակնածութեամբ զնովաւ առաջարկեալ զայն 'ի խնդիր կատարման ենթադատութեանց նոցա, այլ 'ի վերայ այսր ամենայնի Սինոդս ընկալեալ 'ի նկատողութիւն զանձկութիւն ներկայ միջոցաց իւրոց և զընդարձակութիւն հաշուետեսութեան երկարամեայ բազմակնճիռ ելից և մտից Հոգաբարձութեանն յօրէ անտի շարունակութեան նորին և բազման կրպակին մամուլաձառութեան 'ի Տփխիս և 'ի սահմանս թեմի նորա. Նա որս պահանջի հարուստ ժամանակ եւ և մեծաւորութիւն գալստեան Պատրիարգ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ 'ի սուրբ Էջմիածին. Այն Սա ենթադրաւ է ոչ մտեալ այժմ 'ի քննութիւն և 'ի լուծումն հրաժարական բանից վերոյիշեալ Հոգաբարձութեանն ընդ հակառակ պատճառանօք 'ի

մասին իրաւանց և իշխողական Տեսչութեան Հոգևոր Դպրոցին և այլոց զիմացուցումն պահանջեալ 'ի նոցունց հաշուոց արդեանց և ծախուց Հոգաբարձութեանն նոյն Դպրոցին դադարեցուցանել ցգալուստ Նորին Վսեհափառութեան այնու, զի յետ այնր ըստ նախընթաց գիտութեան Նորին Սրբութեան առանձին յարմարադատ տնօրէնութ. Սինոդիս ընկալցի այս վսեմ գործ զիւր վախճանական եզրակացութիւն, զորմէ ետ գիտել Սարգիս Եպիսկոպոսին ազդելով, զի յամենայն գործառնութիւնս իւր թէ յայսօրինակ և թէ յայլ այսպիսի առարկայս, յորս շարունակի յայնմ յօգուտ կամ վնաս Եկեղեցւոյն և լուսաւորութեան մանկանց համաձայնեցուցանել ընդ ամենայնի ընդհանրական մտաց և զօրութեան օրինաց ըստ սեպուհ պարտաւորութեան իւրում, զի մի 'ի հակառակ դէպս տացէ առիթ թուլութեան իշխանական իրաւանց, որք օրինօք են նմա սեպհականեալք. և այնու իսկ ազատ պահել 'ի ծանրացուցիչ և աւելորդ գրագրութեանց, և զայսմ տնօրէնութենէ ետ գիտել Կոնսիստորիայն Տփխիսայ. և 'ի կատարումն այսր եզրակացութեան առաքեցան հրամանագիրք Սարգիս Ե.ք Եպիսկոպոսին և Կոնսիստորիայն 'ի 10 ապրիլի համարաւ 749 և 750. Յետ այսորիկ ամենից Վսեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր ՄԱՏԹԷՈՍ երկու կոնդակաւ յ9 յուլիսի և 'ի 4 հոկտեմբերի համարաւ 184 առաջնումն ծանոյց Սինոդին, թէ 'ի մտանել իւր 'ի Տփխիս քաղաք Հոգաբարձուք Ներսիսեան Հոգևոր Դպրոցի տեղւոյն ընդ յայտարարութեան 'ի 21 յուլիսի № 148. մատուցեալ են զհաշուեցուցակս մտից և ծախուց յիշեալ Դպրոցին սկսեալ 'ի 1851 ամէ ց1859 ամն յաղագս հասու լինելոյ ուղղաբար կառավարութեանց Հոգաբարձուաց և հաւատացեալ նոյին Տեսչութեան Դպրոցին, յաւելեալ թէ Նորին Սրբութիւնն անծանօթ գոլով սկզբնական և յայնժամեան դրութեան այնր Դպրոցի և աղբերաց պատկանելոյ նմին առաքելով 'ի Սինոդս զամենայն հաշուեցուցակս արդեանց և ծախուց այնր Դպրոցի և շինութեանց զանազան կալուածոց նմին՝ առաջադրեաց Սինոդին վերաքննել զայնոսիկ հաշուեցուցակս ըստ կարգին և օրինաց ճիշդ ներ-

կարողութեամբ հաստ լինելով որպիսաբար կառավարութեանց նոյին յընթացս եօթնամեայ հոգաբարձական պաշտօնութեանց և զհետևանացն ծանուցանել Նորին Սրբութեան. Իսկ երկրորդումն ծանոյց, թէ կամելով առաքել ՚ի Տփխիս քաղաք զատենադպիր Սինոդի զկոլլէժսկի սեկրետար Թ. Ալխանասեանցն վասն վերադիտութեան հաշուոց Հոգաբարձութեանն Հոգևոր Դպրոցի տեղւոյն գործակցութեամբ առանձին ժողովոյ որ ունի կայանալ ըստ առանձին խմբում անօրէնութեան յԱզնուականաց և պատուելեաց քաղաքացեաց, նոյնպէս և սահմանելոյ զգրամս ՚ի գումարաց եկեղեցեաց նոյն Թեմի ՚ի պէտս ծխական Ուսումնարանաց ըստ չափու հարկաւորութեան իւրաքանչիւրոցն ՚ի նոցունց դիտութեամբ և համաձայնութեամբ կառավարչի Թեմին Սարգիս Արք. Եպիսկոպոսի և ծխական ժողովրդականաց իւրաքանչիւր եկեղեցեաց. յորոց ունին յատկանալ յիշեալ դրամքն Ուսմ. և առաջնորդեաց Մին առնել զշուտափոյթ պատշաճաւոր անօրէնութիւն առ այն. Հուսկ ուրեմն Սինոդս ըստ զօրութեան օրագրական սահմանադրութեան իւրոյ կայացելոյ ՚ի 5 Հոկտեմբերի 1859 ամի ՚ի կատարումն կամաց Նորին Սրբութեան նշանակեաց ժամանակաւորապէս զատենադպիր իւր զատախօսաւոր Թ. Ալխանասեանցն ՚ի Տփխիս քաղաք վասն ՚ի կատար ածելոյ զյանձնարարութիւն ըստ առարկայիցն բացատրելոց ՚ի վերոյգրեալ Կոնդակի Նորին Վեհափառութեան ըստ խրատուն զոր ունիցի առանդել Նորին Արբազնութի ՚ի հրահանգութիւն յայնոսիկ վսեմ ձեռնարկս և զվախճանմանէ գործոյն յայտնել Սինոդիս: Հրամայեցին, Որովհետև վերոյգրեալ հաշուէկշռութիւն առաջարկեալն յատենադպրէ սորին ՚ի պարոն Թ. Ալխանասեանց վարեալ է ճիշդ կանոնապահութ. և չէ եւ ՚ի նմա կարծեցական ինչ, վասն որոյ զգրագրութիւնն շարունակեալն ըստ այնմ ՚ի մէջ Սինոդիս, Կոնսիստորիային Տփխիսոյ և Հոգաբարձութեանն Հոգևոր Դպրոցի տեղւոյդ կարծել բոլորովին և զհաշուէցուցակն կցել ընդ գործոյն, և զի Վեհափառ Կաթողիկոսն Ազգին որպէս ծանոյց ՚ի զեկուցանելն զայսմանէ հաւատարմացեալ ՚ի ջերմեռանդ արդիւնաւոր ծառայութիւն պ. Հոգաբարձուացդ արդէն

առանձին Հայրապետական Կոնդակաւ իւրով հրաւիրեալ է զձեզ 'ի շարունակութիւն այնպիսի պարտաւորութեանց ձերոց յառանձին անօրէնութիւն, ուստի և չմնաց Սինոդիս առնել ինչ ըստ այնմ. Իսկ զանօրէնութիւնն 'ի մասին միոյ պարագայից պարունակելոց յառաջարկութեան անդ Թ. ազնուականացդ որք վերոյբերին բարւոքման ուսումնական և մտաւորական մասանց նորին Դպրոցին, եւ և վարձատրութեան ձեզ Հոգաբարձու այդ վասն երկարամեայ անվաղձ և արդիւնաւոր ծառայութեանց ձերոց 'ի տանձնեալ պաշտօնավարութեան իբրև անկուոտ խորհրդակութեանց և կշռադատութեանց Սինոդիս Թողուլ 'ի կամս Մեծափառ Կաթողիկոսի, և զայսմ անօրէնութենէ ծանուցանել վեհականին մինիստրոսին Արդարանի և նոյն իսկ ձեզ պատուելի Հոգաբարձուացդ որոշ որոշ հրամանագրովք. 'Ի 20 մարտի 1861 ամի 'ի սուրբ Էջմիածին.

Համար 200.

Տ. Կ.

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և . . . . . .

Պատուարժան Հոգաբարձուաց Հոգևոր Ուսումնարանի Հայոց Թիֆլիզոյ ազնւոյ Նէրսանդրի Թ. Աշխարհեանց և ազնւոյ Գ. Լալայեանց Մանդինեանց ծանուցանեմք, զի յինչ ինչ առ մեզ հասեալ գրաւոր տեղեկութեանց և լուր 'ի մասին նիւթին և արտաքին կառավարութեանց Ուսումնարանիդ հարկաւոր համարեցաք առաքել աստուստ առ ձեզ զանդամ Սինոդի սրբոյ Էջմիածնի Մակար Տ.րք Եպիսկոպոսն և զատենադպիր նորին Եզնուական Մաքսիմն Թ. Աղեքսանդրեանց: զի խորհրդակցութեամբ Մարգիս Տ.րք Եպիսկոպոսի, ձեր և ամանց յառաջնորդաց և ուսումնականաց անդուստ՝ անձամբ անձին վերահասու լինիցին նիւթին և արտաքին կառավարութեանց ձեր մ Ուսումնարանիդ և նարոց յառաջարկեսցեն մեզ ուսումնական կանոնադրութեանց. Յետ որոյ անյապաղ վերադառնալ աստ առ մեզ և տալ մեզ

զլխակատար անզգեհութիւն 'ի բարեհաճ տնօրէնութիւն մեր։

Օրհնէ յայտնելով և ձերում պատուարժանութեանց պատուիրեմք, զի համաձայն մտաց մերում կոնդակի տուեցելոյ յանուն նոցուն երկոցուն ըստ պահանջման հարկին ներկայ գտանիջիք և դուք յամենայն միջոցս վերահասութեանց նոցին զկառավարութեանց Ուսումնարանին։

'Ի Վերայ Բնագրին՝ Կաթողիկոս ամենայն
Հայոց ՄԱՏԹԷՈՍ։

## Յաւելուած առ բանն նախընթաց։

1. 'Ի Տեսութեան Ուսումնարանին յիշեցաք, թէ առ 'ի չլինելոյ Թեմական Առաջնորդի 'ի Վիճակիս Հայոց Վրաստանի մեծանուն Հայրապետն Ներսէս ըստ իրաւանց Հիմնադրի և Գլխոյ Եկեղեցւոյ ամենայն Հայաստանեայց զհամայն կառավարութիւն Ուսումնարանին ըստ Ուսումնական և տնտեսական առարկայիցն անօրինէր ըստ իւրում հաճութեան, որոյ կատարիչք էաք մեք Հոգաբարձուքս ընդ գլխաւոր վերատեսչութեամբ նորա առաւելապէս վասն լինելոյ նորա աստ 'ի Տփխիս տարեոր ժամանակս. որոց կենդանի վկայք 'ի գործս Հոգաբարձութեան են ակնածելի սուրբ կոնդակք նորա, յորոց նախ՝ ըստ ուսումնականին պարտ է յուշել թէ հարազատ լուսաւորչածին հայազգի պարոնայք վաճառեալք եռանդուն և ազգասիրական հոգւով ունին ընթեռնուլ քաղցրալուր բերկրանօք զկոնդակն Նորին Վեհափառութեան, զոր յիշատակէ 'ի վերոյգրեալ առաջադրութեան իւրում Սարգիս Արք Եպիսկոպոսն յ30 յունիսի 1854 ամի և 'ի 1 մայիսի 1855 ամաց համարօքս 233 և 108. այլ և յ2 յունիսի և 'ի 29 սեպտեմբերի 1851 ամի համարօքս 156, 157 և 344. 'ի 26 ապրիլի 1852 ամի համարաւս 168 և յ33 յունիսի 1854 ամի համարաւս 239, զոր գրեալ է հանդուցելոյն համարեա թէ մարգարէական և ճշգրտիւ փորձ առեալ հոգւով, յորոց միայն համար 108 առ 'ի ունել զայն 'ի նկատողութեան առաջարկեցաք

Վեհափառ Հայրապետին մերոյ ՄԱՏԹԷՈՍԻ, և ընդ նմին զսա 'ի մէնջ կոչմամբ սահմանադրութեան Ուսումնարանին, զորս առ երկարութեց և մանաւանդ առ սուղ ժամանակի չիցուք ձեռնհաս տպագրութեամբ հաղորդել այժմ մերոց բանասիրաց. Նոյն է երկրորդ՝ ըստ տնտեսականին (Տես Աշխարհական՝ 1, յ2 յունուարի 1954 ամի համար 4, որով 'ի պաշտօն Տնտեսի բոլոր ծախուց Ուսումնարանին կարգեաց զՏէրն իւրում Վեհափառութեան իւրով երկարաժամանակեայ հրաւիրութեամբ զպարոն Յովհաննէսն Մելիքեան, որ ցարդ գտանի 'ի նմին պաշտաման.

Զ, Վասն վերանորոգութեանց և շինութեանց փոշտայիտան և ախտատեղւոյն սրբոյն Գէորգայ (Թերթն է 1 փետրվարի 1851 և 'ի 16 մայիսի 1855 ամաց համար 42 և 122, որոնք հանդ և հաւան գտանելով ընդ նախամտագրութիւն մեր լինել իրաւունս տայ մեզ յաւելնայնի. Այսպէս և սովին եղանակաւ առ Առաջնորդութ Տեառն Սարգսի Արք Եպիսկոպոսի շարունակեալ եմք զմերն Հոգաբարձութիւն. (Տես զտուեալն մեզ հրամանագիրս նորա որ 'ի գործս Հոգաբարձութեան 'ի 28 նոյեմբերի 1858 ամի, համար 22 վասն կարգելոյ զպարոն Պայթմազեանցն վերատեսուչ յՈւսումնարանի անկախ զումբքէ ըստ ամենայն մասանց վերաբերելոց այնմ պաշտաման՝ գլխաւորաբար ըստ ուսումնականին. և յ9 յուլիսի և 'ի 18 սեպտեմբերի 1858 ամի համար 93 և 146 վասն ձեռնարկութեան շինութեան նորոց կրպակաց հանդէպ հնոյ Ուսումնարանին, և կարգելոյ վերակացու 'ի վերայ այնր ըստ մերում վերահասութեան զգործունեայ քահանայն զՏէր Յակոբն Օտապեանց և զՏէր Գէորգն տէր Գալստեանց.

Ձ. Նորին Բարձր Սրբազնութիւն 'ի տալն իւր զյայտարարութիւն Տեառն Ղուկասու տեղապահ Արք Եպիսկոպոսին, որպէս տեսանի 'ի վեր յերես 97-ց103 վասն Թողլոյ զՀոգաբարձուս 'ի կառավարել զՈւսումնարանն, առաջի աչաց ունէր, թէ որպէս նախկին Կօմիտեան վասն կառավարութեան Ուսումնարանի կարգեալ 'ի 1831 ամի 'ի Հոգևոր Իշխանութենէ համաձայնութեամբ գլխաւոր մարմնաւոր կառավարութեան՝ էր ընդ անընդմիջական իշխանու-

թեամբ Վիճակաւոր Առաջնորդին. Յետ որոյ յօգոստափառ Կայսերէ ամենայն Ռուսաց Ինքնակալին հրովարտակաւ հաստատեցաւ 'ի 11 մարտի 1835 ամի Կարգադրութիւն կառավարութեան գործոց Եկեղեցեաց մերոց 'ի Ռուսիա գծագրեալ 'ի կոչեալ օրինաց Տէրութեան և տպագրեալ 'ի 1857 ամի. բայց վասն գործադրութեան հրատարակեալ 'ի 1858 ամի 11 հատորոյ յԱ մասինի՝ որ վասն գործոց օտարադաւան ազգաց, յորս են և կանոնադրութիւնք կառավարութեան Ուսումնարանաց. այսպէս և ներկայ կառավարութիւն Ուսումնարանի անշուշտ պարտի լինել ըստ հրամանատարութեամբ նորա, և ըստ զօրութեան նոյն օրինաց համապատասխան կոչման և պարտաւորութեան Հոգաբարձութեան. (Տես 'ի Սինկղիտոսական Լրագիրս С. П бургскія Сенатскія Вѣдомости յորում կարգեալ 'ի Սեմինարիայս և 'ի Ծխական Դպրոցս ըստ անուանական մասին և եթ զանձինս աշխարհականս ընդ կոչմամբ պատուաւոր Հոգաբարձուաց.)

Իսկ 3. որպէս յաւարտ Տեսչութեան Ուսումնարանին յիշեցաք զդատողութենէ մերմէ համար 165 յանուն Վեհափառ Հայրապետին մերոյ ՄԱՏԹԷՈՍԻ՝ յորում մեք յառաջ բերելով զամենայն վարձ և եղանակ կառավարելոյ մերոյ զՈւսումնարանն, զվերոգրեալ հանգամանս, և զայնպիսին՝ որ 'ի գործս Վանահօրն Էջմիածնի և 'ի վերայ հիման որոց նոյնպէս ըստ օրինաց Տէրութեան և կանոնաց Սրբոյս սուրբ Եկեղեցւոյ պարտ է անձեռնամուխ յօտարաց պահպանել 'ի դարաւոր ժամանակաց հետէ հաստատեալ իրաւունս վիճակաւոր և ծայրագոյն Իշխանութեանց 'ի վերայ բուն նշանակութեան նորին. այն է Հոգևոր կոչման և անթերի իշխանութեան 'ի վերայ նորա. Իսկ վասն այսորիկ առ 'ի զառաջս ունելոյ փոփոխութեանց ի նորոգ սահմանադրութիւնս Ուսումնարանին մեք առաջի աչաց ունելով 'ի վերայիշեալ օրինաց 11 հատորոյ յառաջին մասին զ1004 յօդուածն. որով հրամայի, զի ընթացք ուսման և ներքին կառավարութիւնն 'ի Հայոց Հոգևոր Դպրոցս (Սեմինարիայս) կարգեսցին 'ի Վիճակային Իշխանութեանց ընդ գլխաւոր վերահասու-

թեմական Առաջնորդաց, և զի առաջարկեցին 'ի վերահսկո-
ղութիւն Լուսաւորչական Սինհոդոսին Էջմիածնի, յոր-
մէ և առաջարկեցի 'ի հաստատութիւն ծայրագոյն մարմ-
նաւոր կառավարութեան, խնդրեցաք բարեհաճել առա-
ջարկել զայն 'ի հաստատութիւն Տէրութեանն. Բայց որ-
պէս տեսանեմք, այնոքիկ չ'են 'ի գործ եդեալ, զի 'ի կոն-
դակի Նորին Վեհափառութեան 'ի 1-ին սեպտեմբերի
այսր 1861 տարւոյս համար 470, և 'ի Հրամանագրի
Սինոդին նոյին ամսաթուով համար 1863 գրելոց
առ մեզ (որք ընդ այսմ տպագրին), չերևի ինչ յի-
շատակութիւն, և [redacted] Յայսմ յիշեալ
Կոնդակի Վեհափառ Հայրապետին մեր կանխէ շնորհա-
կալ լինել մեզ, որպէս և անդամ Սինհոդոսին Սրբա-
զան Տէր Եպիսկոպոսն Եղիազար 'ի դիմաց Նորին Վե-
հափառութեան յայտնեաց հրապարակաւ 'ի ծանուցմանն
յետ կարդալոյ զԿոնդակ Սրբազան Հայրապետին 'ի Սան-
քի մայր Եկեղեցւոջ ի 17 ամսոյս սեպտեմբերի՝ որ վասն
հաստատութեան սահմանադրութեան և արձակելոյ զմեզ 'ի
խնդրանաց մերոց և կարգելոյ 'ի տեղի մեր երկուց Հոգա-
բարձուացս զերկոտասան անձինս. Այնոյ այսուհետև իմա-
նալ զմիտս և զզօրութիւն նորոգ սահմանադրութեան.

Ընդ սմին արժանի տեղեկութեան և միանգամայն զար-
մացման այս է, զի ըստ զօրութեան նշանակելոյ զերիս ե-
րեսփոխանս յամենայն եկեղեցեաց՝ էր, համաձայն խոր-
հրդակցութեամբ կոչել զնոր կարգադրութիւնս վասն Ու-
սումնարանին և մատուցանել Նորին Սրբութեան 'ի հաս-
տատութիւն, բայց չ'էր տուեալ նոցա իրաւունս ընտրել
զնոր Հոգաբարձուս, այլ հասարակութիւնն դարձեալ պարտ
էր ընտրել զայնպիսիս ըստ զօրութեան Կոնդակի Սրբա-
զան Հայրապետին համար 327. Երեսփոխանքն թող զայն.
զի կիսով չափ բաժանեալք 'ի միմեանց և 31 անձինք միայն
մնացեալ՝ ձեռնագրեցին ըստ հաճութեան իւրեանց գրեալ
զկարգադրութիւն և ըստ իւրեանց ըղձի ընտրեցին դար-
ձեալ յինքեանց զ12 Հոգաբարձուս և հակառակ Կոնդա-
կի Հայրապետին չգիտեմք որով մտադրութեամբ յաւե-

լըն և զորս կանդիտատս։ Զայս ամենայն ընտրութիւնս Հոգաբարձութիւն Հայոց Տփխիսայ ըստ մեծի մասին յերազն ևս չգիտէ, թէ և յամենայն թուղթս անուանս միայն յիշատակին, թէ ըստ բաղձանաց և խնդրոյ հայազգի հասարակութեան Տփխիսայ ընտրեցան և այլն. ՚Ի սեպտեմբերի 20 յամի 1861.

Հոգաբարձուք Ուսումնարանի
Աղէքսանդր Թահիրեանց. Գէորգ Մանդինեանց.

Համար 470.

Տ. Կ

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Քրիստոսի և ....

Բազմաւորմ հարազատից ազգութեան և առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց ամենասիրելի որդւոց նախկին բազմաշխատ և բարերար Հոգաբարձուացն ազգային, Հոգևոր Ներսիսեան Դպրոցին գերազնիւ պարոն Աղէքսանդրի Պաղարեան Թահիրեանց և Գէորգայ Ոսմանեան Մանդինեանց Քրիստոսաւանդ սուրբ ողջունիւ ծանուցանեմք, զի ըստ խնդրանաց հայազգի հասարակութեան Տփխիսայ խորհրդակցութեամբ Լուսաւորչեան Հայոց Սինհոդոսի որոյ Էջմիածնի՝ զառաջարկեալն ՚ի նոցունց մեզ զնորոգ կանոնադրութիւն վասն կառավարութեան Ներսիսեան ազգային Հոգևոր Դպրոցին և զընտրեալսն ՚ի նոցունց զերկոտասան արժանաւոր և վկայեալ անձինս հաստատեալ ՚ի Հոգաբարձութիւն նոյն Դպրոցին, այսու մերով Հայրապետական Կոնդակաւ յայտնելով զմեր հոգւոյ անկեղծ գոհունակութիւն զձերոց բազմամեայ, բարեջան և արդիւնաւոր վաստակոց յօգուտ Ներսիսեան Դպրոցին, արձակեմք զձեզ յայսմ պարտաւորութենէ համաձայն ձերում խնդրանաց, և յորդորեմք այսու զձեր Գերազնութիւն, զամենայն գործս և զդրամական հաշիւս վերաբերեալս այնմ դպրոցական կառավարութեան վերահասութեամբ առա-

քեւլոյն 'ի մէնջ առ ձեզ Եղիազար Ար.ք Եպիսկոպոսի ան-դամոյ Սինոդի և նորին բարիջան Ատենադպրին պարոն Խ. Աղխանոսեանց յանձնուջիք նորա կարգեալ 'ի մէնջ Հո-գաբարձու այն 'ի գործադրութիւն նոցին.

Վկայեն ինձ միտք իմ, թէ Յարգութիւն ձեր այ-սուհետեւ ես ոչ ունիք անխայել զկարեկցութիւն և զգոր-ծակցութիւն ձեր 'ի կարեւոր դէպս վասն յառաջադէմ պայ-ծառութեան նոյն Դպրոցին, իսկ բազմամեայ հարազատ և արդիւնաւոր ծառայութիւնք ձեր թող դրոշմեսցեն 'ի սիրտս ներկայ և անցեալ որդեգրաց Ներսիսեան Դպրո-ցին զերախտագիտութեան զգացմունս. Եւ որ սրտագէտն է Աստուած, փոխարինեսցէ ձեզ զբազմապէս ողորմութիւն իւր յաղագս ձերոց բազմամեայ ծառայութեանց 'ի պայ-ծառութիւն ազգային Հոգևոր Ներսիսեան Դպրոցին. 'Ի 1 սեպտեմբերի 1861 ամի.

'Ի վերայ բնագրին՝ վաւերէ ՄԱՏԹԷՈՍ
Կաթողիկոս ամենայն Հայոց.

Համար 1863.

Հրաման . . . . . . . . . . . . . 'ի Սինոդէս լուան ըզ-յայտարարութիւն անդամոյ Սինոդիս Մակար Ար.ք Եպիս-կոպոսի և Ատենադպրի նորին աստիճանաւոր Խ. Աղխանոս-եանցի 'ի 15 սոյն օգոստոսի № 2[illegible], յանուն Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց և 'ի Նորին Սրբութենէ մակագրութեամբ յանձնեալ ի քննութիւն Սինոդիս, յո-րում գրեն այսպէս. ըստ Կոնդակի Ձերդ Վեհափառու-թեան 'ի 25 ապրիլի ներկայ ամի համարաւ 1[illegible]1, շնորհ առնելիք խոնարհաբար մատուցանել զկանոնադրութին Ներ-սիսեան ազգային Հոգևոր Դպրոցին Տփխիսայ կազմեալ ս'ի ձեռն ընտրեալ երեսփոխանաց հայազգի հասարակու-թեան տեղւոյն հանդերձ քննողական նկատողութեամբք նոցա և ցուցակօք անուանց երկոտասան պատգամաւորաց և

«շնորհից տեղակալաց նորա» որք ընտրեցան 'ի նոյն իսկ երես-փոխանաց»։ 'Ի վերայ այսր յայտարարութեան Վեհափառ Կաթուղիկոսն առարեալ է այսօրինակ մակագրութիւն. «Յանձնեմ զընդ ամէն եղեալ գրագրութիւնս հանդերձ առաջարկեալն կանոնադրութեամբ 'ի քննութիւն Սինոդին և զեզրակացութենէ իւրմէ ըստ այնմ յայտնել մեզ ըստ կարգին»։ Հրամայեցին. Առաջարկեալ կա-նոնադրութիւն ազգային և Հոգևոր Ներսիսեան Դպրո-ցի Հայոց Թիֆլիզոյ գտեալ հաւանական և մաւերացուց-եալ ստորագրութեամբք անդամոց Սինոդիս ըստ առանձին յայտարարութեան մատուցանել 'ի հաստատութիւն Վե-հափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց համաձայն վերոյ-գրեալ մակագրութեան Նորին. իսկ զմնացեալ յօդուածս գծագրեալս 'ի կանոնադրութեան կողմերս 'ի ձեռն պարոն Գեներալ Մայեօր Արծրունւոյ յանձնել 'ի խորհրդարանն Հոգաբարձութեանդ վասն տեղեկութեան 'ի կարևոր դէպս և զայսմ տնօրէնութենէն խնդրել 'ի Վեհափառ Կա-թուղիկոսէն հաղորդել յիւրումն կողմանէ պատկանաւոր քաղաքական Իշխանութեան 'ի ծանօթութիւն, նաև տալ Հոգաբարձուացդ յիշատակեալ Դպրոցին զտեղեկութիւն։ Ի 1 սեպտեմբերի 1861 ամի. 'Ի սուրբ Էջմիածին.

## Գ.

Սորագրեալս ծառայ Քրիստոսի բնակիչ ......
փափագելով պաշտօնատարութեան սրբոյ Տաճարի Աստուա-
ծոյ և կարգի քահանայութեան՝ խնդրեմ 'ի Հոգաբարձու-
թենէ ի Թիֆլիզ Հայոց Ներսիսեան Ուսումնարանի ըն-
կալնուլ զիս յորդեգրութիւն այնմ Ուսումնարանի 'ի թիւս
որդեգրաց նորին 'ի ձրիաթոշակ դասատունն. առ որ և ես
այսու իմով ստորագրութեամբ պարտաւորեմ զանձն իմ
ըստ այսմիկ իմում փափագանաց անփոփոխ կամօք յա-
րատևել յուսումնարանական աշակերտութեան մինչև ըն-
թացումն սահմանաւորեալ ուսմանց եկեղեցականաց և այլոց,
և ջանալ վասն պատրաստելոյ զանձն իմ հարկաւորօքն
յաղագս արժանաւորութեանց այնմ որբազան պաշտօնա-
տարութեան Տեառն Աստուծոյ ահաւորի, և կոչմանցն հը-
րեշտակային կարգի քահանայութեանց. Առ որ և յանձն
առնում կալ հնազանդ ընդ կանոնօք ուսումնարանական
աշակերտութեանց, լինել հեզութեամբ զամենայն, զոր վասն
արժանաւոր կենցաղավարութեանց և բարեկրթութեանց
աշակերտաց, պատուիրել ունիցին ուսուցիչք և վերատե-
սուչք աշակերտաց՝ և կատարել ամենայնիւ հնազանդու-
թեամբ. Ամենայն կանոնաց կարգաւորելոց 'ի Հոգաբար-
ձութեանց կամ 'ի հոգևորական ծայրագոյն Իշխանութեանց
վասն ուսումնարանական աշակերտաց լինել կատարող հա-
րազատութեամբ, և ոչինչ ընդդէմ ուսումնարանական կա-
նոնաց գործել ստահակութեամբ. Իսկ 'ի հասանել ժա-
մանակի յաջողելոյն ինձ շնորհաց Տեառն Յիսուսի նա-
խապատրաստութեամբ իմում անձին ըստ քահանայական
արժանաւորութեանց՝ ուսմամբ, և բարեբարոյ դաստիա-
րակութեամբ իմոց մտաց և խորհրդոց և կամաց՝ յայտնել
զանձն իմ իմով հեզութեամբ, համեստութեամբ, երկիւ-
ղիւ և սիրով Աստուծոյ և սրբոյ Եկեղեցւոյ նորա՝ և ժո-
ղովրդեան, և արժանապէս ծանօթութեամբ քահանայա-
կան իսկական պարտաւորութեանցն՝ ոչ անարժան այնմ
իմում փափագանաց, յայնմ ժամանակի ես որ և ար-
ժան դատել ունիցի վերձակային Հոգևորական Իշխանու-

թիւնն կարգել զիս քահանայ ամենահպատակօրէն պատ-
րաստութեամբ իմոց կամաց ըստ օրինակի Քրիստոսեան
զինուորականի պարտաւոր եղէց կատարել յօժարամտու-
թեամբ զամենայն զպաշտօն իմում քահանայական կոչմանց
համաձայն մարգարէական պատգամացն. «Ծառայեսջիք
Տեառն երկիւղիւ և ցնծացէք առաջի նորա դողութեամբ»
Եւ 'ի վերայ այսորիկ իմում գրաւոր խոստմանց վասն ա-
պահովացուցանելոյ զՀոգաբարձութիւնն ուսումնարանական
պարտաւորիմ նաև զանձն իմ այսու իմով գրաւոր բա-
նիւ. զի թէ համաձայն այսմ իմում խոստմանց կամ ոչ
իսկութեամբ կատարմանցն այնոցիկ. կամ վասն ծուլու-
թեանց իմոյ յաղագս ուսմանց. Կամ վասն որպիսի և իցէ
անպարկեշտ վարուց իմոց. կամ անվայելչական կենցաղա-
վարութեանց անարժան համարեսցի Հոգաբարձութիւնն ու-
նել զիս յՈւսումնարանի, և մերժեսցէ զիս յերամից որ-
դեգրացն Ուսումնարանի, և կամ թէ ես ինքն թերու-
սումն կամիցիմ թողուլ զաշակերտութիւն իմ, և կամ
աւարտեալ զահմանաւորեալ ուսմունս վասն եկեղեցա-
կան պաշտօնատարութեանց և այլոց անձնական կամ հա-
սարակական օգտակարաց փոփոխութեամբ իմում մտաց և
կամաց կամիցայց հրաժարել յեկեղեցական պաշտօնատա-
րութեանց և 'ի կարգէ քահանայութեանց, պարտաւորիմ
զիս ինքն համահաւասար վարձուք աշակերտացն ուսանո-
ղաց 'ի նմին ձրի թոշակ Ուսումնարանի՝ վասն ամենայն
ժամանակաց լինելոյ իմոյ անդէն հատուցանել լի և զտա-
րեկան գումար ծախուցն վասն իմ. Եւ վասն հաստատու-
թեան այսորիկ իմում յօժարական խոստմանց ստորագրեմ.

Ջ.

Ցուցակ Ուսուցչաց և առարկայից ուսման, և [illegible] ցաց, [illegible] և [illegible] աշակերտաց Ներսիսեան Հոգեւոր Ուսումնարանի Հայոց Տփխիսայ.

| Անուանք Ուսուցչաց. | Ուսմունք առարկայք. | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|
| | Դ. ԴԱՍԱՏՈՒՆ | | | | |
| [illegible] Գրիգորեանց. | Քրիստոնէական Վարդապետութիւն, Բացատրութիւն հին և նոր Կտակարանաց և Սրբազան Պատմութիւն: | 14 | — | 5 | 9 |
| [illegible] | Ծարտասանութիւն Հայոց հանդերձ շարադրութեամբ. Ընթերցանութիւն ընտիր մատենագրուեց և բարոյական իմաստասիրութեան Թեսաւրոսի: | | | | |
| Կնեազ Գաբրիէլ Զարգարով. | Քերականութիւն Ռուսաց հանդերձ շարադրութեամբ: | | | | |
| Կարապետ Փօլեաճեանց: | Քերականութիւն Գաղղիացւոց հանդերձ թարգմանութեամբ: | | | | |
| [illegible] | Բոլոր կանոնք Թուաբանութեան. Աշխարհագրութիւն և Երկրաչափութիւն: | | | | |
| Գէորգ [illegible]: | Միջին ընդհանուր Պատմութիւնք, Հայոց Պատմութիւն 'ի ժամանակս Բագրատունեաց և Ռուբինեանց, և Նախագիտելիք 'ի մասին Նուրօպէոյ: | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Գ. ԴԱՍԱՏՈՒՆ։ | | | | |
| Մկրտիչ քահանայ տէր Գրիգորեանց։ | Քրիստոնէական Վարդապետութիւն և Սրբազան Պատմութիւն հին և Նոր կտակարանաց։ | 25 | 6 | 3 | 16 |
| Գարեգին Սրուանձտեանց։ | Քերականութիւն Հայոց հանդերձ շարադրութեամբ. և ընթերցանութիւն ընտիր մատենագրութեանց։ | | | | |
| Կնեալ Գաբրիէլ Զարփանալեանց։ | Քերականութիւն Ռուսաց մինչ ցերկրորդ մասն հանդերձ ուղղագրութեամբ. | | | | |
| Սարաւազէտ Փէյլաճեանց։ | Ընթերցանութիւն գաղղիերէն հանդերձ թարգմանութեամբ, և Վայելչագրութիւն։ | | | | |
| Սողոմոն Ն. Եաճըլըճեանց։ | Համարիկ առաջնորդական, պարզ և բանական կանոնք Թուաբանութեան. և կանոնք համեմատութեան, յորդաբերութեան և խառնման։ | | | | |
| Գէորգ Ն. Եոլեանց։ | Հայոց հին Պատմութիւն մինչ ցժամանակս Մարզպանաց. Նախագիտելիք Աշխարհագրութեան Աֆրիկայի մասին։ | | | | |
| | Բ. ԴԱՍԱՏՈՒՆ։ | | | | |
| Յարութիւն պապէր տէր Գրիգորեանց։ | Համառօտ Քրիստոնէական Վարդապետութիւն և Սրբազան Պատմութիւն։ | 45 | 10 | 6 | 29 |
| Գարեգին Սրուանձտեանց։ | Առաջին մասն Քերականութեան Հայոց և Թարգմանութիւն ընտիր հատուածոց նախկին մատենագրաց 'ի գրաբառէ յաշխարհաբառ։ | | | | |
| Ն. Զաշէտեանց։ | Ընթերցանութիւն Ռուսաց հանդերձ Թարգմանութեամբ։ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սողոմոն Ռաֆայէլեանց։ | Հասարակ կոտորակք Թուաբանութեան և Վայելչագրութիւն Ռուսաց լեզուի։ | | | | |
| Պօղոս տէր Ղազարեանց։ | Վայելչագրութիւն Հայոց լեզուի։ | | | | |
| Լեոպոլդ Ժիւնոա։ | Ընթերցանութիւն գաղղիերէն հանդերձ թարգմանութեամբ։ | | | | |
| | Ա. ԴԱՍԱՏՈՒՆ։ | | | | |
| Յարութ տէր Գրիգորեանց։ | Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան և Սրբազան Պատմութեան հին Կտակարանի։ | 65 | 13 | 3 | 49 |
| Բարդուղիմէոս Համանջալեանց։ | Ընթերցանութիւն Նոր Կտակարանի հանդերձ թարգմանութ. ՚ի գրաբառէ յաշխարհաբառ։ | | | | |
| Յարութիւն Խարաղեանց։ | Հասարակ Ընթերցանութիւն Ռուսաց հանդերձ թարգմանութեամբ։ | | | | |
| Սողոմոն Ռաֆայէլեանց։ | Հաշուառութիւն ամբողջ թուոց և վայելչագրութիւն Ռուսաց լեզուի։ | | | | |
| Պօղոս տէր Ղազարեանց։ | Վայելչագրութիւն Հայոց լեզուի։ | | | | |
| | Պատրաստական Դասատուն։ | | | | |
| Յարութ տէր Գրիգորեանց։ | Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ և հարկաւոր աղօթք։ | 61 | 2 | 3 | 56 |
| Պօղոս Ենգիլեանց։ | Հասարակ Ընթերցանութիւն Հայոց լեզուի և Վայելչագրութիւն։ | | | | |
| Գրիգոր տէր Յարութիւնեանց։ | Հասարակ Ընթերցանութիւն Ռուսաց լեզուի և Վայելչագրութիւն։ | | | | |
| | | 210 | 51 | 20 | 159 |

Պաշտօնակատար Տեսչի Ուսումնարանին Մ. Կրունէշ քահանայ Տէր Գրիգորեանց յապրիլ ամսոյ այսմ ամի։

Վերակացուք յՈւսումնարանի, որք նաև անընդհատ հերթակալու-թեամբ միմեանց մնան 'ի մէջ ուսանողաց 'ի տուէ և 'ի գիշերի։

Ռափայէլ Ղազարեան Մնասեանց.
Գասպար Տէր Գասպարեանց.
Կարապետ Փոչէաճեանց.

## Ի։

Ցուցակ անշարժ կալուածոց Ներսիսեան Հոգեւոր Ուսումնարանի Տփխիսոյ 'ի Տփխիս քաղաքի եւ 'ի շրջակայս նորին.

| Համար | ԺԱ. մասն ԺԲ. Թաղի. | Գնահատութիւն. Ռուբլի |
|---|---|---|
| 1 | Հին Ուսումնարանն երկյարկ տուն բաղկացեալ 'ի վերին եւ 'ի միջին մեծ եւ փոքր դահլճաց, սենեկաց եւ ննջատանց, եւ ունի 'ի հարաւոյ կուսէ զերիս նորակառոյց տախտակամած կրպակս հանդերձ որահիւ, որոյ սահմանքն են 'ի չորից կողմանց պողոտայք եւ Ճանապարհ հասարակաց. . . . . . | 80000 |
| 2 | Երկյարկ մեծ տուն, փոշտայի անուանեալ, բաղկացեալ ի բազում վերին եւ միջին դահլիճաց մեծ եւ փոքր սենեկաց եւ 'ի ննջատանց. որոյ սահմանքն են յարեւելից եւ 'ի հիւսիսոյ կուսէ պողոտայ եւ Ճանապարհ հասարակաց. յարեւմտից կուսէ տունն Տփխիսոյ քաղաքացի Յակովբեայ Մեսրոպեան Բաբանասեանց, եւ 'ի հարաւոյ կուսէ տունք պաշտօնի դրամադանին Նազար Խլամովիչի Թամամշեանց. . . . . . . . . . . . | 25000 |
| 3 | Հանդէպ հին Ուսումնարանին նորակառոյց շինուածք բաղկացեալք 'ի 21 կրպակաց եւ 'ի նոյնքան երկկուսի ննջատանց, որք եւ ունին յարեւելից կուսէ զքարվանսարան գաւիթ եւ շտեմարկ գետին. որոյ Ճանապարհն որ տանի 'ի Մէյդանի մայր եկեղեցին Տփխիսոյ, յարեւմտից կուսէ է պողոտայ կամ Ճանապարհ. 'ի հարաւոյ կուսէ են շինուածք տանց նահան- | |

զոհան Պրօկուրօրին Տփխիսայ Դէ յավիլեան-
նի ստատսկի Սօվէտնիկ Սանփաննոսի Պ ամ-
բարեաց և 'ի հիւսիսոյ կուսէ են հին քաղ-
քային շինուածք տանց և կրպակաց պատ-
կանեալք նոյնպէս Հոգևոր Դպրոցին Հայոց
Տփխիսայ. . . . . . . . . . . 50000

4 Հին շինուածք տանց և կրպակաց 'ի նմին
շարակարգի հանդերձ դատարկ լայնատարած
գետնով եղելով յարևելից կողմանէ, յորոյ
վերայ են տունք ոմանց մասնաւոր անձանց. ո-
րոյ սահմանքն են յարևելից կուսէ Ճանապարհ,
որ տանի 'ի Սանքի մայր Եկեղեցին, յարև-
մտից և 'ի հիւսիսոյ կուսէ Ճանապարհ հա-
սարակաց և շուկայ. և 'ի հարաւոյ կուսէ
շինուածք վերոյգրեալ 21 կրպակացն. . . 10000

5 Արևմտեան շինուածք հանդերձ լայնարձակ
դաւթիւ ընծայեալ 'ի հանգուցեալ Սմբա-
տայ Փիրալեանց յօգուտ Դպրոցին, յորոյ ներ-
քին յարկն դէպ 'ի փողոցն գոն 'ի հիւսիսոյ
կուսէ եօթն կրպակք իւրեանց սարդափովք
և բուխարիւք, և մի փոքր տախտակամած կըր-
պակ մրգավաճառի. ի նոյին դատակարգի, յա-
րևելից կուսէ գոն ևնն մայրաշէն և տախտա-
կամած մեծ և փոքր կրպակք յորոնաքին հա-
ցթուխք և մրգավաճառք 'ի հարաւոյ կուսէ
յետուստ կրպակացն 'ի դաւթին չորս մեծ և
փոքր սենեակք, և մի խոհարան. 'ի վերայ այ-
դոցիկ ամենից յերկրորդում վերին յարկին
դասանքն կացուցան կամ տուն բաղկացեալ յ8
մեծ և փոքր սենեկաց հանդերձ պաշտգամ-
բօք. սանդղովք և Ճանապարհաւ եկամտից.
Արդարև ամենայն շինուածք սոքին զբօսան-
ցայգական դրանս, լուսամուտ, վառարանս
և զայլ ամ պատկաննելիս, որոց սահմանք

| | | |
|---|---|---|
| | 'ի Հարաւոյ կուսէ են շինուածք և տունք Պ. աղայու Մելիքխանեանց, իսկ յարևելից յա-րևմտից և 'ի հիւսիսոյ կուսէ է շուկայ և Ճա-նապարհ հասարակաց. Այսցիկ կալուածոց պատկանի և ջրանցն ծածկեալ քարուկրեայ ընդ երկրեայ կամարաւ, զոր հանգուցեալ փի-րոյեանցն իւրովք ծախուք շինեալ է 'ի 1837 և 1838 ամս. . . . . . . . . . | 60000 |
| | յ2-դ տանն յ2-դ Թաղի Տփխիսոյ. | |
| 6 | Ընդ տեսչութեամբ վերատեսչի վանքական կալուածոց Պ. աղայու Մելիքխանեանց տուն մի միայարկ բաղկացեալ յերից սենեկաց և 'ի միոյ խոհարանէ հանդերձ փոքրիկ գաւթիւ ա-րնթեր եկեղեցական Կաթողիկոյ ընծայեալ 'ի հանգուցեալ Սաւփիանոսէ Գուլբիլիաշեանց ըստ կտակին որոյ Էջմիածնի վանից և ըստ կնոյն Հադեր Գալըրոյին, որոյ սահմանքն են յարևելից կուսէ տունն Մկրտումայ Խա-բանոսեանց, յարևմտից կուսէ է տունն ձկն-նավաճառ Թէվաթոյի. 'ի հիւսիսային կուսէ է Ճանապարհ հասարակաց, և 'ի հարաւոյ կու-սէ է գաւառի տեղի պատկանեալ յիշեալ ձկնավաճառ Թէվաթոյին. . . . . . . | 500 |
| | Կալուածք կտակեալ 'ի հանգուցեալ Յար-Թի-նէ Օհեանց յօգուտ Գալըրոյին Գաւառ 'ի վերոյ տանցն յ3-դ տանն 1 Թաղի Տփխիսոյ: | |
| | Ըղեանք ընդ հոգաբարձութեամբ Կարապետ քահա-նայի Տէր-Գրիգորեանց. | |
| 7 | 1, Մի տուն, այն է հայաթ մեծ, յո-րում են երկու կրպակք կենդայարկ տունք, մի ախոռ և այլ շինուածք հանդերձ դրամբ | |

և անցեալք ելից և մտից, որոյ սահմանքն են յարևելից և յարևմտից կուսէ մեծ Ճանապարհ հասարակաց. 'ի հարաւոյ կուսէ սրահ և շինուած Աղուս Կ.բուրիշովայ, և 'ի հիւսիսոյ կուսէ նոյնպէս սրահ և շէնուածք իւրմալըշեւոյ. . . . . . . . . 3000

8 2, Հանդէպ վերոյգրեալ սրահին կից նըմին գտանի մի քարուկրեայ կրպակ հանդերձ միով վերնայարկ սամբ շինեցելով 'ի վերայ դ.նր, որոյ սահմանքն են յարևելից կուսէ սրահ և շինութիւն Գերմանացի Խոխատեանի, յարևմտից կուսէ նեղագոյն անցք և 'ի հիւսիսոյ կուսէ շինուածք Յարութիւնի Խէչումեանց. . . . . . . . . 1000

9 3 'Ի յետուստ կողմանէ կրպակացն Սահփանի Թորգոմեանեայ ղան դատարկ կըրպակատեղիք տախտակօք պատեալ, որոց կէսն պատկանի դպրոցին Յակոբեայ Ներսէսեանց և Հոգևոր Դպրոցին: Սահմանք այնր գետնոյ են յարևելից և յարևմտից կուսէ յիշեալ շինուածք կրպակաց Թորգոմեանեայ, 'ի հարաւոյ մեծ Ճանապարհն հասարակաց. և 'ի հիւսիսոյ կուսէ աւտան Սրոցի Սիմոնի Դաւթեանց. . . . . . . . . 300

յՑ-ոց Տառին 4 Բաղէ Հ ֆեխոյ

10 Ընդ տեսչութեամբ կառավարչի նորին պատուամեծինի սպաջոնի գրաժդանին Մարգանայ Արշակունոյ այգի մի ընծայեալ 'ի Գուլբիֆաշեանց հանգուցեալ Սանփաննոսէ յայսկոյս Օրթաճալոյի 'ի վերայ եկեղեցական գետնոյ, որ պատկանի ըստ կիսոյն սըրոյ Էջմիածնի Սիոնից և ըստ կիսոյն Հոգևոր

Գաւառցւոյն, յորում գտանին յարեւելեան կողմըն երկու քարաշէն տունք, սահմանքն են յարեւելից կուսէ Սուր գետն Օրթաճալայի, յարեւմտից կուսէ մեծ ճանապարհ հասարակաց. 'ի հարաւոյ այգին Խուրք երկուց եղբարց, եւ 'ի հիւսիսոյ կուսէ այգին Նազարեթեանց, յարեւմտեան կողմն 'ի վեր կոյս ճանապարհին գտանի տեղի մի դատարկ պատկանեալ յիշեալ այգւոյն, որոյ սահմանքն են յարեւելից կուսէ մեծ ճանապարհն հասարակաց, յարեւմտից կուսէ ճանապարհն՝ որ երթայ 'ի Արծանիս, 'ի հարաւոյ կուսէ այգին Ստեփանի Զիլթախեանց, եւ 'ի հիւսիսոյ կուսէ տեղի դատարկ պատկանեալ Սրբոյ Սիօնի եկեղեցւոյն. . . . . . 2000

'Ի Արծանիսու Գեղարդավանից Ուխտատեղւոջ.

11 Մի կրպակ Մերկիտանի գնեալ Գաւառցապատկան դրամօք յեկեղեցական ստրուկ Ստեփաննոսէ Նուլամաղեանց յօգուտ Սուրբ-Նշանին տուեալ առ ընթեր գաւթի Ուխտատեղւոյն Արծանիսու: . . . . . 1003

12 Երկնայարկ քարուկրեայ շինուածք կառուցեալք առ Եկեղեցեաւն 'ի գաւթի նորին, որք բաղկանան 'ի ներքին միոյ սարդափէ եւ յեօթն սենեկաց, իսկ 'ի տանիս վերնայարկին գոյ շինեալ մի ընդարձակ սեղանատուն հանդերձ տախտակեայ երկար սեղանաւ հացկերութի եւ նստարանօք. . . . . . 10000

13 Մի պարտէզ ջրաւաջեալ գաւթի նոյն Ուխտատեղւոյ խոպանացեալ վասն անջրդի գոլոյն,

### ’Ի ԹԵՄԻՆ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ:

| | | |
|---|---|---|
| 14 | Մի փոքրիկ այգի ընծայեալ ’ի նորին Գերապատուութենէ ա. Սահականեանց Մամիրեանց, որ գտանի ’ի ներքին կողմն Թելեթ գեղջ կից այգւոյն Տէառն քահանայի Մեհրաբեանց: . . . . . . . . . | 200 |
| 15 | Նախարձակ կրկնայարկ շինուածք կառուցեալք շուրջ զսուրբ Գէորգ Եկեղեցեաւն Թելեթի և ’ի գաւթի նորին ’ի բնակութիւն երթևեկ ուխտաւորաց և ոմանց միաբանից նորին բաղկացեալք ’ի վերին և ’ի ներքին յիսուն և երկու մեծ և փոքր սենեկաց համդերձ պատշգամբօք . . . . . . . . . | 10000 |
| 16 | Մի կրպակ միրկիտանի կառուցեալ ’ի ներքնայարկի նոյն շինուածոյն, որ բերէ ’ի տարին շերիւք հարիւր մանէթ արծաթոյ: . . . | 2000 |

### ’Ի ՇԱՄԱԽԵԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ:

| | | |
|---|---|---|
| 17 | Միայարկ նորակառոյց սենեակք ’ի պէտս ուխտաւորաց երթևեկողաց անդէն: . . . | 3000 |

### Ի ՆԱՒԱԲԼՈՒԽ ՕՂՈՒՆԵՆՑԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ:

| | | |
|---|---|---|
| 18 | Միայարկ նորակառոյց սենեակք ’ի պէտս երթևեկ ուխտաւորաց: . . . . . . | 1000 |
| 19 | Մի մեծ այգի ’ի Սողանլուխ գեղջ ընծայեալ ’ի Սրբոյ Կնեազ Օթարայ Սմբլախվարեանց, որոյ սահմանքն են: . . . . | 6000 |

---

Ծանօթութիւն: Նշանակեալ վերոյգրեալ [illegible] ըստ [illegible] ’ի Հոգեւորական Առաջնորդարանին:

## Ցուցակ ուսումնաւարտ որբեգրոց Ներսիսեան Հոգևոր Դպրոցին հայոց Տփղիսոյ 'ի 1851 ց1861 ամ.

| համար | Անուանք և ազգանուանք նոցա և թէ յոր երկրէ են։ |
| --- | --- |
| 1 | Կարապետ քահանայ տէր Պօղոսեան տէր Ենանեանց Շամշադինեցի։ |
| 2 | Ալէքս քահանայ տէր Ենանեանց Շամշադինեցի։ |
| 8 | Սահակ Պապոլեանց Ղզլարեցի։ |
| 4 | Մարգար Շահինեանց Դիլմեցի։ |
| 5 | Գէորգ Մուրադեանց Շամշադինեցի |
| 6 | Մարտիրոս քահանայ տէր Մարտիրոսեանց Թելաւեցի։ |
| 7 | Դաւիթ քահանայ Նազարեանց Գօրուայ Ցխինվալեցի։ |
| 8 | Գրիգոր Խասաբաբեանց Նուխեցի։ |
| 9 | Յարութիւն Խամայեանց Նուխեցի։ |
| 10 | Գրիգոր տէր Յակոբեանց Ղազախեցի։ |
| 11 | Միքայէլ տէր Բարսեղեանց Գօրեցի։ |
| 12 | Սարգիս քահանայ տէր Ստեփանեանց Աղնախեցի։ |
| 13 | Ստեփաննոս քահանայ Խաչակեանց հին Նախիջեւանցի։ |
| 14 | Գէորգ Եղայեանց Ղզլարու Մաճառեցի։ |
| 15 | Յովհաննէս Պաւշեանց Աշտարակեցի։ |
| 16 | Մկրտիչ Նաւասարդեանց Վաղարշապատեցի։ |
| 17 | Յարութիւն տէր Գրիգորեանց Ախալքալակեցի։ |
| 18 | Գրիգոր տէր Յարութիւնեանց Ղազախեցի։ |
| 19 | Ստեփաննոս քահանայ Բարտաշեանց Ղազախեցի։ |
| 20 | Սիմէօն Զմշկեանց Ալէքսանդրապօլցի։ |
| 21 | Մարտիրոս Սիմէօնեանց Ղազախեցի։ |
| 22 | Երեմիա Խաչակեանց հին Նախիջեւանցի։ |

23 Յակոբ քահանայ տէր Մահակեանց Շամշադինեցի.
24 Սողոմոն քահանայ տէր Յարութեանց Թէլունեցի.
25 Յակոբ տէր Մարդանեանց Լօռեցի.
26 Առաքել քահանայ Աղամեանց Շամշադինեցի.
27 Պաղար Արշակունեանց Գորոյ Սփլիւզինեցի.
28 Աղէքսանդր Մէլիքեանց Սուաքացի.
29 Մովսէս Բաղխուդարեանց Շամախեցի.
30 Խաչատուր քահանայ տէր Գրիգորեանց Ղօձկանեցի.
31 Դաւիթ քահանայ Դաւթեանց Արմաւիրեցի.
32 Պօղոս քահանայ Խաչիկեանց Շուլաւերցի.
33 Չէրքէզահայ Մարգան քահանայ Գասպարեանց Արմաւիրեցի.
34 Չէրքէզահայ Պետրոս Մաֆարեանց Արմաւիրեցի.
35 Յարութիւն տէր Աստուածատուրեանց Նուխեցի.
36 Դանիէլ տէր Ներսէսեանց Նուխեցի.
37 Մինաս Միրզանեանց Մոզդոկեցի.
38 Աղէքսանդր Մանուչարեանց Շամշադինեցի.
39 Գրիգոր Կիրակոսեանց (այժմ Կաչուրեանց) Լօռ-ւոյ Ախպահատցի.
40 Գէորգ տէր Աւետիքեանց Սղնախեցի.
41 Պօղոս Բէնկլեանց Ախալցխեցի.
42 Ստեփաննոս քահանայ տէր Պաղալեանց Ախալ-ցխեցի.
43 Յովսէփ տէր Խարայէլեանց Ալէքսանդրապօլցի.
44 Մովսէս Խաչիկեանց Պաղալեցի.
45 Գրիգոր տէր Գասպարեանց Նուխեցի.
46 Գասպար Ներսէսեանց Շամախեցի.
47 Յովհաննէս քահանայ տէր Աստուածատուրեանց Ա-խալքալակեցի.
48 Գրիգոր Աղամեանց Նուխեցի.
49 Համբարձում Օրդուխանեանց Մարդաշէնցի.
50 Խաչատուր Մելիքեանց Մարդաշէնցի.
51 Գրիգոր Խումարեանց Սուաքացի
52 Ղուկաս քահանայ տէր Մարտիրոսեանց Շամշադինեցի.

53 Խաչատուր քահանայ տէր Յակոբեան Շամշադինեցի.
54 Խաչատուր Յարութիւնեան Չէրքէզլահայ։
55 Բաղդասար Հալաջեան Երևանցի։
56 Աղէքսանդր տէր Յակոբեան Անքալեցի.
57 Գասպար Մարգարեան Նուխեցի.
58 Երեմիա Աբովեան Ուզունլարեցի,
59 Գէորգ Բաղդասարեան Թէլաւեցի.
60 Յովհաննէս Ամիրիկեան Թիֆլիզաբնակ.
61 Յարութիւն Ավեան Թիֆլիզեցի.
62 Գէորգ քահանայ տէր Սարգսեան Թէլաւեցի.
63 Ասլան Աւագեան Գուրջիանցի.
64 Չէրքէզլահայ Սարգիս Յովհաննիսեան Արմաւիրեցի.
65 Խաչատուր Սարգսեան.
66 Սարգիս Բաբայեան Անկիւրեցի.
67 Նիկողայոս Պօղոսեան Ուռայեցի.
68 Պետրոս Վարշամեան Անքարեցի։
69 Ստեփաննոս Ստեփաննեան Թէլաւեցի.
70 Գաբրիէլ տէր Յակոբեան տէր Յովհաննիսեան Ուզունթալացի.
71 Չէրքէզլահայ Անտօն Գավլանեան Արմաւիրեցի.
72 Յովհաննէս Բուռնազեան Թիֆլիզեցի.
73 Յարութիւն քահանայ տէր Գաբրիէլեան Թիֆլիզաբնակ.
74 Յովսէփ Սպարապետեան Թիֆլիզեցի.
75 Սարգիս քահանայ Բադալեան Շամշադինեցի.
76 Աբգար Ալիմծօնեան Ղազախեցի.
77 Չէրքէզլահայ Յովհաննէս Կուտիկեան Արմաւիրեցի.
78 Գէորգ Ադիբէգեան Հնդկաստանցի.
79 Յովսէփ Աբովեան Ղազախեցի.
80 Գրիգոր տէր Գրիգորեան Ղզլարեցի.
81 Խաչատուր տէր Մարտիրոսեան Աստրախանցի.
82 Ստեփաննոս տէր Յովհաննիսեան Ղազախեցի.
83 Արտաշէս Սուքիասեան Թէլաւեցի.

84 Խաչատուր տէր Յովհաննիսեանց Նոր—Բայա-
զիդցի.
85 Զերբէզդոհայ Թորոս Խաչերեսեանց Արմաւիրեցի.
86 Գրիգոր Թամամշեանց Թիֆլիզեցի.

---

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

1. Վերոյիշեալ որդեգիրք կամ ծառանգաւորք որպէս երեւի ՚ի աշակերտութեանց դպրանոցին Գործոյ Հոգաբարձական կառավարութեան Սուրբ Կարապետի անուամբ և ուսեալ ՚ի հաշիւ նորին՝ զկնի աւարտելոյ ՚ի նմին զընթացս ուսմանց յետ կարգաւորեալ հարցափորձութեանց ըստ եկեղեցական Հոգաբարձութեան արձակեալ են իրաւանցն ըստ արժանաւորութեանց իւրեանց կանոնաւորեալ վկայագրօք. զորոց յիրաւանցն նուագի առաջարկութեամբ անուանական ցուցակի Հոգաբարձութեան ՚ի վերայ հիման ուսմանադրութեան գերերջանիկ Ճարտարարին նոյա Ներսէսի Հայրապետի կրով յայտնեալ է Սինոդական Կառավարութեան և Թեմական Առաջնորդի ՚ի ստորեւութիւն նոցին. և առայժմ ՚ի նոյանէ Ճաղուած գաւառին ՚ի հոգեւոր կոչման՝ յեկեղեցական սպասաւորութեան, իսկ Ծնողեալն պարագին ուսուցչական պաշտամամբք ՚ի քաղաքին և յայլ տեղիս ՚ի Հոմալրականս վասն կատարելագործելոյ զիւրեանս յուսմանց գիտութեանց, ՚ի կոչեցելոյն ծառայութեան և ՚ի ուսուցչութեան.

2. Որդեգիրք գտեալք այժմ ՚ի շարունս Ճեմարանի դասատուն ուսին եղանել յառաջիկայ 1862 ամի յետ աւարտելոյ զուսումն.

## ՍԽԱԼԱՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

| Երես. | Տող. | սխալ. | ուղիղ. |
|---|---|---|---|
| 15. | 18. | Նշակելոյ | Նշանակելոյ |
| 16. | 17. | [illegible] | [illegible] |
| 19. | 1. | սկիզբն առելով | սկիզբն առելաւով |
| 20. | 3. | մատենարանս | մատենարան |
| . . | . . . | ուսմնելի | ուսանելի |
| 22. | 4. | յերրորդում 18: | յերրորդում 10: |
| . . | 23. | Նփինտեանց | Նփենդեանց |

